ՍԱՂԱԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՊԱՏԿԱՌՔԵՐ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

891.99 | 22352
П-50 | Петрушевський, В.
Пишемо й читаємо:
Зп.

ՄԱԴԱԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

891.99-93
Պ-50

ԵՐԵՎԱՆ Ե 1961 Թ.

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Հ 23240
22.352

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿԵՄ ԿԵՆՏԿՈՄԻՆ ԿԻՑ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1949

Շապիկը եվ նկարները՝
Գ. ԽԱՂԱՂՈՐԴՅԱՆԻ

М. ПЕТРОСЯН
РАССКАЗЫ
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1949

ՄԱԴԱԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

(1866—1942)

Ձեռնամուխ լինելով հայ պրոլետարական արձակագիրներից մեկի՝ Մադաթ Պետրոսյանի մանկական պատմվածքների ժողովածուի հրատարակության, նպատակ ենք ունեցել մեր ժամանակի պատանի ընթերցողներին ծանոթացնել գրողի նախահեղափոխական և սովետական շրջանների որոշ գործերի հետ։

Ժողովածուում զետեղել ենք հեղինակի ստեղծագործության համար բնորոշ այնպիսի գործեր, որոնք գաղափարական նպատակադրության և գրական մշակման տեսակետից նրա մանկական գործերի հատընտիրը կարող են համարվել։

Մ. Պետրոսյանը ծնվել է Նոյեմբերյանի շրջանի Կոթի գյուղում 1866 թվին։ 1880 թ. ընդունվելով Թիֆլիսի արհեստավորական դպրոցը, ավարտել է այն 1886 թվին։ Դպրոցն ավարտելու հետո Պետրոսյանն աշխատել է որպես մեքենավար։

1903 թվին տպագրվեց Պետրոսյանի առաջին պատմվածքը «Մի կտոր հացի համար»։ Բանաստեղծ Հ. Հակոբյանը կարդալով այդ գործը, բացագանչել է. «Փառք պրոլետարիատին, հայ պրոլետարական արձակագիր էլ ունեցանք»։

Այնուհետև միմյանց ետևից հրատարակվում են «Լուսին», «Պահակը», «Բանվորը», «Մեքենավարի հիշատակարանից», «Գործաղուրկը», «Բեռնակիրը», «Երկու ընկեր» և այլ գործերը, որոնց մեջ հեղինակը պատկերում է սոցիալ-տնտեսական անհավասար պայմաններում տառապող մարդկանց, առանձնապես մանուկների անուրախ և տանջալից կյանքը («Շուշան» և այլ գործեր)։

Սովետական շրջանում Մ. Պետրոսյանին առանձնապես զբաղեցրել է մանկական գրականության բնագավառը։ Գնահատելի է հեղինակի երեխաներին մասնագիտական կրթություն տալու

հակումն ու ջանքերը։ Այդ նպատակով են գրված «Թռչուկ մեքենավարը» (1923 թ.) և «Ֆաբգործուսի աղջիկը» (1926 թ.) ուշադրավ մանկական պատմվածքները։ «Ֆաբգործուսի աղջիկը» պատմվածքի մեջ հեղինակը պատկերում է անցյալի կարիքներից և հոգսերից դեռևս լրիվ չազատագրված, Անդրկովկասում սովետական կարգերի հաստատման առաջին օրերում ստվորող մանկան նյութական վիճակը, որի լավացման համար հոգատարություն է ցուցաբերում ինքը՝ նոր ստեղծված սովետական արհեստագործական դպրոցը։

«Մանկություն» գրքից (տպագրված 1935 թ.) ընտրված հատվածները ցույց են տալիս հեղինակի անցած կյանքի ուղին։ Պատանի հերոսի՝ Մաղնի հոգեբանության որոշ կողմերն ու բնավորության՝ հաստատակամության, ինքնավստահության, ազնվության և այլն գծերը ներկայացված են անկեղծ և խոր հուզականությամբ։

Ընդհանրապես պարզ և մատչելի լեզու ունենալով և մոտիկից ճանաչելով մանկական աշխարհը, Մ. Պետրոսյանը մանուկների կյանքից տվել է մի շարք լավագույն էջեր, որոնք այսօր ևս կարդացվում են հետաքրքրությամբ։ Այդ պատմվածքներից զգալի մասը տեղ են գտել հայկական և վրացական դպրոցական դասագրքերում։ Միաժամանակ պետք է նշել, որ հեղինակի գործերի բավական ստվար մասը թարգմանված է ռուսերեն, վրացերեն և այլ լեզուներով։

Մինչև սովետական կարգեր հաստատվելուց առաջ Մ. Պետրոսյանի գրական ստեղծագործությունն ու հասարակական գործունեությունը արժանի գնահատություն չէր ստացել, սովետական կարգերում նա որպես գրող արժանացավ «Աշխատանքի Հերոսի» բարձր կոչման։

Հրատարակության պատրաստելով գրողի գործերի մի աննշան մասը, հույս ունենք, որ ներկա ժողովածուն կդառնա մեր սովետական մանուկներին սիրելի մի դիրք և նրանց գաղափարական և գեղարվեստական դաստիարակության համար, թեև շատ համեստ, բայց օգտակար գործ։

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՒԹԱԿԸ

(Պատմվածք անապատան երեխաների
կյանքից, գրված 1916 թվին)

Հերմին ջութակ էր նվագում, իսկ նրա փոքր քույրը՝ Լիան երգում էր։ Երգում էր ու աղերսանքով լի աչքերը հառում պատշգամբին, իր նման փոքրիկ երեխաներին, որոնցից սև կոպեկներ էր հայցում։

Նա դիտեր, ճանաչում էր նրանցից շատերին. ոմանք երկու, ոմանք մի կոպեկ էին տալիս, երբեմն էլ հինգ կոպեկանոց էին գցում ցած։

Այսօր մի քանի ուրիշ տղաներ էլ էին հավաքվել այդ մեծ պատշգամբում և ինչ որ նշաններով ցույց էին տալիս իրար։

Երբ նվագն ու երգը վերջացավ, նրանք թղթի մեջ փաթաթած՝ ինչ որ մի իր գցեցին ցած։

Լիան ուրախ թռչկոտելով վազեց առաջ, սառած մատներով բացեց փաթեթը. թղթի մեջ խնամքով փաթաթած էր սև քարի մի կտոր։

Աղջիկն իր թախծալի հայացքը գցեց վեր։ Նրանք ծաղրանքով նայում էին ու անզուսպ քրքջում։

Նորից աչքերը խոնարհեց, նայեց քարին, սեղմեց ափերի մեջ ու արցունքը հազիվ զսպելով՝ ամոթից պահեց ծոցի գրպանում։

Երեխաները պատշգամբում ուրախ, կայտառ թռչկոտում, խաղում էին։ Նրանք արդեն մոռացել էին, թե որպիսի ծանր վիշտ էին հասցրել փողոց շպրտված այդ քնքուշ արարածներին։

Նվրայրը՝ որ լուռ տանջվում էր քրոջ հետ, սիրտը ալեկոծ, նորից խփեց լարերին։ Ջութակի դայլայլիկներն այնքան թախծալի, այնքան վշտալի տարածվում էին շուրջը. կարծես խոսում էր նրա հոգին, բողոքում էր, բողոքում էր հուզված ու հուսահատ։ Դողում էին լարերը, դողում էր և նրա ձեռքի ջութակը։ Նվագի հետ լուռ հեկեկում էր քույրը՝ աչքերը հառած հեռուն, անմխիթար ու վշտահար...

Շուրջը հավաքված երեխաները նայում էին տխուր, առանց ըմբռնելու, առանց զգալու նրանց ներքին հուզմունքի պատճառները։

Անցան մյուս բակը, երկրորդը, երրորդը...

Սառնամանիքը, ցուրտը, մտնում էր նրանց ոսկորների մեջ, բայց նրանք նվագում էին ու երգում՝ հաղիվ կանգնելով ոտքերի վրա...

Մութը վրա հասավ ու նրանց մղեց քաղաքի խուլ ու ետ ընկած փողոցի մի խարխուլ տնակ։

Դուռը բացվեց, նրանց դիմավորեց տան միակ շնչավոր արարածը՝ մի պառավ կին։ Նա իր մարած հայացքը գցեց երեխաներին, ոսկրացած ձեռքով հանեց աղջկա վզի պարկը։

Լուռ է խրճիթը, լուռ են և երեխաները։ Միայն պատից կախված ջութակն է կարծես դեռ լալիս, դեռ հեծկլտում այդ մռայլ ու կիսախավար սենյակում...

Աղջիկը հանում է գրպանի սև կոպեկները, տալիս է պառավին, ապա երկար տատանումներից հետո ծոցից հանում է քարը և դնում սեղանին։

Պառավը զայրացած հաշվում է կոպեկները, ապա առնում է քարը, նայում է երեխաներին։

— Սա է՞ ձեր այսօրվա աշխատանքը,— շարժվում է նրա ոսկրացած ծնոտը և անեծք թափում երեխաների գլխին։

Քույր ու եղբայր իրար սեղմված՝ կուչ են գալիս սենյակի մի անկյունում։

— Բերածներդ ի՞նչ է, մի քանի սև կոպեկ և մի քարի կտոր։ Առանց «անձնագրի» մինչև ե՞րբ թաքցնեմ ձեզ։ Վերջապես, ես ի՞նչ պարտական եմ ձեզ։ Ուր ուզում եք գնացեք, էլ իմ տունը չկաք, ինձ էլ խաթի մեջ կգցեք, ձեզ էլ...

Երեխաների համար դա մի ծանր հարված էր։ Ո՞ւր պետք է գնային, ո՞ւր պետք է օթևաններին այս ձյուն-ձմռանը...

— Օհ, անիծվի այս կյանքը,— փնթփնթաց պառավը ու սև հացի կտորներ ածեց երեխաների առաջ։

Պատառը հազիվ էր կուլ գնում, հեծկլտանքը խեղդում էր երեխաներին...

Պառկեցին։ Պառավը վերմակը քաշեց գլխին, մի քանի անորոշ բառեր փնթփնթաց երեխաների հասցեին և իսկույն քնեց։

Քույրը նույնպես աչքերը փակեց, փարվեց եղբոր վզով, նրա մեջ գտնելով միակ մխիթարությունը ու հանգիստ քնեց։ Միայն տղայի քունը չէր տանում... Հիշեց նա իր մանկությունը, իրենց բնակարանը, իր մորը, հորը. հիշեց, թե ինչպես իրեն հինգ տարի սրանից առաջ, դեռ յոթը տարեկան, տարան ուսումնարան, դրա հետ միասին գնեցին իր այս պատից կախած ջութակը։ Ինչպե՞ս էին նրանք հրճվում իրենով. ասում էին. «տաղանդ է մեր տղան»։ Ինքն ուսուցիչն էլ էր վկայում, որ աշակերտը շնորհալի երաժիշտ կդառնա։ Հիշեց և այն դառն օրերը, երբ լուր եկավ, թե հայրը պատերազմում սպանվել է, մայրը վշտից ու տանջանքից մեռավ, բոլոր բարեկամները երես դարձրին, ու իրենք, ընկան փողոց...

Սրազի պես հիշեց այդ բոլորը ու անցած հուշերի մեջ խորասուզված, դուրս սողաց քրոջ բազուկներից, առավ ջութակը, սեղմեց կրծքին, իբրև մի վեհ սրբություն ու խփեց լարերին։

Խրճիթը լցվեց մեղմ դայլայլիկներով. երբեք այնքան սքանչելի, այնքան նուրբ չէր նվագել նա. հոգու վիշտը, մանկական դառը կսկիծները ի մի ձուլված՝ բողոքում էին. նա բուռն թափով խփում էր լարերին. իր ամբողջ ապրումները, հույզերն ու զգացմունքները հնչում էին անդուլապ ու մոլեգին։

Պառավը վեր էր կացել ու տեղի մեջ արձանացած՝ լսում էր առանց ձայն, ծպտուն հանելու...

Քույրը լուռ հեկեկում էր...

Տղան կանգ առավ, նայեց քրոջը, նայեց արձանացած պառավին... դառն իրականությունը ծառացավ նրա՝ առաջ, հուսահատ ու լքված մոտեցավ նեղլիկ լուսանցքին, բաց արավ փեղկերը, հայացքը գցեց հեռուն։ Մոայլ էր լուսաբացը, քամին կատաղի մռնչում էր, ձյունը քշում մայթերից... Նա սթափվեց... հիշեց

պառավի սպառնալիքը, ոստիկանատունը, փողոցի տղաներին, ցուրտը, սառնամանիքը և դողալ ամբողջ մարմնով։ Նա լուսանցքը փակեց, ջութակն առավ թևի տակ, բռնեց քրոջ ձեռքը...

«Շնորհակալ ենք», հազիվ շշնջացին նրանք ու դուրս եկան փողոց...

Երեխաները գնալուց հետո պառավը մնաց սառած կանգնած, ծանր թախիծը պաշարեց նրա հոգին. երեխաների այնքան հարազատությունը, մանավանդ վերջին հրաժեշտը ցնցել էր նրան։

— Որքան անպիտանն եմ ես,—շշնջաց ինքն իրեն պառավը, ապա ցուպն առավ, պարկը գցեց վիզը ու դնաց մուրալու և միևնույն ժամանակ երեխաներին որոնելու։

Ամբողջ օրը նա թափառեց, բայց երեխաներին չկարողացավ գտնել. վերադարձավ տուն, ճրագը վառեց ու անհամբեր սպասում էր նրանց։

— Երկիր Լիա, երգիր,— դիմում էր տղան քրոջը։ Լիան ցրտից փայտացած, ատամ-ատամի էր տալիս. հազիվ լսելի դուրս էին գալիս նրա շրթունքներից հնչյունները՝ անկապ ու անորոշ։

— Այսպիսի ցրտին ո՞վ դուրս կգա պատշգամբ,— ասում էր տղան հուսահատ ու նորից թափառում փողոցից փողոց, տնից տուն։

Վրա հասավ զարհուրելի գիշերը ու փակեց նրանց առաջ բոլոր դռները։ Նույնիսկ փողոցի շները պատսպարվել էին իրենց բներում, ազատվել բուք ու բորանից։

Երեխաները հույսերը կտրած, մոտեցան պառավի տանը, ուզում էին բախել, բայց չհամարձակվեցին... Կուչ եկան մի պատի տակ. աղջիկը ամբողջ մարմնով դողում էր, եղբայրն աշխատում էր տաքացնել նրան, սեղմում էր կրծքին։

— Լիա, մրսում ե՞ս։

— Ոչ, հիմա լավ եմ. գլուխս էլ չի ցավում... միայն շունչ քաշել չեմ կարողանում. սիրտս ծակում է...

— Ոչինչ, դիմացիր Լիա, մինչև լուսանա. ես կխնդրեմ, կաղաչեմ պառավին... Նա բարի է... Նա մեզ նորից կընդունի...

— Հերմի, դու էլ ես մրսո՞ւմ.

— Ոչ, ես չեմ մրսում,— ասաց տղան ու ավելի սեղմեց քրոջն իր կրծքին...

Պառավն անհանգիստ անց ու դարձ էր անում սենյակում և

շուտ-շուտ նայում դռնից։ Հանկարծ նրա ականջին հասավ մանկական հեկեկանք։

— Լիա՜. Լիա՜... ուշքի ե՛կ... Լիա՛,— աղիողորմ հեկեկում էր տղան.— Լիա, ինչ պատահեց, խոսիր։ Լիա՜... Լիա՜...

Պառավը դուրս վազեց լեղապատառ.

— Հերմի... Իմ խեղճ երեխաներ, ինչո՞ւ... ինչո՞ւ չեկաք տուն... Ես սպասում էի... սպասում էի ձեզ անհամբեր...

Գրկեց նա աղջկա փայտացած մարմինը ու տարավ տուն։ Իսկույն վառեց թիթեղյա վառարանը և թեյամանը դրեց կրակին։

Տղան մերթ նայում էր դալկացած քրոջը, մերթ պառավին.

— Լիա, ուշքի եկ. տե՛ս, մենք տատիկի մոտ ենք... Լիա...

— Մրսել է խեղճը, խիստ է մրսել, լեղուն կապ է ընկել,— խոսում էր ինքն իրեն պառավը, աղջկա ձեռքերին ու ոտներին քացախ էր քսում, շփում էր մարմինը, ամեն կերպ աշխատում էր ուշքի բերել...

Տղան մեկ նայեց պառավին. մեկ էլ աղջկան, առավ ջուրակն ու խփեց լարերին, խոր կսկիծը զսպած իր սրտում։

— Լիա, տես նվագում եմ...— ասում էր տղան արցունքներն աչքերին,— երդիր, երգիր, քույրիկ ջան... տատը մեզ այլևս դուրս չի անի իր տնից։ Լիա, աչքերդ բաց արա։

Իսկ պառավը շփում էր աղջկա մարմինը և աշխատում էր նրա փոքրիկ մարմինը տաքացնել։

Շատ չանցած՝ աղջիկը բաց արեց իր սառած աչքերը, նայեց պառավին, նայեց եղբորը և սկսեց ուշքի գալ։

ՓՈՔՐԻԿ ՄԵՔԵՆԱՎԱՐԸ

Ձորի մեջ, գետի ափին կառուցված էր մի հարկանի տնակ, որի պատերը կիր ու քարից էին, դռներն ամրակուռ։

Տնակի տանիքը թիթեղապատ էր, ուներ բարձր ծխնելույզ, որից քուլա-քուլա բարձրանում էր շոգեկաթսաների ծուխն ու գոլորշին։

Արտաքուստ մռայլ էր այդ մենավոր տնակը, բայց ներսը եռում էր կյանքը։

Դառնում էր ջրհան մեքենայի փոքրիկ թափանիվը և ջուր տալիս սարի լանջին գտնվող երկաթուղու կայարանին։

Կրակ էր շիկացած շոգեկաթսաների կրծքում, կարմիր ալավն իր բոցոտ կայծերով հասնում էր մինչև ծխնելույզը։

Ջրմուղի թշշոցը, մեքենայի միալար զարկերը, գլանների և խցանների հնչյունները մի ձուլված՝ տալիս էին համաչափ ներդաշնակություն։

Վարպետ Բաթոն իր 12 տարեկան Արրոյի հետ զբույց էր անում, պատմում մեքենայի մասին, մանրամասն բացատրում էր ու ցույց տալիս կարևոր մասերը. նա այնքան էր ընտելացել երեխային, որ առանց նրան մի քայլ անգամ չէր անում։ Երեխան դյուղից եկել էր հորը տեսնելու, բայց հայրը չէր թողել նրան վերադառնալ։

— Առանց քեզ տխուր է, կմնաս ինձ մոտ, ամեն ինչ կսովորեցնեմ քեզ և դու կդառնաս մեքենավար։

Երեխան էլ այդ էր ուզում. նա շատ էր սիրում մեքենաները և շարունակ հարցեր էր տեղում հոր գլխին։

— Էս շոգեշափի կարմիր գիծը նրա համար է, որ ալաքը նրա-

նից դենը չանցնի, ապա թե ոչ՝ կաթսան կարող է պայթել և մեզ սարդ ու փշուր անել, իսկ ամբողջ տունը քարուքանդ կլինի,— բացատրում էր հայրը.— նույն դերն է կատարում և զսպանակը։ Երբ շոգին կաթսայի մեջ շատանում է, զսպանակն այլևս չի կարողանում պահել. խցանը բացվում է և ավելորդ շոգին դուրս գալիս, թշշում-վշշում, աղմուկ հանում, ասում է՝ «հանգցրու կրակը»։

Արբոն աչքերը լայն բաց արած կլանում, յուրացնում էր հոր բացատրությունները։ Բայց հայրը միայն դրանով չէր բավականանում. ներշնչում էր երեխային, որ նա մեծ մարդ պետք է դառնա, որ նա ավելի հզոր մեքենաներ պետք է կառավարի, ուսում, գիտություն ձեռք բերի, ապա ավելացնում էր.

— Կյանքում միշտ եղիր աշխատասեր և երբեք չես կորչի։ Մի ասի, թե այս կամ այն աշխատանքը դժվար է։ Ոչ մի աշխատանք չկա, որ մարդու ուժից վեր լինի։ Հարկավոր է միայն կամք ունենալ, երկաթի պես ամուր կամք։ Մի երկու օրից կաթսան պետք է լվանանք, միասին կմտնենք մեջը բոլոր պատերը կքերենք, կմաքրենք, ապա ջրով կլվանանք. դեռ շատ աշխատանք կա կատարելու։

Երեխան զոհ էր և հոր բոլոր պատվերները կատարում էր մեծ հաճույքով ու խնամքով։

Մինչ հայրն ու տղան իրար հետ խոսում էին, լսվեց մի ուժեղ պայթյուն և խլացուցիչ թշշոց. գոլորշին լցվեց տնակն ու ամեն ինչ ծածկեց իր մեջ։

— Դուրս վազիր,— գոռաց հայրը։

Երեխան փոխանակ դուրս գալու՝ խարխափելով մոտեցավ կաթսաներին և իսկույն կրակը հանգցրեց։

Հայրն այդ միջոցին ջրաչափի ծորակները փակեց։ Մի ակընթարթում աղմուկը լռեց, գոլորշին ցրվեց։ Հայրը զարմացած նայեց տղային։

— Ես զգացի, որ մի վատ բան է պատահել ու վազեցի իսկույն կրակը մարեցի,— ասաց տղան։

— Ապրե՛ս այդպես քաջ եղիր։ Թեև սա այնքան էլ վտանգավոր բան չէր. երբ ջրաչափի ասպակին կոտրվում է, կրակը չեն հանգցնում, այլ նրա երկու ծորակները փակում, տեղը նոր ապակի են ամրացնում։

— Տեսա, հայրիկ, բոլորը գիտեմ։

— Չէ, բալիկս, դու դեռ բոլորը չգիտես. ինչքան շատ իմանաս, այնքան լավ կլինի։ Հավատացած եղիր, որ դեռ ամեն ինչ չգիտես։

Երեխան զարմացած նայում էր հորը։

— Միշտ սովորիր, ամբողջ կյանքում սովորիր. սա մի փոքրիկ մեքենա է, մի երկու կաթսա։ Այստեղ ոչինչ չկա. քեզ քաղաք կտանեմ, կմտնես երկաթուղու մեծ դարձարանը և դու այնտեղ կտեսնես, կզգաս, թե դեռ ինչքա՜ն բան կա սովորելու։

Հետևյալ օրը կիրակի էր. այդ օրը մեքենան չպիտի աշխատեր, ջրամբարները լցրել էին։ Հայրը վաղ առավոտից գնաց քաղաք իրենց հատանելիք մթերքն ստանալու։

Արբոն մեքենաները մաքրում, փայլեցնում էր։ Մենակ էր իր փոքրիկ շնիկի հետ։

— Ի՞նչ ես պոչդ շարժում, Հուրի՛, քաղցա՞ծ ես, սպասիր պրծնեմ, երևի հայրիկս էլ կգա, մեզ համար շատ բան կբերի։ Հա՜, Հուրի։ Դեռ չէր լուսացել, որ նա գնաց. տես, օրը ճաշ է դառնում։ Ի՞նչ ես հաջում. մի վազի, տես ո՞վ է գալիս։

Երեխան սխալված չէր, եկողը կայարանի ծառան էր։

— Շուտ արեք, մեքենան գործի դցեցեք, զինվորական գնացքները կանգնած են, ջուր է հարկավոր. ո՞ւր է հայրիկդ։

— Այստեղ չի, գնաց մթերքներ ստանալու։

— Ուրեմն կայարանը մնալու է առանց ջրի։ Լավ, շատ լավ. ես անմիջապես կառավարչին կհայտնեմ... թողնել ջրմուղն անտեր-անտիրական ու հեռանալ...

... Տես ոնց կհեռացնեն նրան։

— Սպասիր, չէ՞ որ ջրամբարները լիքն էին. երեկ մինչև ուշ գիշեր աշխատում էինք. ջուրը պետք է որ բավականանար. էսօր հո կիրակի է։

— Հիմար տղա, երկաթուղում լի ու կիրակի չկա. այ, կտեսնես, թե հորդ գլխին ինչ ազատ կաղան։ Առանց այն էլ գնացքներն ուշացել են. տեսնենք հայրդ ի՞նչ պատասխան կտա։

Ծառան շտապ հեռացավ։

Արբոն մտածմունքների մեջ ընկավ։ Նա երևակայում է կայարանը, գնացքները, շարված փրար եռեփից, իսկ ջրամբարում մի կաթիլ ջուր չկա... Հորն անպատված հեռացնում են աշխատանքից։

— Հուրի, մի վազիր տես, հայրիկս հո չի գալիս։

Շունը պոչը շարժեց ու տխուր վնգստաց։

Արբոն տատանման մեջ էր։

Չէ՞ որ ինքն ամեն ինչ գիտե, մեքենան կարող է բանեցնել և դրանով հորը փրկել։

Նա երկար չվարանեց. հագավ հոր կապույտ բաճկոնը, թևերը քշտեց, գոտին կապեց, փեշերը վեր քաշեց, ինչպես հայրն էր անում։

Նախ պետք էր կաթսան վառել։ Երկու ձեռքով կախվեց ծխնելույզի դռնակի շղթայից, քաշեց մինչև սահմանված տեղը, ապա բացեց գոլորշու ծորակները, զննեց նավթի խողովակները՝ ֆարսոնկան, հետո կանեփը թաթախեց սև նավթի մեջ, գցեց կաթսայի տակը, լուցկին կպցրեց ու առանց դժվարության ֆարսոնկաները վառեց։ Կաթսայի շուրն էլ տեղն էր։ Մնում էր՝ մեքենան կարգի բերել, խողովակները լցնել ջրով, բանալ մեծ ծորակը։

Այս բոլորն ինչքան հեշտ էր, երբ հայրն էր կատարում, իսկ այժմ, երբ ինքը մենակ է, սոսկում է ամեն մի պտուտակը շարժելիս, բայց մի ներքին ինքնավստահություն կար. չէ՞ որ, ոչ մի աշխատանք դժվար չէ, եթե այն ըմբռնում ես...

Մնում էր մեքենան յուղել։ Տղան բարձրացավ մեքենայի վրա և խնամքով ու առատորեն սկսեց յուղել։ Այժմ մնում էր լծակը քաշել և մեքենան կշարժվի։ Նայեց հաստ երկաթի լծակին։

— Հուրի, ի՞նչ ես ասում։

«Մի վախի, քաշի՛ր»,— կարծես ասում է շունը, սիրտ տալով նրան։

Արբոն երկու ձեռքով ամուր բռնեց լծակից և ուժգին թափով դեպի իրեն քաշեց։ Մի խուլ թշշոց, թեթև բաբախում, և մեքենան սկսեց աշխատել, թափանիվն սկսեց պտույտ գալ, խցանն առաջ ու հետ շարժվեց՝ համաչափ զարկերով։

Տի՛կ-տա՛կ, տի՛կ-տա՛կ։

— Ջա՛ն-ջա՛ն, ջա՛ն-ջա՛ն,— գոչեց Արբոն, ամբողջ կրծքով սազատ շունչ քաշեց և վազեց շոգեկաթսաների մոտ։

— Չէ՞ որ հայրիկս մեքենան բանի գցելուց հետո անմիջապես կրակն ուժեղացնում էր։ Նա դիտեց սլաքները, շոգեչափը,

ջրաչափը. ամեն ինչ կանոնավոր էր. միայն մի հանգամանք Նրան վհատեցնում էր. տակառում սև նավթի պաշարը քիչ էր, անհրաժեշտ էր դույլերով լցնել, իսկ դա իր ուժերից վեր էր։

— Պետք է հնարագետ լինել,— կրկնեց նա հոր խոսքերը։

Սեղանը քաշեց մոտեցրեց տակառին, վրան դրեց մի փոքրիկ աթոռակ, դույլը լցրեց դրեց սեղանին, ապա բարձրացավ աթոռակին ու դատարկեց տակառի մեջ։

Այդպիսով հաջողվեց ունենալ և նավթի պաշար...

Ուրախ էր, անչափ ուրախ և տարված մեքենաների աշխատանքով՝ իր մեջ հսկայական ուժ էր զգում, մոռացել էր նույնիսկ հոր բացակայությունը։

Շնիկն սկսեց կատաղի հաչել. երեխան դուրս նայեց։ Գալիս էին կայարանի կառավարիչը և ծառան։

— Ո՞վ է այստեղ,— լսվեց դռների արանքից, Արբոն դուրս եկավ, հպարտ կանգնեց դռների առաջ։

— Ի՞նչ եք կամենում։

— Ո՞վ է բանեցնում մեքենան։

— Ես։

Ո՞ւր է վարպետ Բաթոն։

— Հայրիկս գնաց քաղաք, բայց ես շտապում եմ, հարկավոր է մեքենան յուղել։

Արբոն նորից բարձրացավ մեքենայի վրա և սկսեց յուղել։

Մի պահ լռություն տիրեց. նա այժմ ուղղում էր կաթսայի ֆարսոնկաները, ջրաչափի ծորակները բաց ու խուփ անում, սրբում ճակատի քրտինքը։

— Քեզ ո՞վ իրավունք տվեց մեքենան բանեցնելու։

— Ո՞վ պետք է իրավունք տար. ծառան եկավ, ասաց ջրամբարը դատարկ է, ես էլ անմիջապես գործի գցեցի։

— Իսկ եթե մեքենան ջարդուփշուր անեի՞ր, եթե կաթսան այրեի՞ր...

— Երբե՛ք։ Չե՞ք տեսնում ջուրն իրեն տեղը, մեքենան կարգին աշխատում է. հարկավոր է մի փոքր կրակն ավելացնել, սլաքն իջնում է։

— Հայրն իր քեֆին թողել, գնացել է,— միջամտեց ծառան։

— Դա քո գործը չէ,—պատասխանեց նրան երեխան։

— Տեսնո՞ւմ եք ինչ հանդուգն է,— խոսեց ծառան,— գիտե՞ք ինչ արժե այս մեքենան։

— Գիտեմ, այն էլ գիտեմ, որ շուտ-շուտ վազել, մաանել ես հորս։

— Հապա ի՞նչ էիր ուզում, լռե՞ի, երբ մի այդպիսի անկարգություն եք անում։

— Անկարգությո՞ւն. լավ է հայրիկս այստեղ չի, նա քեզ ցույց կտար։

— Լսիր, փոքրիկ մեքենավար,— դիմեց նրան կառավարիչն ավելի մեղմ տոնով,— այս խողովակն ինչի՞ համար է։

— Դա գլխավոր խողովակն է, որով ջուր է մղվում կայարան։

— Եթե դա հանկարծ պայթեր, ի՞նչ կանեիր։

— Չի պայթի, շատ ամուր է. հայրիկս է ասել։

— Գիտեմ, բայց ո՞վ գիտե։

— Այս մեծ ծորակը կփակեմ, ապա այս մյուսը բաց կանեմ. իհարկե, նախ քան այդ՝ մեքենան անմիջապես պետք է կանգնեցնել։

— Ապա, փոքրիկս, մեքենան կանգնեցրու տեսնեմ։

— Դեռ չի կարելի։

— Ինչո՞ւ։

— Ջրամբարը լիքը չի։

— Դու ո՞րտեղից գիտես։

— Այ, այս սլաքն է ցույց տալիս. երբ հասնում է կարմիր գծին՝ ամբարը դեռ չի լցվել։

— Լավ, մի փոքր էլ սպասենք։

— Իսկ եթե ապակին կոտրվի՞։

— Երկու ծորակը կփակեմ։

— Եթե զսպանակը բարձրանա՞։

— Պտուտակը կսեղմեմ, կրակը իսկույն կմարեմ։

— Ապրես, իմ փոքրիկ մեքենավար. հայրիկդ հենց որ գա ուղարկիր ինձ մոտ։

— Ահա և հայրիկս,— ուրախ-ուրախ ճչաց երեխան։

— Վարպետ Բաթո, այս մի մատ երեխային ինչպե՞ս վստահացար մեքենաները։

Բաթոն շվարել էր, չէր իմանում ինչ ասեր։ Նրան կայարանում շափազանցրած բաներ էին պատմել. սարսափից դողում էր։

— Ներեցե՛ք, ես մեղավոր եմ. գնացքն ուշացավ, ստիպված էի ոտքով գալ։

— Վարպետ Բաթոս, գիտե՛ք, որ ձեզ վրա ընկնում է մեծ պատասխանատվություն։

Բաթոն լուռ էր։ Երեխան զարմացած նայում էր մերթ հորը, մերթ կառավարչին։

— Ի՞նչ եք ուզում իմ հորից, չէ՞ որ ամեն ինչ կարգին է. ջրամբարն էլ շուտով կլցվի։

— Գիտեմ, սիրելիս, դու վերկեցիր քո հորը։ Տուր ձեռքդ, փոքրիկս, դու պետք է դառնաս մեծ մեքենավար։

— Ես դեռ այնքա՞ն պետք է սովորեմ. ինձ արդեն ընդունել են մեր նոր բացված գործարանային դպրոցը. շուտով հայրիկիս հետ կանցափոխվենք քաղաք։ Ես հայրիկիս չեմ ուզում մենակ թողնել ոչտեղ։

— Յանսությունն, վարպետ, ի սրտե ցանկանում եմ ձեզ հաջողություն։

— Շնորհակալ եմ,— արցունքները հազիվ պահելով շշնջաց Բաթոն։

— Շնորհակալ եղիր քո տղայից,— ասաց կառավարիչն ու հեռացավ։

— Արրո՛, իմ խելոք տղաս։

— Հայրի՛կ...

Հայր ու տղա գրկախառնված՝ աչքերից թափում էին ուրախության արցունքներ։



29240

ՓԱՐԴՈՐԱԾՈՒՍԻ ԱՂՋԻԿԸ

— Դեռ շատ փոքր հասակից մուրճն ու դանակն էին Հեղինե Շեկոյանի խաղալիքները։ Ձեռքերը մի քանի տեղից կտրտել էր, բայց դանակը ձեռքից չէր գցում։ Երբեմն էլ պատերի մի տեղ ծեփն էր ուղղում, մի ուրիշ տեղ նորոգում ու սվաղում։

— Ես արհեստ եմ ուզում սովորել,— ասում էր գյուղացի այդ կայտառ, հաղիվ տասներեք տարեկան աղջիկը ու պնդում էր իր ասածը։

Քույրերը միշտ ծաղրում էին նրան.

— Ահա մեր ուստան բանանահ դառավ։

Մի օր գյուղի ուսուցիչը հավաքեց բոլոր երեխաներին իր շուրջը և պատմեց քաղաքում նոր բացված գործարանային ուսումնարանի մասին։

— Այնտեղ տղա-աղջիկ միասին սովորում են գանազան արհեստներ, դրա հետ միասին ուսում են առնում,— ասաց նա և մի առ մի սկսեց նկարագրել արհեստանոցները։

— Ահա փականագործների բաժանմունքը, լուսավոր, մեծ դահլիճ. ամեն մի աշակերտ ունի իր աշխատելու տեղը, իր գործիքների արկղիկը, մուրճ, անկյունաչափ, խարտոցներ և այլն։

— Ահա ատաղձագործի բաժանմունքը... էլ ի՞նչ ասես, որ չկա այնտեղ. մեծ ու փոքր սլահարաններ, գեղեցիկ, փայլուն սեղաններ, աթոռակներ. ամեն մի տղա իր դաղդահի առաջ տախտակը ձեռքին սղոցում, ռանդում, հղկում, փայլեցնում է։

— Ահա խառատի արհեստանոցը, ճախարակավար անիվները կաշվե գոտիներ հագած պտտվում են։ Տղաները խառատի դաղդահների առաջ շարված են [illegible], սղոցներ, պղինձ, թուջ։

— Զուլարանն ամենահետաքրքիր բաժանմունքն է. այստեղ կարծես խաղում են ավազի հետ։ Տղաները ցաք ու ցրիվ, որը կանգնած, որը շոքած, գործիքները ձեռքներին, հղկում, կանոնավորում են իրանց կաղապարները։

— Շինության մի անկյունում կանգնած է հսկա հնոցը. կրակը վառվում է ներսը, բոցերի ու ալավի մեջ հալվում է մետաղը։

Բավական է վարպետի կողմից մի նշան, և կարմիր բոց հեղուկը թափվում է առանձին պնակի մեջ. այդտեղից էլ տանում, լցնում են կաղապարները։ Դարբնոցում շիկացած երկաթը հանում են քուրայից։

— Տան-տին-տան, տան-տին-տան,— լսվում է դարբնոցի նվագը,որ տալիս է արհեստանոցին աշխուժ ու եռանդ։

Շեկոյանը նախանձով լսում էր ուսուցչի պատմածը այդ տղաների մասին։

Այդ հեքիաթային աշխարհը կլանել էր նրա մանկական միտքը։

— Ինչու տխրեցիր Շեկոյան,— դիմեց նրան ուսուցիչը։

— Չգիտեմ... որովհետև ես... կմկմաց նա, հուսահատ նայելով ուսուցչին։

Տղաները ծիծաղեցին...

Ուսուցիչը ժպտաց ու դառնալով Շեկոյանին ասաց.

— Եթե ուզում ես՝ քեզ էլ կտանեմ։

— Մայրիկս չի թողնի,— շշնջաց նա հուսահատ։

Ուսուցիչը նայեց աղջկա պայծառ աչքերին ու կարծես մի նոր աշխարհ բացվեց նրա առաջ. «սա կարող է մեծ ընդունակություն ցույց տալ և օրինակելի լինել գործարանային դպրոցում»,— մտածեց նա և որոշեց ամեն ջանք գործ դնել աղջկա մորը համոզելու։

Հեշտ չէր համոզել մի դյուղացի կնոջ։ Բայց մայրը չկարողացավ ուսուցչի խնդիրը մերժել, և մի քանի օրից հետո նրանք գործարանային ուսումնարանի արհեստանոցումն էին, ուր աշակերտները մեծ ջանասիրությամբ աշխատում էին։

Մի ծանր թախիծ պաշարել էր Շեկոյանին։ Այն մեծ ձգտումը, այն մեծ ուժը, որ նա զգում էր իր մեջ, դյուղում կարծես անհետ չքացել էր նրա մեջ...

— Ի՞նչ ես մտածում,— դարձավ նրան մի վոքրիկ, տասներկու տարեկան տղա, որի երեսն ու ձեռքերը մրոտած, կողքի մանդանայի վրա աշխատում էր։

Աղջիկը ոչինչ չպատասխանեց, միայն իր բարի աչքերը դարձրեց նրան։

— Երևի եկել ես մեզ մոտ սովորելու, այնպես չէ՞։

Աղջիկը գլխով դրական նշան արավ։

— Ես գիտեմ, գիտեմ, մեր բաժանմունքում մի ազատ տեղ կա, ա՛յ, այն մանգանան տեսնո՞ւմ ես, նա քոնը կլինի, այս էլ գործիքներիդ արկղիկը, տե՛ս, ինչ սիրուն բանալի ունի։ Դու մի վախենալ, ես քեզ կսովորեցնեմ։ Գիտես, քեզ կտան մի այսպիսի մուրճ։ Օ՜ ձեռներիդ ինչքան պետք է խփե՞ս։ Բայց դժվար չէ. միայն թե, մուրճը պետք է ամուր բռնես ու շարժես տղայի պես, ա՜յ, այսպես։ Թե սխալվեցիր, հարվածը կընկնի ձեռքիդ. այդ ոչինչ, կաշին մի փոքր կպլոկվի, քիչ արյուն կգա, կցավի ու կանցնի։

Տիրեց լռություն. տղան, շարունակելով ընդհատած աշխատանքը, նորից դարձավ աղջկան։

— Ես էլ եմ գյուղացի, գիտե՞ս ես ու դու ընկեր կլինենք, հա՞։

Աղջիկը լսում էր իր շատախոս բարեկամին ու հենց առաջին րոպեից ինչ-որ մտերմություն է զգում դեպի նա։

— Դու ո՞ր գյուղացի ես,— նորից դիմեց նրան տղան։

— Ես Կոթի գյուղից եմ։

— Իսկ ես Շուլավերցի, իմ ազգանունը Պողոսյան է. քո՞նը։

— Ինձ Շեկոյան են ասում մեր գյուղում. մենք երեք քույր ենք և ոչ մի եղբայր. ես ամենամեծն եմ. ինձ բերեց մեր գյուղի ուսուցիչը։

— Արհեստ սիրում ես, այնպես չէ՞։

— Շատ, այնպե՞ս եմ սիրում, այնպե՞ս... Բայց վախենում եմ չկարողանամ սովորել։

— Ես այստեղ չե՞մ, դու իսկի, իսկի մի վախենար։

— Շեկոյան Հեղինե,— լսվեց դպրոցի ծառայի ձայնը։

— Գնա, գնա, քեզ կանչում են։

— Ո՞ւր պիտի գնամ,— շփոթված հարցրեց նա տղային։

— Ուսուցչանոց, գնանք, ես քեզ ցույց կտամ։

Տղան ուղեկցեց Հեղինեին մինչև գործարանի դուռը։

— Ա՛յ, տեսնո՞ւմ ես. այն դիմացի պատշգամբն է. ներս մտիր, համարձակ. չվախենաս։

Տղան վերադարձավ իր տեղը, մաքրեց կողքի ազատ մանգա-

նան, բաց ու խուփ արեց արկղիկը։ Ինչ որ հարազատություն, մոտիկություն էր զգում դեպի այդ աղջիկը։ Մանգանայի պտուտակն սկսեց ոլորել, կարծես ուզում էր հավաստիանալ, թե այդ գործիքը կոպիտ չի՞ լինի նրա քնքուշ ձեռքերի համար։

Մինչ տղան այդ մտածմունքների մեջ էր, վարպետն ու աղջիկը մոտեցան նրան։

Պողոսյանի սիրտն սկսեց բաբախել. քիչ էր մնում ուրախությունից աղաղակեր, բայց զսպեց իրան ու ցածր, հազիվ լսելի ձայնով արտասանեց.

— Այս մանգանան աղատ է։

— Աղատ է, բայց շատ մեծ է. սրան հարկավոր է ավելի փոքր, ավելի նուրբ,— խոսեց վարպետը, աչք ածելով շուրջը։

Պողոսյանի վրա կարծես ջուր մաղվեց. նա մերթ նայում էր աղջկան, մերթ վարպետին։

— Իգնատ Միխայլովիչ,— կմկմաց նա անվստահ,— ես... ես... ոչ, ինքը Շեկոյանն է ուզում. քիչ առաջ նա այստեղ էր... Այդպես չէ՞, Շեկոյան,— ասաց նա, աչքով-ունքով նշան տնելով աղջկան։

— Որտեղի՞ց գիտես դու սրա աղգանունը։

— Մեր գյուղացի է,— շփոթված արտասանեց Պողոսյանը։

— Ձեր գյուղացի՞...

— Այսինքն մեր հարևան գյուղացի։

— Շեկոյա՞ն, ճի՞շտ է ասում Պողոսյանը։ Դու ուզո՞ւմ ես այս մանգանայի վրա աշխատել. տես, ինչքան բարձր է քո հասակի համար։

— Ոչինչ, ոտքերի տակ կարելի է մի տախտակ դնել,— միջամտեց Պողոսյանը։

Աղջիկն ամոթից կարմրեց, բայց իրեն չկորցրեց։

— Այո, խնդրում եմ, եթե կարելի է այստեղ։

Սա նրա առաջին համարձակ քայլն էր, որ անում էր իր նոր ուսումնարանում։ Նա ինքնարավականությամբ նայեց Պողոսյանին ու երկուսի հայացքները հանդիպեցին իրար սիրալիր ու քնքուշ։

— Լա՞վ, թող այդպես լինի։

Իսկույն բերեցին աղջկանը հատկացրած գործիքները, մի փոքրիկ մուրճ, պողպատե կտրիչ (զուբիլո), քառակուսի խարտոց՝ իր փայտե կոթով, և մի հատ կապույտ գոգնոց։

Պողոսյանը նորից սրբեց պահարանը և մեծ խնամքով դասավորեց այն չորս կտոր դործիքը։

— Ահա քո առաջին աշխատանքը (պրիոմը)։

Ասաց վարպետը և բացատրելուց հետո հեռացավ։

Պողոսյանն ուրախությունից հուզված՝ ամուր բռնեց աղջկա ձեռքը ու թոթվեց։

— Ես քեզանից անչափ շնորհակալ եմ,— խոսեց աղջիկը ժպտալով։

Այդ րոպեին շտապ ներս մտավ դյուղի ուսուցիչը։

— Ցտեսություն Շեկոյան,— ասաց նա,— ես գնում եմ գյուղ։ Մեր տղերանցը տեղավորեցի զանազան ուսումնարաններում. մեկնակ քեզ ընդունեցին այստեղ։ Դու պետք է շատ աշխատասեր ու ուշադիր լինես...

— Կաշխատեմ, կաշխատեմ. բարևեցեք մայրիկին, քույրերիս. անչափ շնորհակալ եմ ձեզանից։ Ցտեսություն։

— Ես այստեղ եմ. ես նրան կօգնեմ. ես ամեն բան կանեմ,— խոսեց Պողոսյանն ինքնավստահ։

Ուսուցիչը սեղմեց երկուսի ձեռքն ու հեռացավ։

Սուլեց դպրոցի կոչնակը, բարձրացավ աղմուկ, աշակերտները հավաքեցին իրենց դործիքները։

— Վերջացավ. այժմ դնում ենք տուն,— ասաց Պողոսյանը, փակելով իր արկղը։

Շեկոյանն էլ փակեց իր արկղն ու բանալին սեղմեց ձեռքի մեջ. մի անդամ էլ սիրալիր նայեց ընկերոջն ու շտապեց տուն. նա տեղավորվել էր մի հեռու աղդականի մոտ։

Աշխատանքը կանոնավոր գնում էր. նա մեծ ընդունակություն էր ցույց տալիս արհեստի մեջ։

Այժմ նրա առաջ դրված էր հինգերորդ՝ ամենադժվար պրիոմը. նա պետք է քառակուսի երկաթից խարտոցներ կանոնավոր խորանարդ, որի բոլոր կողմերը լինեին հավասար, ապա տափակ երկաթի վրա այդ խորանարդի համապատասխան բացվածք պատրաստեր։

Պողոսյանն ուզեց անպայման օգնած լինել աղջկանը։

— Շեկոյան, դա շատ դժվար է, գիտե՞ս. ես երեք հատ փչացրի, միայն չորրորդը հաջողվեց ինձ մի կերպ ավարտել. թույլ տուր ես հարթեմ բոլոր կողմերը։

— Բայց ես էլ վիշտս եմ,— պատասխանեց նա ժպտալով։

Մի քանի օրից հետո աշխատանքն ավարտված, պատրաստ էր։

Վարպետը մնացել էր զարմացած. մեծ տղաներից ոչ ոք չկարողացավ այնքան նուրբ ու կանոնավոր շինել, որքան այս տասներեք տարեկան աղջիկը։

Այդ օրվանից Շեկոյանի անունը բարձրացավ ամբողջ ուսումնարանում։

Պողոսյանը հրճվանքով պատմում էր ամենքին իր ընկերուհու հաջողություններին մասին։ Նրանք շատ էին մտերմացել. միշտ միասին էին լինում, այժմ էլ աշխատում էին իրար հետ դարբնոցում։ Մի օր մեկն էր վարպետ, մյուս օրը՝ երկրորդը ու այսպես հերթով ծառայում էին միմյանց։

Այսօր նրանք վերջին աշխատանքն էին կատարում։ Երկու երկաթի կտորներ եռացման միջոցին պետք է միացնեին իրար։

Աղջիկը մեծ ուշադրությամբ հսկում էր քուրայում եռացող երկաթներին, ավազ էր ցանում, կրակը բորբոքում։ Պողոսյանը մուրճը ձեռքին պատրաստ կանգնած՝ սպասում էր նրա հրամանին։

Հենց որ Շեկոյանը նշան արավ, տղան քուրայից հանեց շիկացած երկաթը, խփեց զնդանին։ Նույն վայրկյանին աղջիկն էլ առավ իր երկաթը, միացրեց, հարվածներ տեղացին կարկտի պես. վարպետը, որ հեռվից դիտում էր, մոտեցավ, նայեց պատրաստ իրար կպած ձողը. կանոնավոր, ոչ մի պակասավոր կողմ չուներ։

— Ապա, Պողոսյան —այժմ հերթը քոնն է,— դարձավ վարպետը տղային։

Դռները փոխվեցին։ Պողոսյանը լուրջ դեմքով խառնում էր քուրան, ավազ էր ցանում շիկացած երկաթներին, իսկ աղջիկը մուրճը ձեռքին սպասում էր նրա հրամանին։

Պողոսյանը քրտինքը սրբեց, նայեց կրակին, նայեց շիկացած երկաթներին, մի քանի անգամ էլ շուռ ու մուռ տվեց, ապա ձեռքի շարժումով նշան տվեց աղջկանը։ Տեղացին հարվածներ, կայծերը խարտ-խարտ թռչում, տարածվում էին շուրջը. Պողոսյանը լարված խփում էր ու խփում, ծեծում շիկացած երկաթը։

Վարպետը մոտեցավ, նայեց կցանին, գլուխը շարժեց։

— Անհաջող է, շատ անհաջող. մի երրորդ մասն էլ չի կպել,— ասաց նա և երկաթը խփելով զնդանին միջից կիսեց։

Տղան կանգնած էր գլխիկոր, շվար. նա մինչև ականջները կարմրել էր. լուռ սպասում էր վարպետի դատավճռին։

— Շեկոյան, դու կտեղափոխվես խառատի բաժանմունքը, կաշխատես քանակվեց համար դաղգահի վրա, իսկ դու, Պողոսյան, մի առ ժամանակ էլ կմնաս այստեղ աշխատելու, մինչև որ լավ կսովորես։

Պողոսյանը հոսահատ նայեց աղջկան։

— Ես էլ կմնամ, մենք միասին կդնանք խառատի բաժանմունքը,— հավիվ լսելի շշնջաց Շեկոյանը։

— Աշխատասեր և ընդունակ աշակերտներին ծուլություն չենք կարող սովորեցնել, պատասխանեց վարպետը։

Շեկոյանը հոնքերը կիտած մոտեցավ վարպետին։

— Գիտեք, ես էլ շատ քիչ բան գիտեմ. տեսեք, ահա իմ աշխատանքն էլ ունի նույնպիսի պակասավոր կողմեր. ա՛յ, այս մասը կտրած չէ... Ես ուզում եմ ավելի լավ սովորել. Պողոսյանի երկաթը վատն էր. նա ինձանից լավ գիտե, խնդրում եմ...

Վարպետը ժպտաց. երկաթն առավ, նայեց զննողաբար.

— Սա ամենալավ եռացման աշխատանքն է մեր ամբողջ աշակերտության մեջ։ Ոչինչ թող Պողոսյանը մի քիչ էլ աշխատի, սովորի, իսկ դու կգնաս խառատի բաժանմունքը։

Պողոսյանը մնաց դարբնոցում. Շեկոյանն անցավ խառատի բաժանմունք։

Դասամիջոցին նրանք միշտ իրար հետ էին լինում. որքան Շեկոյանն աշխատում էր հանգստացնել Պողոսյանին, բայց սա միշտ մտազբաղ ու տխուր էր։

— Գիտե՞ս, Շեկոյան,— մի օր դարձավ նա աղջկանը,— երբ դու ինձ հետ էիր, չգիտեմ ինչու, այնպես եռանդով էի աշխատում, իսկ այժմ ոչինչ չեմ ուզում անել. ձեռքերս կարծես թուլացել են. այսօր վարպետն այնպես բարկացավ վրաս։ Գիտե՞ս, երրորդ աշխատանքի, անկյունավոր մեխը, երևակայիր, քանիսն եմ փչացրել։ Գլուխս միշտ ցավում էր. ա՛յ, տես, ձեռքդ դիր ճակատիս, այրվում է... Դու ինչ ես անում։

— Ինձ համար էլ շատ տխուր է. այսօր գլան չարխելը պրծա. գիտե՞ս, խառատությունը որքան հեշտ է. կտրիչը ամրացրու, լծակը քաշիր. վը՛զզ, մեկել տեսար երկաթը չարխվեց, և այնքան փայլուն ու կոկ։ Դու իսկի դարդ մի անի, ես վաղը վարպետին

կխնդրեմ. նա ինձ շատ է սիրում. կխնդրեմ. ա՛յ, կտեսնես, նա շատ շուտով քեզ կտեղափոխի մեր բաժանմունքը։

— Նա ինձ աչքից գցել է, այնպես դուռց այսօր վրաս...

— Ա՛յ, կտեսնես, վաղը մեկել տեսար քեզ տեղափոխեցին մեր բաժանմունքը։

Հետևյալ օրը Պողոսյանը չեկավ դպրոց. երկրորդ, երրորդ օրն էլ նա չկար։ Շեկոյանն անհամբեր սպասում էր նրան և միևնույն ժամանակ ծրագրում, թե ինչպես պիտի դիմի վարպետին, ինչ պիտի ասի նրան։

Աղջիկն այդ մտածմունքների մեջ էր, երբ նրան մոտեցավ վարպետը, քննեց աղջկա աշխատանքները և մի քանի ցուցմունքներ անելուց հետո ուզում էր հեռանալ։

— Իգնատ Միխայլովիչ,— դարձավ նրան Շեկոյանը հուզված,— մի բան պիտի խնդրեմ ձեզ. դժվարանում եմ նույնիսկ ասել... Եթե դուք այնքան բարի լինեք որ... հավատացնում եմ ձեզ, նա մի տասն անգամ ինձանից լավ գիտե դարբնոցի աշխատանքները։ Նա այնքան տխուր է... Երեք օր է դպրոց չի գալիս... Անցյալ օրը ես տեսա. նա արտասվում էր... արցունքներն ուղղակի թափվում էին աչքերից... ես...

Աղջիկը այլևս չկարողացավ շարունակել, աչքերը լցվեցին, հայացքը գցեց վարպետին, այնքան՝ թախծալից ու ջերմ... Վարպետը, որ շատ համառ մարդ էր, չկարողացավ մերժել ու ասաց.

— Խնդրում ես, որ տեղափոխեմ այստե՞ղ։

— Այո... այո,— շշնջաց նա, արցունքները հաղիվ զսպելով։

Վարպետը սկսեց լուրջ մտածել. ապա դառնալով աղջկանն ասաց.

— Լավ, կտեղափոխեմ։

Ուրախությունից աղջկա աչքերը փայլեցին. երախտապիտությամբ նայեց վարպետին, իր այդ հայացքի մեջ էլ անհոմ՝ շնորհակալություն հայտնելով նրան։

— Եթե այսօր էլ չգա, ինքս կգնամ նրա մոտ,— որոշեց Շեկոյանը։ Նա ուզում էր այդ լուրը շուտով հաղորդել նրան. ուզում էր երկար խոսել նրա հետ, այնքան էր կարոտել... Դպրոցի ծառայից իմացավ նրա հասցեն ու անմիջապես գնաց որոնելու։

Դպրոցից շատ հեռու էր ապրում Պողոսյանը, աղջիկը հաղիվ գտավ նրա բնակարանը։ Դուռը բացվեց. մի փոքրիկ անշուք սենյակ

յակ էր դա, որի մի անկյունում մահճակալի վրա մեն-մենակ պառկած էր նա. սեղանի վրա դրված էր մի բաժակ ջուր, դեղերով սրվակներ և մի ափսեում ինչ որ կերակուր։

Աղջիկը մոտեցավ անկողնուն։

Պողոսյանն աչքերը լայն բացած նայում էր աղջկանը...

— Շեկոյան... Շեկոյան, այդ դո՞ւ ես,— նա գլուխը բարձրացրեց. կարծես չէր ուզում հավատալ իր աչքերին, ապա ամուր սեղմեց աղջկա մեկնած ձեռքն իր ափերի մեջ.

— Ես քեզ սպասում էի... սպասում էի, Հեղինե... Հենց որ դպրոցի սուլոցի ձայնը լսում էի, ինձ թվում էր, որ դու պիտի գաս ինձ մոտ։ Ահ,ինչ լավ արիր, որ եկար... ես քեզ այնքան կարոտել էի...

Աղջիկը հուզված մերթ նայում էր տղայի դալկացած դեմքին, մերթ խլճռվ ու աղքատիկ սենյակին. մի ներքին թախիծ պաշարել էր նրան. շվար մնացել էր կանգնած...

— Նստիր, նստիր, սթոռ վերցրու՝ նստիր... Գլուխս ինչպես ցավում էր... անցավ, այժմ լավ եմ... Ջուր տուր խմեմ.., ձեռքդ դիր ճակատիս, տես այլևս չի այրվում... անցավ. ամեն ինչ անցավ... Դե պատմիր, պատմիր, ես քեզ լսում եմ։ Շուտով մորաքրոջս աղջիկն էլ կգա. նա աշխատում է ծխախոտի գործարանում։ Ուզում է ինձ գյուղ ուղարկել. մեր տունը... Գլանը պրծա՞ր, հիմա ի՞նչ ես շարիում... Դե, մորաքրոջս աղջիկը դնում է աշխատելու, ինձ նայող, խնամող չկա. մնում եմ տանը մենակ. սիրտս պատրվում է։ Ինչ լավ արիր, որ եկար... Դե պատմիր. դարբնոցում եղե՞լ ես. երեկումս ամբողջ գիշեր քեզ հետ էի. աշխատում էի, շարշարվում, բայց ջի կարողանում շիկացրած երկաթներն իրար կպցնել... Այդպես լուսացրի։ Ոչինչ, ես էլ շուտով կլավանամ, կգամ... Դիտես, բժիշկն ասել է մորաքրոջս, որ լավ կլինի ինձ գյուղ ուղարկեն։ Իսկ ես չեմ ուզում գնալ։ Դե, խոսիր, Շեկոյան, ի՞նչ ես լռել. այնքան երկար էր թվում այս մի քանի օրը... Վարպետի հետ խոսեցի՞ր... Շեկոյան դու արտասվո՞ւմ ես... ես գիտեմ, գիտեմ, նա շատ կոպիտ է, քեզ վրա բղավել է... իմ պատճառով քեզ վիրավորել է... հա՞...

— Ոչ, ոչ,— արցունքները զսպած խոսեց աղջիկը,— նա խոստացավ վաղվանից տեղափոխել քեզ մեր բաժանմունքը։

— Նա խոստացա՞վ, ճի՞շտ ես ասում... նա՞յ այդ ինչպե՞ս եղավ։

Տղան նստեց տեղում և նայում էր աղջկան։

— Ինչպե՞ս պիտի լինի. նա գիտե, որ դու դարբնոցի աշխատանքը շատ լավ գիտես և տեղափոխեց։

— Տո՞ւր հագուստս հագնեմ։

Աղջիկը խալաթը տվեց և օգնեց նրան հագնելու. նա հենվեց մահճակալին. այտերը կարմրել էին, աչքերը փայլում էին ուրախությունից։

Այդ միջոցին ներս մտավ մորաքրոջ աղջիկը։ Վտիտ, միջահասակ տարիքավոր մի կին։

— Մորաքույր, մորաքույր, Շեկոյանը սա է տե՞ս, եկել է ինձ տեսության, ծանոթացիր, իմ անմահնամոտ ընկերն է։

— Այդ դո՞ւ ես, օ՜, քո մասին այնքան է պատմել... շատ ուրախ եմ։

— Այո, մենք միասին ենք աշխատում, սրանից հետո էլ միասին կլինենք, միայն թող դյուղ չգնա, մնա այստեղ։

— Չէ՛, սիրելիս, սրան ոչ մի դեպքում չի կարելի այստեղ թողնել. բժիշկն այսօր պետք է վերջնականապես որոշի. տեսնենք։

— Ո՛չ, ո՛չ, ես կգնամ ուսումնարան. էլ հիվանդ չեմ. գնամ թե չէ ինձ կանդրադարձնեն խառատի բաժանմունք. չէ՞, Շեկոյան։

— Այո, այո. դու այժմ իմ դիմացի դաղդահի վրա պետք է աշխատես. վարպետն ինքը կարգադրեց։

— Լսո՞ւմ ես, մորաքույր...

— Լսում եմ. ասա մի տեսնեմ տաքությունդ։

Մորաքույրը մոտեցավ, ձեռքը դրեց տղայի ճակատին.

— Ճիշտ է, այնքան էլ տաք չես, ա՛ռ ջերմաչափը։

Տղան ջերմաչափը դրեց կռան տակ։

Բոլորը լուռ սպասում էին այդ համր գործիքի դատավճռին, ու նա երկար սպասել չտվեց նրանց. 37,5 աստիճան էր նրա տաքությունը։

— Այո, իջել է. առավոտը 39,2 աստիճան էր, սա լավ նշան է։

Ներս մտավ դպրոցի բժիշկը։

— Ա՜, Շեկոյան, եկել ես ընկերոջդ տեսությա՞ն, շատ լավ ես արել։

— Ինչպե՞ս ես, Պողոսյան։

— Լավ եմ, էլ գլուխս չի ցավում. տաքությունս իջել է։

— Ապա տեսնենք,— ասաց բժիշկն ու քննեց հիվանդին։

— Այո, դեպի լավն է գնում հիվանդը,— արտասանեց նա ու առանձնացավ մորաքրոջ աղջկա հետ խոսելու։

Երկու երեխաները լուռ հետևում էին նրանց խոսակցությանը. կցկտուր բառեր էին հասնում նրանց ականջին. այսքանը միայն հասկացան, որ հիվանդությունը ջղային Գողի վրա էր։

Բժիշկը մոտեցավ տղային։

— Գյուղ չենք ուղարկի, կմնաս այստեղ, մի պայմանով, որ Շեկոյանն ամեն օր դա քեզ խնամելու։

Ես... ես ամենայն սիրով դպրոցից ուղղակի կվազեմ այստեղ, վազը մեր ազատ օրն է, ամբողջ օրը այստեղ կլինեմ, մյուս օրերն էլ դասերից հետո անմիջապես կգամ, միայն թե Պողոսյանը... ես չեմ ուզում, որ նա գյուղ գնա։

Պողոսյանը հուզված մերթ նայում էր մորաքրոջը, մերթ բժշկին. վերջն իր սիրալիր, անմեղ հայացքը հառեց աղջկա աչքերին։ Երկու-երկար նրանք նայում էին միմյանց։ Եվ որքան սիրափանք, որքան ջերմություն ու հարազատություն կար այդ անմեղ մանկական սրտերում։ Ինչեր չի կարող անել ընկերական սերը։

ՁՈՒԶԱՆ

Աշնանային ցուրտ ու խոնավ առավոտ է. երկինքը պատած է մշուշով. մանր անձրև է մաղում։ Տանիքներից թափվող ջուրը թիթեղյա խողովակների մեջ թեթև աղմուկ հանելով, փողոցները լցնում է մի ընդհանուր մռմռոցով։ Ծառերը նայում են վհատ ու տխուր. նրանց թոշոմած, ու դեղնած տերևները, անձրևի կաթիլներից ծանրացած՝ մեկիկ-մեկիկ ընկնում են ցած, ցեխի ու տղմի մեջ։

Տխուր է քաղաքը, մռայլ են և մարդիկ, նրանք դժգոհ դեմքերով անցնում են սառը և թաց մայթերով։ Թարմ և ուրախ են միայն դեպի դպրոց շտապող մանուկները. բնության թախծոտ տեսքը, ամպը, թուխպը, անձրևը, ցուրտն ու խոնավը, տերևաթափ ծառը նրանց չի վշտացնում, նրանց մատաղ սիրտը չի ալեկոծում, բոլորը նրանց համար սիրելի են, բոլորին նրանք սիրում են և ուրախ, զվարթ, թևերի տակ մի-մի կապոց, դրքերի պայուսակ, շտապում են։

«Ահա դարձյալ մի կես ժամ ու բոլորը կանցնեն». մտածում է կոշկակարի տասներկու տարեկան աղջիկը՝ Շուշանը, որը իր սովորության համաձայն կանգնել էր բակում, դեպի փողոցը նայող դռների մեջ։ Նա անընդհատ նայում է անցուդարձ անող իր բարեկամներին ու հայացքներով հետևում է նրանց մինչև փողոցի մյուս ծայրը. նա բոլորին դիտե, բոլորին էլ ճանաչում է։ «Այժմ, ձեռք-ձեռքի տված, երկու քույրը կանցնեն. ահա՛ կաղլիկ աղջիկը։ ահա՛ փոքրիկ տղան, իր մեծ պայուսակով. այժմ սիրուն աղջիկն է գնում. ահա երեք փոքրիկները իրենց աղախնի հետ. հիմա կանց-

նի սեփական կառքը»... «Որքա՜ն բախտավոր են», բացագանչում է Շուշանիկը ամեն անգամ, երբ անցնում է այդ կառքը և այդ ժամին թվում է, որ ձիերը կայծակից էլ արագ են թռչում, կառապանը հպարտ նստած, հաղիվ է նրանց պահում։ Նույն տան կեցող, վերի հարկի երկու քույրերը դեռ չեն անցել. ահա նրանք իջնում են, իր մոտով պիտի անցնեն. նա այդ գիտե։

— Բարի լույս քեզ Շուշան,— ուրախ բարևում է նրան տան տիրոջ աղջիկ Հեղինեն, որը վերաքննությունից հետո փոխվել է վեցերորդը։

— Բարև,— ցածր ու քնքուշ ձայնով պատասխանում է Շուշանը ու քայլում է նրանց ետևից մինչև փողոցը։

«Կլինի՞ մի օր էլ ես սրանց պես ուսումնարան գնամ. առավոտները վեր կենամ շատ վաղ, կոշիկներս սրբեմ, մազերս սանրեմ, ես էլ նրանց պես մաքո՜ւր, դեղեցիկ շորեր հագնեմ, սև գոգնոցով, սիրուն ուանոցով. կապեմ գրքերս, առնեմ թևիս տակ, ուրախ ու զվարթ վազեմ ուսումնարան։ Այնտեղ դեռ ոչ ոք չի լինի. բակը ավլեմ, դռները, պատուհանները սրբեմ, ուսուցիչս ինձ շատ սիրե. ասի Շուշան, ա՛ռ այս գիրքը կարդա, այս նկարները դիրքը քոնը լինի... Երբ կդառնամ տուն, տան գործն էլ կանեմ, մայրիկիս կօգնեմ, լվացքը կանեմ. օ՜, շատ կաշխատեմ. ափսոս չի՞ մայրիկս. նա շատ է չարչարվում»։

Նա սիրում էր երկա՜ր մտածել, տարվել վառ ցնորքներով, քաղցր ու անուշ պատրանքով։

Անցնում էին օրեր։ Մի առավոտ վերին հարկի քույրերը զարմացան։ Շուշանը դուրսը չէր. նրանց չբարևեց. երկրորդ օրն էլ չկար նա։ Եվ երբ դասից վերադարձան տուն, անմիջապես իջան ներքնահարկը և առաջին անգամ մտան Շուշանի ծնողների բնակարանը։

Շուշանը հիվանդ է. նա պառկած է թախտի մի ծայրին. այտերը կարմրել են, աչքերը ավելի են վառվում, շրթունքները չորացել են, սիրտը արագ-արագ բաբախում է, իսկ շնչառությունը տաք է, ինչպես կրակ։

— Բարի լույս քեզ, Շուշան, հիվա՞նդ ես։

— Այո՛, զարմացած պատասխանեց նա։

— Ի՞նչու հիվանդացար։

— Չգիտեմ։

— Մրսել է. անցյալ օրը այն ցրտին հո տեսա՞ք, դուրսը կանգնած էր։ Մրսել է, շա՜տ է մրսել,—միջամտեց մայրը, խնդրելով օրիորդներին նստել։ Նրանք տեղավորվեցին հիվանդի մոտ. մի վայրկյան տիրեց լռություն, ապա կարեկցաբար նայելով հիվանդին, մեծ քույրն ասաց.

— Իհարկե կմրսի, տաք հագուստ չունի, վերարկու չունի, նույնիսկ մի շալ չունի ուսերին։

— Ի՞նչպես չէ, բամբաղի ֆուֆայկա ունի, չի հագնում, ի՞նչ անեմ. ամեն առավոտ դուրսն է, ձեզ է նայում, ձեզ շատ է սիրում, ա՜յ թե ինչո՞ւ է մրսում։ Ամեն օր լաց է լինում «ինձ ուսումնարան տարեք ես էլ եմ ուզում սովորել», բայց մեզ պես խեղճին ուսումնարան ո՞վ կտա։

— Շուշանը լավ աղջիկ է. ափսոս է, որ առանց ուսումի մնա. իհարկե պիտի ուսումնարան տաք, ուղիղ է ասում։

— Մայրիկս ի՞նչ անի, մենք խեղճ ենք, թե հարուստ լինեինք, ես էլ ձեզ հետ ուսումնարան կգայի, այնտեղ լավ է, չէ՞, շատ գրքեր կան։

— Այո՛, մի ամբողջ սենյակ լիքը։

— Եվ այդ բոլորը դուք կարդում ե՞ք. կարող եք տոն էլ բերել, այնպես չէ՞. ուսումնարանն ինչ լավ է։ Ես որ վեր կենամ... ես... ես էլ կգամ. կտանե՞ք, հա՞, ինձ էլ կտանե՞ք։

— Անպատճառ, անպատճառ, կտանենք. դու այնքան լավ աղջիկ ես, Շուշան, դու այնքան բարի ես։

— Հայրիկս թույլ չի տա. ես ամեն երեկո արհեստանոցի կոշիկները սրբում եմ. մայրս էլ մեղք է, օ՜, նա անչափ գործ ունի. նա լվացք է անում. ես էլ տան գործն եմ անում, երեխաներին եմ պահում։ Այդ դուք չգիտեք,— ապա դարձավ մորը,— մայրիկ, ես ուսումնարան գնամ, թույլ կտա՞ս.

— Այո, միայն լավացիր, շուտով լավացիր։

— Ես լավացել եմ, ա՜յ, տե՛ս, լա՛վ եմ, ձեռքերիս մեջը չի այրվում. այստեղ մի փոքր ծակում է, ձեռքդ բեր, ա՜յ, այստեղ, կռանս տակ, կարծես դանակով են ծակում, բայց շատ չի ցավում։ Առավոտը վեր կը կենամ, դուրսը կսպասեմ ձեզ։

— Ո՛չ, այդպես չի լինի. մենք առավոտը կգանք քեզ մոտ ու կտանենք քեզ ուսումնարան։

— Դո՞ւք, ի՞նձ, ուսումնարա՞ն, ո՛չ, ես գիտեմ... բայց չեք

խաբի, այնպես չէ՞. դիտեմ, բայց ես այնպես սրտով ուզում եմ սովորել։ Առավոտները երբ դուք ուսումնարան եք գնում, ես էլ այնպես դնում, մի փոքր հեռու ու նորից գամ մեր տունը. բայց գրքեր չունեմ... Այստեղ, ուսումնարանի այն մեծ սենյակից, ինձ համար մեծ գիրք բերեցեք. ես էլի ձեզ հետ կտամ. միայն մի օր, դարձյա՛լ տարեք. հա՝, կտա՞ք, կբերե՞ք.

— Հենց այս բոպեին քեզ համար գրքեր կբերենք, որքան ուզում ես. մենք շատ ունենք,— պատասխանեց Հեղինեն. փոքր քույրը վազեց տուն, մի քանի վայրկյան հետո բերեց Շուշանի ուզած գրքերը և դառնալով հիվանդին ասաց.

— Ահա այս բոլորը քոնն է. քեզ ենք նվիրում։

Հիվանդը աչքերին չի հավատում. նա մերթ մորն է նայում, մերթ քույրերին, թվում է նրան, որ ահա մեկն ու մեկը գրքերը նորից սլիտի առնի։ Երկու ձեռքով ամուր բռնած, նա դիտում է, նույնիսկ չի վստահանում թերթել։

— Շուշա՞ն, տպա՛ բաց, այդ կարմիր կողով գրքի մեջ պատկերներ կան,— ասաց Հեղինեն, սիրալիր նայելով նրան։

— Ուզիլ է՞ք ասում, այս գրքերը ի՞նձ կտաք։ Չե՞ք տանի։

— Այդ բոլորն էլ քոնն է. մենք դեռ ուրիշ գրքեր էլ պիտի տանք։

— Շնորհակալ եմ. այս ինձ բավական է. ես որ լավանամ, էլի ձեզ նա կտամ. հայրիկը ինձ համար կառնի. նստեցեք. ի՞նչու վեր կացաք։

— Թող հայրիկդ էլ առնի, բայց մենք բեզ էլի շատ գրքեր կտանք նրա համար, որ դու շատ ես սիրում։

Շուշանիկը ոչինչ չի պատասխանում. նայում է գրքերին. թերթում է. նայում է պատկերներին գրքերը նորից դարսում է, դնում է թևի տակ, նորից վերցնում։

«Ա՞խ ինչ լավ է այդպես... բայց ես վատանում եմ». նրա աչքերը մթնում են, մայրը ջուր է տալիս, օրիորդները քայլում են քսում ճակատին. նա փոքր ինչ ուշքի է գալիս, գրքերը հավաքում, դնում է թևի տակ և իր սիրալիր հայացքը նորից ուղղում է օրիորդներին. նրա վառ, անմեղ աչքերը, անթարթ նայում են. իր երախտագիտությունն է ուզում արտահայտել ամբողջ էությամբ. և այդ վայրկյանին նա ո՞րքան գեղեցիկ, ո՞րքան չքնաղ է, նա ցանկա-

նում է իր ամբողջ սիրտը բաց անել նրանց առաջ. ուզում է խոսել. բայց չի կարողանում... Հանկարծ նա լաց է լինում։

Ապա հեկեկանքը զսպելով, դառնում է օրիորդներին և նորից բաց անելով կարմիր կողով գիրքը, կանգ է առնում մի պատկերի վրա։— Այս փոքրիկ աղջիկը պահում է իր կույր պապին, այնպես չէ՞։

— Այո՛, դա մուրացկանություն է անում և կերակրում է իր ծերունի և կույր պապին։

— Խե՜ղճ աղջիկ, նա ուսումնարան գնա՞ցել է։

— Այո, գնացել է. երբ ծնողներից զրկվել է, դուրս է եկել և երկար տարիներ իր պապին պահել է։

— Այդ բոլորը այստեղ գրված է, այնպես չէ՞։

— Այո՛ դա փոքրիկ Հեղինեի պատմությունն է։

— Ի՜նչ լավ աղջիկ է. իսկ ես ուզում եմ խնդճ մայրիկիս թողնել և ուսումնարան գնալ։ Նա երկար նայում է պատկերներին, թվում է նրան, որ ինքը իրավունք չունի ուսումնարան գնալու, քանի որ իր ծնողները աղքատ են։

— Մայրի՜կ,— դառնում է նա մորը,— ձեռքերս էլի այրվում են, ինչ վատ եմ... հայրիկս ինչո՞ւ չեկավ։

— Դու թնդանոթը չեն արձակել*), երևի շուտով կգա, ի՞նչ պիտի անես։

— Այնպես, ուզում եմ որ շուտով գա։ Կասեմ գիրք ունեմ... ես ուսումնարան... բայց թույլ չի տա... մայրիկ, կոշկակարի աղջիկանը ուսումնարան կթողնե՞ն։

— Իհարկե կթողնեն։

— Ո՛չ, կասեն քու հայրիկդ կոշկակար է. դու էլ գնա՛ լվացք արա՛, տուն սրբի, բակ ավլի՛ր, գիտե՞ս այդպես է. ուզո՞ւմ ես Հեղինեին հարցրու. նա այդ բոլորը գիտե, բայց չի ասում, ա՛յ վայը տուն է, նա ինքն ասաց, մեզ մոտ պիտի գա. ուզո՞ւմ ես հարցրու. կարծես ուզում եմ քնել։

— Եթե քունդ տանում է, քնի՛ր, ես էլ լվացքը պարզաջրեմ, ա՛յ այդ բոպեիս կգամ։

— Գնա՛ մայրիկ, ես լավ եմ, ասաց Շուշանիկը։ Բայց նա լավ չէր. տաքությունը սաստկանում էր, գլուխը ցավում, ականջ-

---

*) Աշխատանքի դադարի ազդանշան։

ները խշշում էին, հայացքը պղտորվում էր, վերմակը ծանրացել, ճնշում էր նրան. թվում էր սենյակը մեծանում է, պատերն էլ են շարժվում ու ինքը տարվում է, ավելի շուտ ընկնում է այնտեղ, հեռո՞ւ կանաչ բլրակի վրա, ահա պիտի հասնի ով տանջանքից ազատվի։ Բայց նա գլորվում է անդունդ, ահռելի խորխորատներ, և օգնության է կանչում... Ջառանցում է, անհասկանալի բառերի մեջ մերթ լսվում է, գիրք... ուսումնարան... կոշկակարի աղջիկ...

Նա չիմացավ ի՞նչ պատահեց իր հետ գիշերը։ Լուսաբացին կարծես փոքր ինչ լավ էր զգում։ Երբ աչքերը բաց արավ, կարմիր կազմով գիրքը ընկած էր կողքին, իսկույն առավ դրեց Ցեկի տակ։ Մայրը աթոռի վրա հագուստով նստած էր, հայրը աշխատանքի չէր գնացել, լամպարը դեռ վառվում էր։ Նա ուշադրությունը լարեց, հարևանի տանը պատի ժամացույցը խփում էր. համարեց, ժամը յոթն էր. դա նրան զարմանք պատճառեց. ի՞նչու այդ ժամանակին մայրը դեռ նստած է, հայրը գործի չի գնացել... մութ երազի պես մի բան էր դառնում նրա գլխում. կարծես մտաբերում էր գիշերվա անցքը. «խե՞ղճ հայրիկ» դուրս թռավ հանկարծ նրա բերանից, աչքերը փակեց և ուզեց մտաբերել բոլորը, բոլո՞ր ինչ կատարվեց այդ գիշեր։

Մայրը սթափվեց, կուացավ, դիտեց Շուշանի շնչառությունը և կարծելով թե նա քնած է զգուշությամբ սկսեց սենյակի իրերը կարգի բերել։

Դուռը կամացուկ բացվեց, ներս մտավ Հեղինեն։

— Մա՛յրիկ, Շուշանիկը քնա՞ծ է։— Քնած է հաղիվ լսելի արտասանեց մայրը։

— Ոչ, քնած չեմ, ես այնպես միտք եմ անում,— ուրախացած պատասխանեց աղջիկը. մայրը շփոթված էր, նրա տանջված դեմքի վրա երևում էր հուսահատություն և երկյուղ. նա այդ մի գիշերվա մեջ կրել էր տնասելի վիշտ ու տանջանք։

— Հայրիկիդ հետ խոսեցի՞ր, ի՞նչ է ասում։

— Հայրիկս ասում է, թո՛ղ Շուշանը ուսումնարան գնա։

— Ճի՞շտ, ուրախացած բացագանչեց Հեղինեն։

— Շուշանս ճիշտ է ասում, հայրը համաձայն է։

— Ուրեմն վաղը Շուշանը ուսումնարան է գնում։ Այստեղ մեզ մոտիկ ուսումնարան կա, կխնդրեմ, որ ընդունեն։

— Հայրիկս ասաց. թող Շուշանն էլ ուսումնարան գնա. մենակ

ես, ասաց, տեղը չգիտեմ, ասաց ես Հեղինեի համար մի ղուպպ կոշիկ կգարեմ, թող տանի. ես այնպես հիվանդ էի, երբ հայրիկս ասաց, լավացա. բայց գիտեմ, ինձ չեն ընդունի։

— Ի՞նչու։

— Նրա համար որ... ես ուսումնարանի հագուստ չունեմ, ես գիտեմ. բոլորին էլ ճանաչում եմ. այսպիսի հագուստով ոչ ոք ուսումնարան չի գնում. խեղճ մայրիկս ո՞րտեղից կառնի։

— Այս կապոցը տեսնո՞ւմ ես, ի՞նչ կլինի այստեղ։

— Չգիտեմ։

— Ապա առ, բա՛ց։

Շուշանիկը արագ բացեց կապոցը և հանկարծ կանգ առավ։

— Ի՞նչ ես զարմանում, փոքր քրոջս հագուստն է, քեզ համար եմ բերել. ա՛յ, տեսա՞ր, հագուստ էլ ունես։

— Մայրիկ, տես, ասում է ինձ համար է բերել այս հագուստը. ես պիտ հագնեմ, իսկ ձեր հայրիկը—չի բարկանա, այնպես չէ՞... ի՞նչ լա՞վն է ձեր հայրիկը. բայց իմ հայրիկն էլ լավն է. նա փող չունի, կոշկակար է, ասաց, ինձ թողնում է, որ ուսումնարան գնամ։ Նա լսում էր, երբ մորս հետ խոսում էր. նա լաց եղավ. նա ինձ համբուրեց. այնպես սիրում է ինձ, ձեռքս բռնեց, ասաց, ինչ տաք է. ձեռքերս էլ համբուրեց. ասաց, գնամ բժիշկ կանչեմ, մայրիկս չէր թողնում. բայց նա գնաց. խե՜ղճ հայրիկ, գնաց բժիշկ բերեց. մի մե՜ծ մարդ... Ես նրանից վախենում էի. նա չգիտեմ ինչո՞ւ հորս վրա բարկացավ, բղավեց։ Երբ բժիշկը գնաց, մայրիկս շատ լաց եղավ, հայրիկս էլ լաց եղավ. իմ լացն էլ եկավ, հետո... քնեցի...— Մայրիկ, ախր հայրիկս չդիտի, որ ես ուսումնարանի հագուստ ունեմ. որքան կուրախանա։ Ձեր հայրիկը դիտե՞, որ ինձ եք տալիս։

— Մենք պատմեցինք նրան. նա քեզ շատ սիրեց. ասաց ուսումնարանի վարձն էլ կտամ, դրքերի փողն էլ, ուսումնարանի հագուստն էլ այնպես, որ դու ոչ մի բանի հոգ չես տանի։

— Ուսումնարանին փո՞ղ են տալիս, ախ ես այդ չգիտեի, գլուխս այնպես ցավում է... եթե մեռնեմ, այն ժամանակ ոչի՞նչ, ոչի՞նչ էլ հարկավոր չի... Ա՜խ ինչ վատ եմ...

Հեղինեին կանչեց տարավ իրենց սպասուհին, վախենում էին վարակվելուց, բժիշկն ասել էր, «թոքերի բորբոքում է»։

Շուշանիկը մնաց մենակ։ Խոհանոցում մայրը աշխատում է,

կրակ է անում, ածուխը լցրել է քուրան, փչում է, ուզում է կրակը ավելի բորբոքի. նրա մռայլ աչքերից մեկ-մեկ կաթում են արցունքի կաթիլներ, ընկնում է թեժ կրակի վրա, թշշում ու կորչում։ Ինքը, կոշկակարը, կուշ է եկել, ավելի է կռացել. մկանունքները դուրս են ցցվել, աչքերը խորացել, փոս ընկել, հոնքերը եկել ծածկել նրանց. նա ջղաձգական ցնցումներով այս անկյունից այն անկյունն է ընկնում, կարծես մի բան է որոնում. մեծ աշխատանքի մեջ է։ Տավարի փափուկ լղար միս է գնել. այդպես է բժիշկը հրամայել. «երկու ֆունտ միս, ութ բաժակ ջուր, այնքան եփել, որ երկու բաժակ մնա»։ Ահա կրակի վրա միսը եփում է. նա մի անգամ չափել է, դեռ 4 բաժակ ջուր կա. դեռ շատ պիտի եռա։ «Ահ, ինչ ո՞ւշ է այդ ջուրը քաշվում. ե՞րբ պիտի երկու բաժակ մնա». մտածում է կոշկակարը, շուտ-շուտ նայելով կաթսային։ «Մսաջուր, մսաջուր, միայն մսաջուր պիտի տալ. ո՞վ գիտե ի՞նչ եք տվել, ձեր աղջիկը չի ապրի նրա դրությունը անհուսալի է, երբ դանակը ոսկորին է հասնում, նոր եք գալի ինձ մոտ». բղավել է նրանց վրա բժիշկը ու կրակ է գցել ծնողների սիրտը։ Այժմ նրանք բուլիոնի շուրջը պտտվում են, կարծես դա պետք է իրանց աղջիկանը փրկի. կարծես այդ փրկարար հեղուկից է կախված նրա կյանքը։ Նրանք երբեմն իրար ետևից դողդողալով մտնում են աղջիկա մոտ, ապա նորից խոհանոց, նորից ածուխ են ավելացնում ու բորբոքում կրակը։

Այդ միջոցին Շուշանիկը նորից բացեց կապոցը, նայեց հագուստին, կոճակներին, գրպանին. ապա գոգնոցն ու ուսնոցը ընտրեց, ցանկացավ մի վայրկյան իրան երևակայել այդ հագուստի մեջ. գիրքը թևի տակ, ուսումնարան գնալիս, բայց դա նրան չհաջողվեց. միտքը պղտորվում էր. գլուխը լի էր այլատեսակ պատկերներով, ահռելի՜, տխո՜ւր։ Մեծ դժվարությամբ նստեց. ապա սկսեց հագնել նոր զգեստը։ Երբ ուսնոցը գցեց ուսերին, կարծես նա իրեն լավ զգաց, գոգնոցն էլ կապեց և զգուշությամբ իջավ ցած. մի ձեռքով հենվեց պատին, մյուս ձեռքով գրքերը առավ թևի տակ. ապա պատե պատ բռնելով հասավ դռներին. դուռը բաց արավ ու անցավ դուրս։ Նրա ոտքերը ծալվում էին, գլուխը պտտվում էր, բայց ուրախ էր, անչափ ուրախ. նա նայում էր իրեն, գրքերին, և թվում էր, որ ահա ուսումնարան է գնում... Մի քանի քայլ էլ արավ. ահա և խոհանոցը, նա իր ամբողջ ուժերը

հավաքեց, ուզում էր դուռը բաց անել, գոչել «Հայրիկ ջա՛ն, տե՛ս ես ուսումնարան եմ գնում»։ Բայց դեռ շնչին չհասած, աչքերը մթնեցին, երերաց, տատանվեց ու վայր ընկավ...

Ծնողները լեղապատառ դուրս վազեցին, բայց իրենց աչքերին չէին ուզում հավատալ. գրքերը ամուր բռնած՝ անշնչացած ընկած էր իրանց աղջիկը։ Նրանք ճչացին. նրանց ձայնը երկինք հասավ. հարևանները ցնցվեցին, ամբողջ բակը հավաքվեց, բայց վշտից խելագար ծնողներին չկարողացան մխիթարել։ Շուշանի անմեղ, մանկական փոքրիկ ու վտիտ մարմինը ուսումնարանի հագուստով, գրքերը թևի տակ, դրեցին հողի մեջ։

ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐ

Սուրիկն ու Սերգոն շատ էին սիրում իրար։ Սերգոն դռնապանի որդի էր, իսկ Սուրիկը հարուստ տանտիրոջ։

Սուրիկը հազիվ վեց տարեկան կլիներ, որ մի անգամ ծառից հոճվելիս ցած ընկավ, իսկ Սերգոն, որ նրանից մի տարով մեծ էր, գրկեց նրան, տարավ իրենց ներքնահարկ բնակարանը, ուր վաթթեց և իր ունեցած միրգն ածեց նրա առաջ։

— Կեր, Սուրիկ ջան, խնձորի շիր է. հայրիկս է տվել։ Ոտդ շա՞տ է ցավում։

Դռնապանի տղան ամեն կերպ աշխատում էր հանգստացնել ընկերոջը. երբ Սուրիկի մայրը ներս է մտնում, աչքերին չի հավատում, տեսնելով մի այդպիսի դգվանք ու խնամք Սերգոյի կողմից։

Սուրիկի մայրը համբուրում է Սերգոյին, ապա երեքով բարձրանում են Սուրիկենց տունը։

Այդ օրվանից Սուրիկի ծնողները սկսեցին Սերգոյին իրենց որդու ընկերն համարել։

Փոքրիկ ընկերներն ամբողջ օրերով միասին էին լինում։ Բայց մի անախորժ դեպք պատճառ դարձավ երեխաներին բաժանվելու։

Սուրիկը հիվանդացավ բկացավով. պարզվեց, որ նա վարակվել է դռնապանի տղայից։

Թեև անցավ թեթև, (մի տասն օրից Սուրիկը ոտի կանգնեց) բայց, այդ օրվանից ծնողներն արգելեցին նրան մոտենալ Սերգոյին։

Սուրիկի հայրը կանչեց դռնապանին ու խրատական տոնով

սկսեց «համոզել» նրան, որ Սերգոն չի կարող Սուրիկի ընկերը լինել «թե ամեն մարդ ոտն իրա վերմակի չափով պիտի մեկնի», թե երեխան վարակվել էր Սերգոյից, բժիշկները հազիվ ազատեցին նրան... Այդպես չի կարելի, և այլն։

Դռնապանը ոչինչ չասաց։ Նա լուռ ու տխուր վերադարձավ տուն, երեխային առավ գիրկը ու աչքերից արցունք թափելով ասաց.

— Նրանք հարուստ են, տղա՛ս, մենք աղքատ, էլ չբարձրանաս դու նրանց մոտ։ Սուրիկը լավ տղա է, բայց նրա հայրը... չի ուզում...

Տան տերն՝ էլ հանդիմանում է իր տղային.

— Դու «գվորնիկի» տղայի ընկե՞րն ես, այդ փողոց մաքրողի կեղտոտ տունը ոտք չպետք է դնես։ Տե՛ս, աչքս չտեսնի քեզ նրանց հետ։ Խաղալ ես ուզո՞ւմ, ա՛յ, Վարդանը, Գրիշան, եղիր նրանց հետ ինչքան ուզում ես. նրանք հարուստ, քեզ հավասար ընկերներ են։

— Հայրիկ, Սերգոն շատ լավ տղա է։ Նա այնքան բարի է՝... Ա՛յ, Վարդանն այնպես վատն է... Երբ ճոճանակի վրա խաղում էի՝ նա ինձ այնպես հրեց, որ քիչ էր մնում ծառին դիպչեի... Սերգոն վրա հասավ, բռնեց, աղատեց ինձ։

— Իսկ ես ասում եմ, որ դու միայն նրանց հետ կարող ես խաղալ։

Երեխաների համար ծանր էր բաժանվել իրարից։

Նրանք չէին հասկանում, չէին ըմբռնում իրանց ծնողների վարմունքը և պահանջը։ Նրանց մանկական հոգին դեռ անարատ էր ու զգայուն։

Մի քանի օր անցած՝ իրանք էլ չզգացին թե ինչպես նորից մոտեցան իրար։

— Ես ծածուկ եկա,— ասաց Սուրիկը,— քեզ համար այնքան ընկույզ եմ բերել, այնքան կանֆե՛տ...

— Ես էլ քեզ համար չիր եմ պահել. գնանք մեզ մոտ. հայրիկս տանը չէ։

— Գնանք, սիրով համաձայնվեց Սուրիկը։

— Գիտես, իմ հայրիկն ասաց, որ դու փողոցի տղա ես... Ես հետո այնքան լաց եղա՞...

— Իմ հայրիկն ասաց, որ դու լավ տղա ես, բայց քու հայրը

հարուստ է, մենք աղքատ, և դրա համար մենք չպետք է իրար հետ խաղանք։ Բայց մենք էլի առաջվա պես միասին կլինենք, չէ՞, Սուրիկ։

— Իհարկե, Սերգո։ Գիտե՞ս, հայրիկս ու մայրիկս գնացին ուրիշ տեղ, ինձ ասացին, որ Վարդանին կանչեմ, բայց ես վազեցի քեզ մոտ։ Քեզ համար այնքան բան եմ պահե՛լ...— բացագանչեց Սուրիկն ու Սերգոյի ձեռքից ամուր բռնած տարավ իրանց տուն։

— Նստիր, ես քեզ համար քաղցրավենի եմ պահել։ Ապա նա ափսե-ափսե բերեց դարսեց։

— Մայրիկս է եփել. կեր, տե՛ս ինչ քաղցր է։

— Տե՛ս ինչքան նոր-նոր խաղալիքներ ունեմ. սա արջ է, սա ուղտ է, օ՜, ինչքան երկար վիզ ունի. սա փոքրիկ սավառնակ է։ Որ մեծանամ, հայրիկս մի իսկական սավառնակ կառնի և մենք երկուսով կթռչենք։

— Իմ հայրիկն էլ... դուրս թռավ Սերգոյի բերանից ու կանգ առավ. նա զգաց, որ իրանք աղքատ են, սավառնակ գնել չեն կարող ու լռեց։

Իսկ Սուրիկը ոգեւորված խոսում էր.

— Կթռչենք միասին բա՜րձր, բա՜րձր... սարերի վրայից, հեռո՜ւ-հեռո՜ւ քաղաքներ կտեսնենք։

Սերգոն տխուր էր «աղքատության» թույնը մուտք էր գործել նրա մատաղ սիրտը... Նայում էր շուրջը լցված խաղալիքներին ու իր հնամաշ կոշիկներին և մի դառն ցավ զգում։

— Սերգո ջան, ես էլի շատ խաղալիքներ ունեմ. հայրիկս խոստացել է փոքրիկ հնծանիվ գնել. միասին կնստենք, պտույտներ կանենք... հա՞...

— Սուրիկ ջան... մութն է արդեն, հայրիկդ կգա՝ կբարկանա ես գնամ։

— Մի գնա, տե՛ս, անցյալ օրն իմ ծննդյան տոնին հորեղբայրս բերեց, փոքրիկ շնիկ է. երբ զսպանակը սեղմում ես՝ հաջում է։

Սերգոն ամեն ինչ մոռացավ. զսպանակը սեղմեց, շնիկը բերանը բաց ու խուփ անելով սկսեց հաջել. «հաֆ-հաֆ-հաֆ»։

Երեխաներն ուրախ քրքջացին։

Հարևան սենյակից լսվեց թեթև շշուկ ու ոտնաձայն։

— Վա՛յ, հայրիկդ է, ի՞նչ անենք,— վախեցած գոչեց Սերգոն։

— Մի վախենար, ես կգնամ նրա մոտ, դու կամաց դուրս կգնաս։

Երեխաները լարված սպասում էին, բայց հայրը չէր կանչում իսկ աղմուկն ավելի ու ավելի լսելի էր դառնում։

Նրանք տատանման մեջ էին։

— Սուրիկ ջան, արի կամաց դռան արանքից նայենք։

Երեխաները ոտի ծայրերով մոտեցան դռանը։

— Վայ, ուրիշ մարդ է,— վախեցած գոչեց Սուրիկը։

— Սուս,— մատները մոտեցնելով շրթունքներին գոչեց Սերգոն,— ձայն մի հանի. գող է մտել ձեր տունը։

— Վա՛յ, մայրիկ ջան,— լացակումեց Սուրիկը։

— Սուս, ասում եմ քեզ. ոտքերի ծայրով կամաց հետևիր ինձ։

Սենյակից դուրս դալուն պես, Սերգոն վազեց, դլխավոր մուտքի դուռը փակեց բանալիով։

— Տեսնենք այժմ որտեղի՞ց դուրս կգա,— բացագանչեց Սերգոն ուրախացած։

— Ի՞նչ անենք հիմա,— լաց լինելով գոչեց Սուրիկը։

— Սպասիր, Սուրիկ ջան, մտածենք... Հա, հայրիկս փողոցում պահապան է կանգնած, գնամ կանչեմ նրան։

— Ես մենակ վախենում եմ։

— Լավ, միասին գնանք։

Դռնապանը մի քանի ոստիկաններով իսկույն շրջապատեց տունը։ Ոստիկանապետը դողին արդեն բռնել և արձանագրություն էր կազմում, իսկ գողը մի անկյունում կուչ եկած՝ դողում էր։

Այդ միջոցին աստիճաններից հանդիստ բարձրանում էր տանտերը։

— Դուք էլի միասին ե՞ք,— գոռաց նա,— կորի՛ր այստեղից...

— Հայրիկ, մենք...

Երեխաներն ուրախ-ուրախ քրքջացին...

— Մենք գող ենք բռնել, դնա տե՛ս...

Տանտիրոջ գույնը թռավ, հևիհև բարձրացավ։

Ամեն ինչ պարզ էր, տանտերը ապուշ կտրած կրկնում էր «շնորհակալ եմ, շնորհակալ եմ»։

— Շնորհակալ եղիր դռնապանի որդուց. իսկ դու ուզում էիր նրան վնասել,— ասաց արձանագրություն կազմողը։

— Ես... ես... շփոթված կմկմաց տանտերը... ու գլուխը ամոթից կախեց ցած։

Սուրիկն ու Սերգոն ընդմիշտ անբաժան մնացին և շարունակ հիշում էին անցյալը, թե ինչպես անիծված հարստությունը փորձում էր մտերիմ, սիրող ընկերներին բաժանել իրարից։

ՆՈՐ ՏՈՒՆԸ

Քաղաքի ծայրամասում, հատ ու կենտ մի քանի խարխուլ ու խոնավ տներից մեկում ապրում էր վագոնավար Քերոբը։

Նա վաղ առավոտից գնացել էր աշխատանքի։ Նոր ստացած կոկ ու գեղեցիկ վագոնի ղեկը ձեռքին, սրընթաց թռչում էր քաղաքի ոլորապտույտ փողոցներով։

Էլեկտրական մոտորի հսկայական ուժը, փափուկ ու դյուրաշարժ մեխանիզմն աշխուժություն էին տվել Քերոբին։

Նա լարված աշխատում էր։ Մի քանի մեծ պտույտներից հետո հասավ նորից տրամվայի կայանը և, երբ ուզում էր վագոնը կանգնեցնել, հանկարծ լսեց մի ծանոթ ձայն։

— Հայրիկ,— վազեց նրան ընդառաջ իր 12 տարեկան աղջիկ՝ Հասմիկը։

Հայրը մինչ զարմացած նայում էր, երեխան ծոցից հանեց խնամքով ծալած մի թուղթ ու մեկնեց հորը։

— Ահա, բերել եմ մեր նոր բնակարանի «օրդերը»։ Մայրիկն ուղարկեց։

Նրա այտերը կարմրել էին, աչքերը փայլում էին ուրախությունից։

— Հայրիկ, ամբողջ դիշեր չեմ քնել,— ավելացրեց Հասմիկը,— դու խոստացար... այսօր կիրակի է... առավոտը վաղ գնացել ես... ես եկել եմ... որ...

Հայրը հաղիվ կարողացավ թուղթն առնել աղջկա ձեռքից. ոտով սեղմեց զանգի կոճակը. սիրալիր հայացք ձգեց աղջկա վրա, և վագոնը թռավ առաջ։

Տանը մայրը և բոլոր երեխաները սպասում էին Հասմիկին, բայց նա չէր գալիս։

Հասմիկը մնխվել, կպել էր իր տեղը և անթարթ նայում էր վագոնի ետևից։

— Ախր հայրիկը ոչինչ չասավ, թուղթն առավ, ժպտաց ու թռավ... Գնամ տուն ի՞նչ ասեմ,— մտածում էր նա։

Հասմիկը մնաց այնպես կանգնած և սպասեց այն վագոնին, որի վրա աշխատում էր իր հայրը։

Ահա մոտեցավ վագոնն ու կանգ առավ։ Աղջիկը մոտենալով վագոնի աստիճաններին, դիմեց հորը։

— Հայրիկ, գնամ տուն ի՞նչ ասեմ. ե՞րբ ենք տեղափոխվում, որտե՞ղ է մեր նոր տունը։ Այնտեղ անհամբեր սպասում են մեզ։

— Ահա, այն մեծ սպիտակ շինության մեջ, աղջիկս, մի փոքր էլ սպասիր,— շտապ պատասխանեց հայրն ու արագ շարժեց վագոնի ղեկը։

Հասմիկը հայացքն ուղղեց սպիտակ տան կողմը, ուզեց վազել, բայց միտքը փոխեց։ Նա սպասեց այդտեղ, մինչև որ հայրը վերադառնար։

Հայրը եկավ, իջավ վագոնից ու մի քանի րոպեից հետո նրանք արդեն նոր բնակարանումն էին։

Ամեն ինչ նոր էր Հասմիկի համար, թարմ, գեղեցիկ։ Ահա իրանց պատշգամբը՝ լայն, ընդարձակ, սենյակները կոկ, պատերի վրա գեղեցիկ նկարված, բարձր առաստաղ։ Նա վազեց խոհանոց, մի անկյունում երկաթապատ քուրա, մյուս անկյունում ջրի ծորակ, լվացարան։

— Ինչ լավ է,— գոչեց նա ու շտապ իջավ ցած; վազեց տան առաջ ձգված ընդարձակ ծաղկանոցը։

Նա իր ամբողջ կյանքում այդպիսի ծաղիկներ չէր տեսել. ոլորապտույտ ճեմելիքներով վազում էր առաջ, կարծես անվերջ ու անծայր էր այդ ամենը...

Ահա մեծ հրապարակի վրա թավ կանաչի ու ծաղիկների մեջ մի հսկա արձան։

Հենց առաջին վայրկյանից նա մեխվեց իր տեղը։ Ապա կարդաց,— Լենին,— ու բաբախեց նրա սիրտը։

Նրա մանկական պարզ ու հստակ աչքերը գամվել էին արձա-

նին։ Որքան սքանչելի էր նա այդ ժամին։ Ի՞նչ էր մտածում այդ մանուկը, ինչո՞ւ էր իր հայացքը բևեռել այդ արձանին... Ի՞նչ էր զգում նա, ինչո՞վ էր պաշարված նրա ուղեղը,— ինքն էլ չգիտեր... Սմենն ինչ մոռացել էր, ամենն ինչ թռել էր նրա գլխից, այդ բրոնզյա հսկա կերտվածքը կաշկանդել նրան։

Մի ներքին հույզ, մի ներքին ջերմություն պատել էր նրան ու նա, իր ամբողջ էությամբ լարված, աչքերն անթարթ, ձեռքերն անդիտակցաբար մեկնած, խոհուն հայացքով դիտում էր։

Արձանը, կարծես, այն խորհրդավոր լռության մեջ դուրգուրում, փայփայում էր նրան...

Շատ էր լսել, շատ էին պատմել Լենինի մասին, շատ անգամ էր նայել նրա պատկերներին, բայց այսօր նա, անհուն բերկրանքով լցված, կարծես նոր էր ըմբռնում, նոր էր հասկանում նրա վեհությունը։

— Հասմիկ,— լսվեց հոր ձայնը։

Նա ցնցվեց։

— Գալիս եմ,— դոշեց նա, բայց տեղից չէր կարողանում շարժվել։ Արձանը դերել, կաշկանդել էր նրան։

— Ա՜հ, դու այստե՞ղ ես։

— Հայրիկ, դիտե՞ս, Լենինի արձանն է...

— Ասա «մեր» Լենինի,— շեշտեց հայրն ու երկուս ձեռքով աղջկանը բարձրացրեց վերը։

— Նայիր, լավ նայիր. ո՞վ տվեց այս հոյակապ տունը, ո՞վ ազատեց մեզ այն խոնավ գետնափոր տնակից... Նրան ենք պարտական...

— Այժմ գնանք, մեր իրերը փոխադրենք։

Հայր ու աղջիկ շտապեցին տուն։

Ինչքան ողորմելի թվաց Հասմիկին իրենց հին բնակարանը։

«Ինչպե՞ս են նրանք կարողացել ապրել այս ներքնատանն այնքան երկար տարիներ» — մտածում էր նա, կապոց անելով իր դպրոցական իրերը։

Քույր ու եղբայրները հավաքվել էին նրա շուրջը։

— Դե՛, պատմիր, պատմիր մեր նոր տան մասին. նա սրանից լավն է, չէ՞։

— Ա՛յ, կգնանք, կտեսնենք. մե՞ծ տուն... գեղեցիկ այգի...

հիանալի ծաղկանոց... ու մեջտեղը... Հիմա չեմ ասի այնտեղ բոլորը, բոլորը ձեզ ցույց կտամ...

Ահա և նոր տունը։

Հայր ու մայրը չէին կարողանում երեխաներին զսպել։

Նրանք վազվզում էին սենյակից սենյակ, խոհանոցը, պատշգամբը։

Ամեն ինչ նոր էր նրանց համար, ամեն ինչ թարմ ու գեղեցիկ։ Որպիսի՜ հրճվանք ու ուրախություն։

— Հասմիկ, սա ի՞նչ է։ Հասմի՜կ, Հասմի՜կ,— բողոքում էին նրանք ու զանազան հարցեր տալիս իրենց քույրիկին։ Իսկ նա հպարտ քայլվածքով առաջ էր գնում ու ծանր ու բարակ պատմում...

— Սա մեծ ավազան է, մեջտեղը շատրվան... այստեղ ապրում են ոսկե ձկները. ա՛յ, տեսնո՛ք, տեսնք, նրանք լողում են...

Այս բարձր սյունները էլեկտրականության համար են։

Սա էլ մեր մեծ բաղնիքն է։ Այս բոլորը բանվորների համար է շինված։

— Այս ճեմելիքը, թե գիտեք, ո՞ւր է տանում։ Դե, այժմ հանգիստ մնացեք. կանգնեցեք զույգ-զույգ ու շարություն չանեք։

Երեխաները լրջացած անցան մի քանի ոլորապտույտ շավիղներով, ու նրանց առաջը բացվեց ծաղկազարդ մեծ հրապարակ։

— Ահա մեր մեծ պապի արձանը,— շեշտելով յուրաքանչյուր բառը, արտասանեց Հասմիկը։

Մինչ երեխաները լուրջ ու անթարթ նայում էին արձանին, ամենափոքրիկը՝ հոկտեմբերիկ Լիլիկը, ձեռքը մեկնեց առաջ ու աչքերը լայն բացած՝ թոթովեց.

— Լենի՜ն...

Հասմիկը գրկեց. ամուր-ամուր համբուրեց իր երեքամյա քրոջը։



ՆԱՋ, ՆԱՐԻ, ՆԻՈՉԱ

(Չինական պատմվածք)

Նաջը, Նարին ու Նիոշան հարազատ քույրեր էին։ Ապրում էին մեղանից շատ հեռու աշխարհում։

Սրանք էլ աննման գեղեցկուհիներ, երեքն էլ նորահաս։

Այն երկիրը դեռ բռնակալների ձեռքին էր. ժողովուրդը խեղճ ու աղքատ, բուրժուաները հարուստ, շռայլ։

Մի օր այն երկրի մեծ իշխանն իր շքախմբով, նժույգներ նստած, որսի գնաց։

Հեռվից, սարի լանջին, ծաղիկների մեջ ինչ որ շարժումներ նկատվեցին։

— Նշնիկներ են,— ասաց նրանցից մեկը.

— Անտառի հավքեր,— ասաց մյուսը.

— Ոչ, վայրի այծյամներ,— պնդում էր երրորդը։

— Ինչ էլ որ լինի, ձեռքից բաց չթողնեք... բռնեցեք և ողջ-ողջ բերեք ինձ մոտ,— հրամայեց իշխանը։

Սպասավորները թապիներին ու բարակներին գցեցին առաջ. շքախումբը դարան մտավ։

Նվ ինչ զարմանք, երկու փոքրիկ երեխաներ էին ոլորապտույտ շավիղներով առաջ գնում։

Մի ակնթարթում նրանց բռնեցին ու բերեցին իշխանի մոտ։

Իշխանի աչքերը փայլեցին.— Որքան նուրբ, սքանչելի գեղեցկություն,— գոչեց նա հիացած։

— Ո՞վ եք դուք.

— Բեռնակիր Չին-Չվանի աղջիկները։

— Ո՞ւր էիք գնում։

Մեծ քույրը շփոթվեց, բայց փոքրիկը պարզ մանկական հայացքով նայեց իշխանին...

— Գնում էինք հայրիկիս գործարանը. ճանապարհին նայում էինք կռունկներին, նախանձում։

— Ի՞նչու էիք նախանձում կռունկներին։

Նաջը ձեռքը մեկնեց դեպի հեռուն.

— Այնտեղ մի նոր աշխարհ կա, շատ սիրուն ու գեղեցիկ աշխարհ, որտեղ իշխաններ, հարուստներ ու տերեր չկան. այնտեղ մեզ պես աղքատներ ու թշվառներ էլ չկան. բոլորն էլ հավասար են, բոլորն էլ ուրախ ու երջանիկ... կռունկները թռչում էին դեպի այն կողմը։

— Ո՞վ է ձեզ ասել այդ,— զայրույթը զսպելով դուշեց իշխանը.

— Մեր մեծ քույրը՝ Նիոշան...

— Ո՞րտեղ է նա.

— Նա աշխատում է մեծ գործարանում, միայն գիշերներն է տուն գալիս հայրիկիս հետ։

— Հայրդ է՞լ է այնտեղ աշխատում։

— Այո. նա բեռներ է շալակում...

— Իսկ դուք, դուք իմ սիրելիներս, ի՞նչ եք անում։ Ձեզ պես լավ որս ես իմ կյանքում դեռ չեմ ունեցել...

Նարին, որ հազիվ 13 տարեկան էր, բռունցքը սեղմեց, իսկ 10 տարեկան Նաջը իր կրակոտ աչքերով նայեց իշխանին, մի քայլ առաջ եկավ և ձեռքի աղատ շարժումով սկսեց խոսել...

— Մեր մեծ քույրն ասաց, որ շուտով, շատ շուտով կարմիրները սիտի դան...

— Ովքե՞ր են կարմիրները,— կատաղությունը զսպելով դուշեց իշխանը։

— Նրանք մե՞ծ, շատ մե՞ծ մարդիկ են. նրանք խեղճերին ու աղքատներին շատ են սիրում... Այնքան լավն են...

— Գնանք, Նաջ,— քրոջ թևից քաշեց Նարին, նեղսրտած։

— Սպասեցեք, փոքրիկներս... է՞յ, սեղանապետ։

Մի կողով ամենաընտիր միրգ դրվեց երեխաների առաջ։

— Տեսնում եք, այս ամբողջ լիքը կողովը ձերն է... Դե, ասացեք ովքեր են լինում ձեր տանը, քանի հոգի են...

— Մեր տանը ոչ ոք չի լինում...

— Ո՞ւր է գնում ձեր քույրը, որտե՞ղ են նրանք հավաքվում։

— Մենք քնած ենք լինում, երբ հայրիկս ու քույրս գալիս են. առավոտյան մեզ համբուրում ու նորից գնում են աշխատելու։

— Ինչո՞ւ չեք վերցնում, այս բոլորը ձերն է. տեսեք ինչ լավ մրգեր են։

— Շնորհակալ ենք։ Թույլ տվեք մեզ գնալու տուն, մայրիկս կանհանգստանա...

— Ես ձեզ իմ կառքով կտանեմ։ Այ, տեսնում եք, ձիերը լծած սպասում են մեզ.— իշխանն անցավ մի կողմ և դառնալով շքախմբին, լի զայրույթով գոչեց.

— Սև օձն արդեն մուտք է գործել մեր երկիրը... Այդպե՞ս եք ծառայում ինձ...

— Տեր, ինչ եք հավատում երեխաներին, մենք գործի կանցնենք և վաղն արևը դեռ մայր չմտած, բոլորը գլխատված կլինեն, իսկ մեծ քույրը՝ Նիոշան, առանց գլխից մի մազ պակասելու, կլինի քո ամենալավ որսը,— խոսեց մեծ մանդարինը։

— Երդվում եմ գլխովս,—ասաց ծերունի խորհրդականը,— որ վաղը երեքն էլ քո հրամանին կսպասեն... Բայց այժմ խոհեմությունը պահանջում է, որ երեխաներին թողնենք ազատ, որպեսզի կասկածի առիթ չտա նրանց բացակայությունը, չէ՞ որ ժողովուրդն առանց այն էլ հուզված է...

— Թող իշխանը չանհանգստանա,— խոսեց մի երիտասարդ սպա,— միայն թե մենք հրաման ունենանք...

Իշխանն ընկավ մտածմունքների մեջ։ Մի անորոշ երկյուղ, որ մինչ այդ նա չէր զգացել, այժմ պատել էր նրա սև հոգին։

Մանուկների անկեղծ ու պարզ ասածների մեջ նա ինչ-որ ճշմարտություն էր տեսնում...

— Ժամանակ չպետք է կորցնել, իշխան, օձի գլուխը պետք է քնումը ջախջախել,— միջամտեց մի ուրիշը։

— Համաձայն եմ։ Անխնա ոչնչացնել այդ լրբերի որջը,— ասաց իշխանը և աղջիկներին վերցնելով իր փակ կառքը, սլացավ դեպի պալատ։

Մայրը դուրսը կանգնած սպասում էր երեխաներին։ Հանկարծ նրա մտավ Նիոշան։

— Հայրիկիս կասես ճիշտ 12-ին, հասկանո՞ւմ ես, 12-ին... Նա գիտի։ Ես գնում եմ։

— Սպասիր, երեխաները չեն եկել...

— Գիտեմ, գիտեմ...— ասաց ու բռունցքը սեղմած դուրս վազեց։

Ամբողջ ոստիկանությունը ոտի էր կանգնել։

Նաջն ու Նարին իշխանի պալատումն էին, իսկ մայրը՝ նրա խոնավ ու մութ զնդանում։

Լուրը կայծակի արագությամբ տարածվեց ամբողջ քաղաքում։ Հարուստները հրճվում էին, իսկ աշխատավոր ժողովուրդը կատաղի զայրույթով սպասում էր դրսի վրկարար օգնությանը։

Նրանք հուզված, տենդագին դրության մեջ սպասում էին կես գիշերին։

Հանկարծ կատաղի որոտումներ լսվեցին։ Ժողովուրդը քաղաքի բոլոր ծայրերում ոտի կանգնեց։

— Կորչի՞ բռնակալը,— աղաղակում էին նրանք։

Կարմիր դրոշը Նիոշայի ձեռքում ծածանվում էր ամբոխի գլխի վերև։

Զորքն անցավ սպստամբների և ժողովրդի կողմը։ Միայն ոստիկաններն էին, որ դեռ կատաղի կռվում էին։

Մի ուժեղ հարվածով նա էլ ջախջախվեց... Պալատը շրջապատված էր։

— Անձնատո՞ւր եղի՛ր, անձնատո՞ւր եղի՛ր...— գոռում էր ամբոխը։

— Տվեք մեր քաջ առաջնորդ՝ Նիոշայի քույրերին,— աղաղակում էին կանայք, ոգևորված ու միաձույլ։

Պալատի պատշգամբում երևաց իշխանի խորհրդականը և ձեռքը բարձրացրեց։ Ժողովուրդը մի պահ լռեց։

— Իշխանը պատրաստ է կատարելու ձեր բոլոր պահանջները, միայն թե հեռացեք այստեղից, հակառակ դեպքում, է՛յ, Նիոշա, քույրերդ սրախողխող կլինեն...

Նիոշան նայեց ընկերներին, ապա հորը, հետո նա իր խոր թափանցող հայացքը գցեց ամբոխին...

— Գրո՛հ տվեք,— դոռաց նա դրոշն ամուր բռնած, աչքերի մեջ վրեժ ու կրակ և ընկավ առաջ...

Պալատը տապալվեց։

— Նրա փշատակների մեջ դտան երկու մանուկների սրախողխող մարմինները։

— Նաջ... Նարի... հազիվ շշնջաց վիրավոր Նիոշան ու ընկավ գետին։

Նրա հայրը, իբրև մի հսկա ապառաժ, հաղթական կանգնած՝ նայում էր ամբոխին։ Ապա նա երեսը դարձրեց դեպի իր նահատակ փոքրիկները և նրա հպարտ աչքերի մեջ ցոլացին երկու խոշոր կայծեր...

Աղատագրված ժողովուրդը քաղաքի մեծ հրապարակում մի արձան կերտեց և պատվանդանի վրա դրեց.

«Նաջ-Նարի-Նիոշա»...

ԳՎԱՐԶԻՆԸ

Դեռ փոքր հասակից, մեծ ձգտում ունեի բարձրանալ լեռների գագաթները։ Որքան սարը վիթխարի էր լինում, այնքան մեծ հաճույք էի զգում, ժամերով նայում էի լայն, ընդարձակ հորիզոնին ու հրճվում հրաշագեղ տեսարաններով։

Մեր շրջաններում սար չէր մնացել, որ մի քանի անգամ բարձրացած չլինեի ու ապրած իմ ներքին սփոփիչ հույզերով...

Բայց մեր գյուղի սահմանում կար, «Գվարզին» անունով մի հսկայական ժայռոտ լեռ, որի ահռելի գագաթը, ոչ միայն մենք երեխաներս, այլ մեր մեծերն անգամ սիրտ չէին անում բարձրանալ։

Այդ լեռան մասին տարածված էր մի հրեշավոր լեգենդա։ Իբր թե այնտեղ ապրում են չար ոգիներ, քաջքեր ու պոզավոր սատանաներ. իբր թե Գվարզինը նրանց բունն է։ Հենց որ ժանգառքն ընկնում է, իբր թե սկսվում է նրանց ուրախությունը, քաջքերի հարսանիքները... լսվում են զարհուրելի ձայներ. գայլերի պես ոռնում են, շների պես վնգստում, կատուների պես մլավում-ծվում-ճչում... հոհոռում- քրքջում...

Վայն եկել է, թե մի մահկանացու ընկնի նրանց ճանկը, ասում էին ծերերը, իսկույն խեղդամահ են անում, զարհուրելի կերպով տանջելով։

Ու սրա նման հազար ու մի սարսափելի դեպքեր էին պատմում մեզ. մեր տատերն ու պապերն ասում էին, իբր թե տեսնողներ են եղել, թե ինչպես քաջքերը փախցրել են գյուղի երեխաներից շատերին։

Ամայի, հարթ ու հավասար տարածության մեջ բարձրացած

էր մի հսկայական մեծության քարաժայռ, 1000-ից ավելի մետր բարձրությամբ, 200 մետր տրամագծով։ Շուրջը ոչ մի ծառ, ոչ մի թուփ։ Չորս կողմը մացառներ ու քարակույտեր։ Պատերն ուղղահայաց, ոչ մի արահետ, ոչ մի կածան, որով հնարավոր լիներ բարձրանալ վեր...

- Մենք՝ երեխաներս հեռվից էինք միշտ նայում ու բնչ որ երկյուղ զգալով, փախչում էինք ետ ահռելի քարաժայռից։

***

- Անցել էին տարիներ։

Կյանքը վերափոխվել, հին հասկացողությունները եղյամի պես հալվել, գնացել էին...

Այլևս առաջվա խավար ու տանջված գյուղը չէր. նա հսկա քայլերով առաջադիմել էր։ Ամեն ինչ նոր էր, բայց Գվարզինը մնացել էր նույն ապառաժ ժայռը... նույն, հեռվից սարսափ ազդող հսկա զանգվածը...

Ես այն ծանր օրերին, դեռ մանկական հասակում հեռացել էի գյուղից, ընկել էի օտարության մեջ, մի կտոր հաց վաստակելու համար։

Այժմ նորից վերադառնում էի գյուղ։ Հեռվից երևաց մշուշով պատած Գվարզինը՝ այդ վիթխարի քարաժայռը։ Մեր կառքը պետք է անցներ նրա կողքով։

Վերհիշեցի իմ մանկության սարսափը, թե ինչպես էի դողում, երբ անցնում էի այդ ժայռի մոտերքից... ներքուստ ես ինձ կշտամբում էի, թե ինչ խավարամիտ երեխա եմ եղել ես այն ժամանակ...

Հասանք Գվարզինի ստորոտին։

— Ընկեր Արեգ, մի փոքր կանգ առնենք. Գվարզինին կարոտել եմ, իմ մանկության փուփագն էր, կյանքիս մեջ գոնե մի անգամ բարձրանալ նրա գագաթը... Հը՞, ո՞նց է, էլի քաջքերը հարսանի՞ք են անում այնտեղ,— ներքին հուզմունքս պահելով հարցրի ես։

Իմ ուղեկիցը, որ մի կայտառ կոմերիտ էր, մեղմ ժպտաց ու ձեռքը մեկնելով դեպի Գվարզինը—ասաց.

—' Ես մի քանի անգամ բարձրացել եմ։

— Բայց ի՞նչ ճանապարհով, որքան ինձ հայտնի է, ժայռն անմատչելի է բարձրանալու համար։

— Այո, թեև մեծ դժվարությամբ, բայց երկար և համառ որոնումներից հետո հաջողվեց ինձ գտնել մի մամռապատ արահետ, որը տանում է ուղիղ դեպի գագաթը։

Վաղը պատրաստվում է մեծ էքսկուրսիա, պիոներների հետ ամբողջ օրով լինելու ենք Գվարզինի գլխին։ Նայում էի նրա վառվռուն, կրակոտ աչքերին ու մտածում. որքան ուժ, էներգիա կա մեր նոր սերնդի մեջ։

— Ես էլ եմ գալիս ձեզ հետ...

Երկուսիս հայացքն էլ բևեռվեց Գվարզինին։ Այդ քարաժայռը խրոխտ կանգնած, կարծես իշխում էր իր բարձունքներից թե շրջապատին, և թե մեզ...

Շարունակեցինք մեր ճանապարհը։ Կառքը սլանում էր առաջ։ Իջնում էինք դեպի ձորը, Գվարզինն աննկատելի ծածկվեց մեր աչքերից, թեև նա այլևս չէր երևում, բայց տպավորությունն այնքան խորն էր, որ ամբողջ միտքս կլանել էր նա... ինչպես պետք է բարձրանամ իմ երազած ժայռի գագաթը։ Արդյո՞ք առաջվա պես մանկական հույզերով պետք է հրճվեմ, թե՞ դա մի սովորական էքսկուրսիա պիտի լինի ինձ համար։

Այդ մտածմունքներով տարված, հասել էի գյուղը։

Ուղեկիցս ինձ տարավ ուսումնարանին կից շենքը, ուր հանրակացարանում հատկացրել էին ինձ մի սենյակ։ Պատերը զարդարված էին զանազան լոզունգներով, իսկ գրասեղանի ճակատի պատին Լենինի և Ստալինի մեծադիր պատկերները։

— Սա մեր յոթնամյա դպրոցին կից հյուրանոցի սենյակներից է,— ասաց կոմերիտ ուղեկիցս։

Սենյակումս շրջում ու մտածում էի... Կոթի-գյուղ ու հյուրանոց։

Մինչ ես մնացել էի սառած կանգնած, Արեգը, երևի զգալով իմ ներքին ապրումները, խիստ-խիստ նայելով, ասաց.

— Մենք դեռ շատ հետ ենք մնացել, ընկեր Խաչոմյան. մեր հանդերի այնքան հարուստ պղնձի հանքերը դեռ չեն աշխատում, ձորի մեծ կամուրջը չենք ավարտել։ Մեր կոլխոզնիկների համայնական տները, հացամբարները, գոմերը և ուրիշ շատ բարեկարգություններ հրապարակի վրա են։ Ահագին պլաններ ունենք կա-

տարելու։ Հույս ունենք երկրորդ հնգամյակի վերջում այդ բոլորն ավարտել։ Դե հարգելի ընկեր, այժմ մի լավ հանգստացեք։ Վաղը լուսաբացին, էքսկուրսիա ենք մեկնում Գվարդինի գյուղը,— ասաց նա ու շտապ հեռացավ։

Ակամայից սկսեցի համեմատել հինը, իմ մանկության օրերը, իմ մռայլ, երկչոտ, տատանվող երեխան կյանքը և այսօրվա բուռն եռանդի, անդուլ աշխատանքի, մեր նոր սերնդի պայծառ վերելքը...

***

Դուռս բախեցին։

— Պատրաստվեցեք, ընկեր Խեչումյան, մի կես ժամից գնում ենք։

Աչքերս բաց արի։ Արեգն էր։ Մեր հայացքներն իրար առան, և դա բավական էր։ Նա իսկույն հեռացավ։ Ես տեղիցս վեր թռա։ Իմ մեջ մի նոր եռանդ էի զգում, շարժումներս արագացել էին։ Շտապ թեյ խմեցի ու դուրս եկա սենյակից։

Դիմացի ընդարձակ հրապարակից լսվում էին թմբուկի և փողի ձայներ։ Քայլերս անմիջապես ուղղեցի այն կողմը։

Արևն իր վաղորդյան ջերմ ճառագայթները սփռել էր սարերի գագաթներին, ծառ ու ծաղիկ հուրհրատին էին տալիս, իսկ ներքևում լեռների ստորոտներում, անտառների փեշերին դեռ նիրհում էր մշուշապատ կապույտը... թվում էր դեռ խորը քնի մեջ էին սարերի լանջերն ու ծմակները... Սեղմ ղեփյուռը շոյում էր երեսս, օդը հստակ էր ու դուրեկան։ Լայն կրծքով ազատ շունչ էի քաշում։

Դեռ հեռվից ընդառաջ եկավ Արեգը, բարևեց ինձ ու դիմելով պիոներներին ասաց.

— Ծանոթացեք, մեր համադյուղացի Խեչմանց Մադին։

— Բարև ձեզ ընկերներ,— ասացի ես։

— «Միշտ պատրաստ»,— գոչեցին նրանք միաձայն, ձեռքերը բարձրացնելով վեր։

Վզներին կապել էին կարմիր փոլկապ. բոլորն անխտիր հագնված էին միատեսակ, թե տղա, թե աղջիկ։ Դեղնագույն բաճկոն, նույն գույնի անդրավարտիկ ու գլխարկ։ Մեջքներին կապույտ կտորից կարած պայուսակ, ժապավեններն ուսերից բերած կա-

պած գոտիներին։ Ձեռքերին մի-մի երկար փայտե ձող, երկաթե սուր ծայրերով։

Նրանք կողք-կողքի, կարգով կանգնած, սպասում էին իրենց ղեկավար՝ Արեգի հրահանգին։

Թմբուկները թնդացին, փողերը կանչեցին, մենք գնում էինք ամենից վերջը։ Քիչ հետո լսվեց Արեգի ձայնը.

— «Ազա՜տ»...

Նվագն իսկույն դադարեց։ Երեխաները խառնվեցին իրար։ Մի քանիսը վազելով անցան առաջ, մի-քանիսը եկան շրջապատեցին մեզ։ Հարցեր էր, որ թափվում էին մեր գլխին, բայց մենք էլ մեր հերթին աշխուժացել էինք, մի հարցին պատասխանում, մյուսը՝ թողնում, ինքներս էինք հարցեր տալիս նրանց։

Մեզ թողնում, թռչկոտելով առաջ էին շարժվում... Նռանդը նրանց մեջ այնքան շատ էր, որ չէին իմանում ինչ անեն։

Դրան նպաստում էր եղանակը։ Գարուն էր, նոր արթնացած գարուն։ Ճանապարհի եզերքներին, աջ ու ձախ փռված էին կապույտ մանուշակներ, տեղ-տեղ կարմրին էր տալիս կակաչը... Նոր բուսած թարմ կանաչը, դրա հետ էլ այնքան զովաշունչ, մաքուր, հստակ օդը, թռչունների ծլվլոցը, գարնան ավետաբեր բարաճրզատի կանչը ոգեվորել էր բոլորին...

Երգելով, խաղ ու պարով բարձրացանք Ուչ-Գյուլի բլուրը, մեր դիմացը բացվեց Գվարդինն իր ամբողջ մեծությամբ։

Բոլորիս հայացքը դամվեց նրա վրա, այդ վիթխարի քարաժայռը, անսասան կանգնած, իշխում էր իր շրջապատի սար ու ձորերին։

Նրա այդ հսկայական մեծությունը մի պահ մտատանջության մեջ դցեց պիոներներին։

Նրանք առաջին անգամ պետք է բարձրանային Գվարդինի գագաթը։

Գվարդինի ստորոտում էինք։

— Հա՜նգիստ...— գոչեց Արեգը։

Պիոներները կանգ առան. իսկույն ամեն մեկը եկավ բռնեց իր տեղը։

Երաժիշտներն անցան առաջ ու սկսեցին նվագել։

Երբ նվագը դադարեց, Արեգը ձեռքով նշան արավ. կանգնեցին։

— Ընկերներ... պետք է բարձրանալ մեկ-մեկ. զգույշ և հանգիստ։ Արահետը շատ նեղ է և դիք։ Ձեր ձեռքերի ձողերը օգնության պիտի բերեք։ Տեղ-տեղ՝ հարկավոր է ոստյունների, տեղ-տեղ սողալով։

Ամենադժվարը այս առաջին մասն է. հենց որ հասնենք այն քերծին,— նա ձեռքով նշան արավ դեպի Գվարդինի լանջը,— մի փոքր կհանգստանանք։ Նրանից հետո ճանապարհը բավականին հեշտանում է։

Այժմ նայեցեք, առաջ կբարձրանամ ինքս. ինձանից հետո ընկեր Խեչումյանը. հետո դուք մեկ-մեկ, իրար ետևից։

Նայեցի Արեգին, նայեցի պիոներներին, բոլորի դեմքերը լըրջացել էին, նրանք խոհուն հայացքներով պատրաստ կանգնած էին։ Սիրտս սկսեց բաբախել, ինձ թվում էր նրանց սրտերն էլ էին բաբախում...

— Դե, ընկերներ, հավաքեցեք ձեր բոլոր ուժերը, պետք է հասնենք ամենաբարձր դագաթը.— ասաց Արեգն ու հենվելով իր ձողին մի թռիչքով հասավ մոտ երկու մետր բարձրություն ունեցող ժայռի կրծքին. մի քայլ առաջ անցավ ու դիմելով ինձ ասաց.

— Ընկեր Խեչումյան, հերթը ձերն է։

Ես, չգիտեմ ինչո՞ւ, դանդաղում էի, սիրտ չէի անում, մի կողմից բոլոր երեխաներն էին լուրջ նայում ինձ, մյուս կողմից էլ Արեգը, իսկ դիմացս ահռելի քարաժայռն էր. ճար չկար, պետք է ցատկեի. սիրտ արի ու ինչպես Արեգը՝ իմ սրածայր ձողին հենվելով, մի ոստյունով թռա, կպա ժայռի դոշին։

«Կեցցե», ներքևից գոռացին երեխաները, «քաջն ես», բացագանչեց վերևից Արեգը, ձեռքս ամուր սեղմեց ու հաղիվ լսելի ասաց.— Դու խրախուսեցիր մեր փոքրերին, այժմ նրանք ավելի համարձակ ու վստահ կթռչեն։

— Դե, ընկերներ, այժմ թմբուկներն ու փողերն ամուր կապեցեք ձեր մեջքերին ու բարձրացեք։

Երեխաներն անորոշ դրության մեջ էին, ոչ ոք չէր վստահանում առաջինը բարձրանալ...

— Կիմիկ, Լեննի, ինչ եք կանգնել, հապա՛,— գոռաց Արեգը։

Կիմիկը ձողին ամուր հենվելով, մի ակնթարթում թռավ ժայռին։ Նրան հետևեց Լեննին, սա նույնպես մեծ հաջողությամբ ցատկեց վեր։

Պիոներների դեմքերը փայլեցին, սկսեցին ուրախ-ուրախ բացագանչություններ անել։

Մենք վերևից դիտում էինք։ Նրանք այժմ էլ իրար հերթ չէին տալիս. ամեն մեկն աշխատում էր առաջինը թռչել։ Իրար ետևից շարվել-շար ճիչ ու աղմուկով, ուրախ քրքիջով ցատկում էին վեր։ Ժապավենի պես ձգված ծռռ ու մռռ զիգզագներով, մեր քարավանն առաջ էր շարժվում։ Դեռ լեռան կեսին չէինք հասել, մեր առաջը բացվեց մի լայն հարթություն։

Կարծես առաջուց պատրաստ լինեին հանգստանալու համար։

— Ընկերներ, կանգ առեք,— ասաց Արեգը,—մենք դեռ բավականին ճանապարհ ունենք կտրելու... Ամեն մեկդ ձեր պաշարից մի-մի բան հանեցեք, պետք է ուժ լինի ձեր ծնկներում...

Երեխաները թառ ելան մի-մի քարի։ Սկսվեց նախաճաշը։

Դուք չեք կարող երևակայել, թե ինչ վայրկյաններ էին դրանք մեզ համար... Այն դիտակցությունը, որ ճանապարհը կես ենք արել, հաղթահարում ենք ժայռը և որ շուտով պիտի հասնենք դագաթին... այնպես էր մեզ ոգևորել, այնպիսի բարձր տրամադրության մեջ էինք, որ նկարագրել չի կարելի...

— Դե, բավական է, ճաշվա համար էլ բան թողեք,— ժպտալով ասաց մեր ղեկավարն ու մենք նորից ճամփա ընկանք դեպի բարձունքները։

Այժմ մեր ուղին ուղղաձիգ էր և ավելի հարթ, մենք անցնում էինք նույն շարքով.— Արեգը առաջից, ես նրա կողքին։

Ճանապարհը հեշտացել էր, որքան մոտենում էինք գագաթին, այնքան անհամբեր փին դառնում պիոներները։ Հարցեր էին, որ թափվում էր Արեգի գլխին։

— Ի՞նչ կա գագաթին, հա՞րթ է, թե՞ սրածայր... ո՞րտեղ է եղել քաջքերի բույնը... նրանց հարսանիքները,— ծաղրելով քրքջում էին պիոներները...

Արեգը մեղմ ժպտում ու դիտմամբ լռում էր, նրանց ոչ մի հարցին չէր պատասխանում.

— Համբերություն ունեցեք, ընկերներ. հասնում ենք, ամեն ինչ կտեսնեք, ամեն ինչ միասին կուսումնասիրենք...

Քանի մենք բարձրանում էինք, կարծես բարձրանում էր և ինքը՝ քարաժայռը... թվում էր, թե ոչ ծայր ուներ, ոչ սահման, գագաթը չէր երևվում...

Դարձյալ բավականին ճանապարհ կտրեցինք։ Արեգը նորից կանգ առավ.

— Ընկերներ, սա մեր վերջին պատնեշն է, որը պետք է հաղթահարենք։ Այս կիրճում ժայռերը աստիճան-աստիճան են ու իրարից հեռու։ Ձեր ձողերի վրա հենվելով, փոքրիկ թռիչքներով մի ժայռից պետք է մյուսը թռչեք ու այդպիսով բարձրանաք։

Արեգի ասելն ու մեր կատարելը մեկ եղավ։

Թեթև թռիչքներով սկսեցինք վերև բարձրանալ։

— Մի երկու զիգզագ, և հսկայի գագաթը կլինի մեր ոտքերի տակ,— գոչեց Արեգն ու համարյա վազելով առաջ անցավ։

Մենք հետևեցինք նրան։ Այն գիտակցությունը, որ ահա, ահա հասնում ենք գագաթին՝ ոգևորում էր մեզ։ Տղաներից մի քանիսը սկսեցին երգել։ Երաժիշտներն էլ մեջքներից արձակեցին իրենց թմբուկները ու փողերը...

Այդ իրարանցման մեջ՝ մեկ էլ տեսանք Արեգը մի մեծ ոստյունով թռավ վեր, ու մի կարմիր դրոշ ծածանվեց նրա ծողի ծայրին։

Գագա՞թը... գագա՞թը... լի կրծքով ու պատանեկական խանդավառությամբ գոչեց նա...

Այդ վայրկյանին նա այնքան էր զգացված, որ դառել էր անճանաչելի...

Գագա՞թը, գագա՞թը... ըղավեցին պիոներները ու իրար հերհերելով շտապեցին դեպի վեր...

Արեգն իր սրածայր ձողն ամրացրել էր քարերի մեջ, դրոշն ալի՞ք-ալի՞ք ծածանվում էր...

Միանգամից լսվեց թմբուկների զարկը, փողերի կանչը, տարածվեց երաժշտության ձայնը...

Մի պահ պիոներները մնացել էին լարված դրության մեջ... Մի կողմում կարմիր դրոշն էր ծածանվում, մյուսում՝ երաժիշտների հաղթական նվագը հնչում, երրորդ կողմում կոմերիտ Արեգի զվարթ դեմքը փայլում...

Երանության վայրկյաններ էին, որ զգացվում էին հաղթանակից հետո...

— Ընկերներ,— այդ լարված դրությունից մեզ հանեց Արեգի խրոխտ ձայնը,— ընկերներ, մենք կանգնած ենք Գվարդինի ամենաարարձր կետի վրա... Ահա ձեզ հեքիաթների վայրը... Ահա ձեզ Գվարդինի «քաջքերի», «չար ոգիների» բույնը...

Ահա, նայեցեք այն կողմը ձգված է Բաքվի երկաթուղին։

Ահա նրա դիցամը մյուս երկաթգիծը, որ լեռներ, սարեր ճեղքելով, ձգվում է դեպի Երևան։ Քիչ հեռում սպիտակ ածուխ մատակարարող Քուռ գետը, որ գալարվում է արծաթե ժապավենի նման։ Ահա մեր հանդի Ոդում Դաղն ու Ուշ-Գյուլը, մեր շրջանի կարմիր գյուղերն իրենց կոլխոզներով, սովխոզներով, ուր երևում են կարմիր կակաչների նման ծածանվող դրոշակները... Աքսի բարան, Ուրքմազդուն, Ալիոուտը, ահա հեռուն, Իջևանի, Դիլիջանի անտառապատ, հանքերով հարուստ սարերն ու լեռները։ Մյուս կողմը Կովկասյան լեռնաշղթան է, իր մշտնջենավոր ձյունապատ գագաթներով...

Այդ վայրկյաններին ես հափշտակված, դիտում էի շուրջս։ Ճիշտ է, իմ մանկության օրերում շատ անգամ էի հրճվել բնության տեսարաններով, բայց այդ օրվա վերելքը դեպի Գվարզինի գագաթը, իմ առաջ փռված լայնածավալ տեսարանները, բնության վեհությունը, դրա հետ էլ իմ շրջապատի մանուկ սերնդի բուռն ոգևորությունը կլանել էին ինձ։ Զգում էի մեր աճող սերնդի հաղթական անսահման եռանդը, կամքի ուժը, զգում էի, տեսնում, որ նրանց ճանապարհին ոչ մի խոչընդոտ, ոչ մի արգելք չի կարող դիմանալ...

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

(ՀԱՏՎԱԾՆԵՐ)

ԻՄ ՍԻՐՏԸ

Մի առավոտ, երբ մեր սարերում արդեն նարդիզն ու մեխակը բացվել էին, ընկել էի ծաղիկների մեջ ու թիթեռնիկի պես ուրախ-ուրախ թռչկոտում էի։ Մեկ էլ հանկարծ զգացի ինչ-որ բաբախումներ կրծքիս տակ. ձեռքս ամուր սեղմած սրտիս, վազեցի մորս մոտ։

— Էս ի՞նչ է թպրտում, նանի ջան,— ասի ես ու վախեցած նայեցի մորս։

— Մի սիրո՞ւն ծիտիկ ա մտել քո կուրծքը, բալես,— ասաց իմ նանը ու ամո՞ւր-ամո՞ւր համբուրեց աչքերս։

Ես ձեռքս կարոտով սեղմեցի կրծքիս, որ ավելի ու ավելի զգամ այդ բաբախումները ու կարոտս առնեմ իմ փոքրիկ թռչնակից։

— Նանի՛, բա որ նա բերանիցս դուրս գա ու թռչի՞,— մանկական անմեղությամբ դիմեցի մորս։

— Հա, որ թռչի, դու էլ կթռչես,— ասաց իմ նանը ու կարծես տխրեց։

Նրա տխրությունն ինձ վրա էլ ազդեց. ընկա նրա վզովը։

— Նանի ջան, ես չեմ թողնի, որ նա թռչի, կուկորդս այնպես հուպ կտամ... այնպես ամուր,— ասացի ես ու աչքերս լցվեցին արցունքներով։

Մայրս սեղմեց ինձ իր կրծքին ու ինչ-որ անհասկանալի բառեր էր մրմնջում։

Ես իմ թույլ բազուկներովս փարվել էի նրա վզովն ու մի սփոփիչ ջերմություն էի զգում նրա դրկում։ Թվում էր, որ նանս ամեն

ինչ գիտե, որ այդ թռչունն էլ նա է պահել իմ կրծքում ու մեզ երկուսիս էլ խնամողը նանն է. որ նանը չլինի, մենք երկուսս էլ կըմեռնենք. դրա համար ամենից շատ նանին էի սիրում իմ մանուկ օրերում։

Եղբայրս՝ Արտեմը, որ մի 4—5 տարով մեծ էր ինձանից, անտառից մի կողով մոռ բերեց։ Մենք միրգը բուռ-բուռ լցնում էինք բերանները, այնքան համեղ էր, այնքան համեղ, որ մոռացել էի իմ թռչնակին. երբ վերջին բուռն էլ բերանս առա, նոր հիշեցի... Ձեռքս դրի կրծքիս, ու ինձ թվաց, որ նա թռել է... Աչքերս մթնեցին, ծնկներս դողում էին...

— Վա՛յ, նանի ջան,— ասի ես ու լեղապատառ վրա ընկա մորս և դողդողալով, հազիվ լսելի մրմնջացի,— ծիտը թռել է՞...

Նանը լի կրծքով ծիծաղեց ու ասաց.

— Ծիտը քնել ա, բալաս, մի քիչ վազվզիր, տես ոնց ա ծուծուլ ըլում...

Իսկույն թռա դուրս, ձեռքս սեղմեցի կրծքիս ու սկսեցի վազվզել...

— Ջա՜ն, ինչ լավն ես,— ասացի ես ու ավելի ու ավելի սկսեցի թռչկոտել...

Նանը հեռվից նայում էր ու հրճվում իմ մանկական անմեղությյան վրա։

— Տեսա՞ր,— ասաց նա ժպտերես։

— Տեսա, տեսա, նանի ջան,— ասացի ես ու վազեցի ընկա նրա գիրկը։

Այդ ծտի պատմությունը մոքիցս չէր հեռանում, առավոտները հենց արթնանում էի թե չէ, վազում էի մեր «ուրթի» ետևի կանաչ մարգագետինները, վազվզում, սեղմում էի կուրծքս ու ապրում իմ ամենաերջանիկ վայրկյանները... Մի օր նորից ընկա մորս վզովը.

— Նանի, այս ծիտը ո՞րտեղից ես բռնել։

— Ծիտը... ծիտը,— կմկմաց ու մոլորվեց նանը,— այդ ծտի նաղլը շատ ա դժար...

— Ինչի՞ է դժար, նանի ջան,— աղերսանքով նայեցի ես մորս...

— Հա՛... միտս ընկավ,— ասաց նանը ու սկսեց մի երկար հեքիաթ, որից իմ մեջ տպավորվել է այսքանը.

— Կարմիր կտուցով, գեղին ոտիկներով, շալթիկ թևերով մի նախշում, ծիտիկ... աչքերը քու աչքերի պես սիրուն... վիզը բարակ, թռավ, եկավ կանգնեց այդ քո ուսին։

Նանը ծիծաղում էր, իսկ ես մանկական հետաքրքրությամբ լսում էի։

— Հետո,— անհամբեր հարցրի ես։

— Հա, թևերը թափահարեց, կտուցը բաց ու խուսի արավ, երգեց, երգեց, ծլվլաց, ծլվլաց, լաց եղավ ու ասաց.

— Ես Մադնի սիրտը պիտի մտնեմ... որ չմտնեմ, կմեռնեմ...

— Կարալ չեմ,— ասի ես վախեցած,— թողուլ չեմ, որ քու իմ Մադնի սիրտը դառնաս...

— Ծիտը այդ իմ խոսքերի վրա տխրեց-տխրեց, լաց եղավ ու ուզում էր թռչել... Մին էլ էն տեհնամ, դու բերանդ բաց արիր ու կուլ տվիր,— ասաց նանն ու քնքշությամբ համբուրեց ինձ։

Ես ձեռքս կամաց տարա դրի սրտիս վրա... Ջան, ասացի ես իմ մտքում ու այդ օրվանից շատ չէի վազվզում, որ ծիտիկս չհոգնի։

Մի օր նանին մոտեցա ու վախվխելով հարցրի.

— Նանի ջան, ա՜խ, ինչ կլի մի անգամ նայեմ, տեսնեմ իմ ծիտիկին, կտուցը համբուրեմ, համբուրեմ, այնքան որ սիրտս հովանա... Ցարաբ ի՞նչ կլինի, որ ծիտը բերանիցս դուրս գա, տեսնեմ ի՞նչ տեսակ է, մտիկ տամ ու էլի կուլ տամ...

— Էդ ծիտը, որ մին դուրս թռավ, էլ ալամ աշխարհը վրա գա, կարալ չի բռնիլ...

Այդ օրվանից ես էլ ծտի մասին նանի հետ չէի խոսում։

Երբ ուշքի եկա, յոթ տարեկան էի, այն ժամանակ նոր իմացա, որ այն ծիտը կրծքիս տակ պահած իմ սիրտն է, որ հուզվում, հրճվում, ուրախանում է իմ ապրումներով։

Այլևս ամեն անգամ աջ ձեռքս չէի տանում դնում կրծքիս վրա, զգում էի նրա բաբախումների ամեն մի զարկը և դա բավական էր ինձ. ես ինձ վերին աստիճանի ուրախ էի զգում...

Հիշում եմ, մի անգամ, մեր ձին նստած, սարն էի գնում. ինձ հետ էին մեր գյուղացիներից շատերը, որը ոտով, որը ձիով։ Ոտով գնացող գյուղացիներից մեկը ջերմոտ էր, մնացել էր ետ ու հազիվ էր շարժում ոտքերը։

Երբ նայեցի նրա տանջված դեմքին, սիրտս ճմլվեց. իսկույն

ձիուս վեր թռա, սանձը մեկնեցի նրան, ամոթխած հայացքով նայեցի ու հազիվ լսելի ասացի.

— Առ, Ուհաննես քեռի, դու նստիր իմ ձիուն, ես ոտով կգնամ։

Հիվանդը զարմացած նայեց ինձ, կարծես չէր հավատում իմ ասածներին։

— Առաջներս մենք դիր է, ճամփեն էլ ցեխ, դու ոտով կարող չես գնալ, բալա ջան,— ասաց ու շարունակեց իր ճամփան։

— Կարամ, կարամ,— ասացի ես և ձիու սանձը նրան տալով, թեթև քայլերով անցա առաջ։

— Հլա տեհեք, հլա տեհեք էդ դյադին,— խոսեցին այս ու այն կողմից ձիերի վրա նստած գյուղացիներն ու իրար-իրար նայեցին ինձ։

Ես ուշադրություն չդարձնելով նրանց, ուժերս հավաքելիքայլում էի ամենից առաջ ու զգում էի, թե ինչպես ֆիրուս երջանիկ բարբառում...

Երբ սարը հասանք, հիվանդը ձիուց իջավ, մոտեցավ ինձ, ճակատս համբուրեց ու ասաց.

— Ձիդ առ, բալա ջան, քո արած լավությունն ամբողջ կյանքումս չեմ մոռանա։ Քու նանին շատ բարով արա։

Նա թամբը ամրացրեց ու օգնեց ինձ, որ ես նստեմ ձիուն. երկար ու սիրալիր նայում էր ինձ, կարծես չէր ուզում բաժանվելուց սանձը ձիու գլխովը քաշեց, տվեց ինձ ու ամուր սեղմեց ձեռքս։

— Գնաս բարով, Մարի ջան,— ասաց նա ու մեր ճանապարհները ջոկվեցին։

Երբ հասա մեր ուրթը, նանս ընդառաջ եկավ։

— Էդ ի՞նչ ֆ քու ռանգը,— վախեցած հարցրեց նա։

Երևի գույնս թռել է, մոռացել ես ու աշխատեցի համոզտուցնել մորս։

— Բան չկա, նանի ջան, Տիլ-գրիցը մինչև մեր սարը ոտով եմ եկել. բեզարել եմ։

Նանը լռեցրեց ընկավ. թասը մածնով լցրեց, վրան արաժան ածեց, դրեց առաջս ու ձեռքը ճակատիս դնելով հարցրեց.

— Ո՞վ գիդա, էդ անտեր ձին վեր ա դցել քի...

— Չէ, նանի, ձին ես Ադոնց Ուհաննեսին տվի՝ նա հիվանդ

էր, չէր կարողանում դալ... Դեռ այդ անտեր դիպչ, մինչև սարի գլուխը ցեխ ու բատտախ էր, մեջը մեռա...

Նանը տխո՞ւր-տխո՞ւր նայեց ինձ ու ասաց.

— Խեղճ բալաս, երնեկ էդպես ջիգարով սիրտ չունենայիր...

— Ի՞նչի, նանի,— առանց հասկանալու նրա միտքը, հարցրի ես։

— Կեր, կեր մածունը,— բարկացավ նա ինձ վրա. ապա թասը մոտեցրեց, գդալը տվեց ձեռքս, տխո՞ւր-տխո՞ւր նայեց ինձ ու դուրս գնաց...

ԻՄ ՓՈԽԱՐԻՍՏԸ

Ես արդեն տասներկու տարեկան էի։

Մի օր մոտեցա մորս ու շատ լուրջ սկսեցի խնդրել.

— Նանի, ե՞րբ պետք է ինձ քաղաք ուղարկեք. ես էլ եմ ուզում իմ եղբայրների՝ Պետրոսի, Արտեմի պես սովորել, ռաում առնել։

Իմ թախանձանքին նա ոչ մի ուշադրություն չդարձրեց։

— Այդ մտքիցդ հանի. դու պիտի մնաս տանը, մեր սար ու դաշտին, քոս հորը օգնես։ Էսա մենք պառավել ենք. էսօր կանք, էգուց՝ ոչ... Բա մեր օջախն ո՞վ պիտի վառ պահի։

Ու այդպես, հենց որ բերանս բաց էի անում, քաղաքի անունն էի տալիս, թե նանը, թե ապին լսել անգամ չէին ուզում։ Նրանք ինձ լավ աշխատավոր էին համարում իրենց համար ու ոչ մի կերպ չէին ուզում բաժանվել ինձանից։

Բայց որքան նրանք աշխատում էին ինձ համոզել, այնքան իմ մեջ ավելի ու ավելի էր արթնանում քաղաք գնալու և ռաում առնելու ձգտումը։ Մանավանդ, երբ եղբայրներս դալիս էին քաղաքից ու պատմում հազար ու մի հետաքրքիր բաներ։

— Ախ, ե՞րբ կլինի մի օր էլ ես քաղաք ընկնեմ,— ասում ու տխուր-տխուր նայում էի նրանց... Իսկ նրանք կարծես դիտմամբ նորանոր հրաշքներ էին պատմում։

Մի օր Արտեմն ասաց, որ երկաթուղի է նստել ու թռել գնացել է Հավճալա։

— Ի՞նչ կլինի ինձ էլ տանեք քաղաք,— խեղճ-խեղճ ասացի ես։

— Բա մեր աղունն ո՞վ աղա, մեր կալն ո՞վ կալսի, մեր գոմերը...

Նա աղավարի դեռ շատ պիտի շարունակեր, ես վրդովված հեռացա, վազեցի նանի մոտ։ Նանս միակ մարդն էր, որին և սիրում էի, և հավատում։

— Նանի, մեր Արտեմի հետ ես էլ պիտի քաղաք գնամ։

— Քեզ ո՞վ ասեց։

— Ո՞վ պիտի ասի, ես այդպես եմ ուզում։

Տեսնելով իմ վրդովմունքը, նա իր սովորության համաձայն գուրգուրանքով սկսեց.

— Դու որ գնաս, բա առանց քեզ ես ո՞նց դիմանամ. մինչև երեկո լաց կլինեմ. կասեմ, ո՞ւր է իմ Մադին... Բա մեղք չի՞ քու նանը...

Նա, երևի, գիտեր իմ փափուկ սիրտը, կարոտ հայացքով նայեց ինձ ու առավ իր գիրկը...

Ես էլ չկարողացա ընդդիմանալ. գլուխս թաղեցի նրա կրծքին ու սկսեցի անզուսպ հեկեկալ։

— Ո՞ր մեռնեմ, պիտի գնամ, որ ի՞նչ ուզում է լինի, պիտի գնամ,— մրմնջում էի ես... կարծես մայրական կրծքից օգնություն էի հայցում։

— Լավ, լավ, հանգստացիր. ապնին կասեմ, լաց մի ըլիլ,— ասաց նանը, իր դոդոցի փեշով աչքերս սրբեց, ճակատս համբուրեց ու տխուր-տխուր նայեց ինձ...

Եղբայրներս շուտով գնացին քաղաք, շարունակելու փրենց սովորությունը. ես նրանց ճանապարհ գցեցի, մտա մեր մարագն ու սկսեցի թաքուն լաց լինել։

Երբ աչքերս կարմրած, հեկեկանքս զսպած՝ դուրս էի գալիս մարագից, պատահեց մեր հարևանուհին։ Սա մորս հասակին, շատ ճարպիկ, տղամարդկային հակումներով, սև, կրակոտ աչքերո՛վ, մի աշխուժ կին էր։ Նրան կանչում էին «Ամնի աղջիկ» (իր որսորդ հոր նման քաջ լինելու պատճառով)։

— Էդ ինչի՞ ես լաց եղել, Մադի,— զարմացած հարցրեց նա.— ով գիտե, հերդ ծեծել է։

— Չէ՛,— ասացի ես ու հեկեկանքս նորից խեղդեց ինձ։

— Բա ինչի՞ ես լաց լինում,— ավելի կարեկցաբար նայեց ինձ։

— Ային Պետրոսին, Արտեմին տարավ քաղաք, ինձ թողեց այստեղ։

Նա դառը ա՞խ քաշեց ու կռնիցս բռնած տարավ մորս մոտ։

— Ա՛յ խաթուն-քիրա, ինչի՞ էս ըրեխին էլ քաղաք չեք ղրդում. ուզում եք իմ մարդու «փանահ-աղի» պես իր ուսում առած ախպորտանցը նոքար դառնա՞...

— Դե, ի՞նչ անեմ, հերը մենակ մարդ է, օգնող չունի, չի թողնում,— ասաց նանը ու խեղճ-խեղճ նայեց մեզ։

Ամնի աղջիկը կրակ էր կտրվել. կրակ վառեց մորս գլխին, ապա դառնալով ինձ, ասաց.

— Վախել մի, Մադի ջան, քանի Ամնի աղջկա գուլպը սաղ ա, քանի լաչակը գլխին ա, մի ճար կգտնի, մի ճամփա բաց կանի քի համար։

Այդ օրվանից նրա և իմ միջ առաջացավ խորին մտերմություն։ Ես շուտ-շուտ լինում էի նրա մոտ. նա ինձ միշտ հանգստացնում էր։ Մի քանի անգամ հորս հետ խոսել էր. թեև հայրս կտրականապես մերժել էր, բայց նա չէր հուսահատվում։

Մենք կալ ու կուտը հավաքել, վար ու ցանքն ավարտել էինք։

«Է՛հ, էս ձմեռ էլ մնացի գյուղում»... կարծես հաշտվել էի վիճակիս... «Գիտի մնամ գյուղում, դառնամ հորս պես հողագործ, ռանչպար»,— մտածում էի ես ու այլևս հույս չունեի Ամնի աղջկա վրա։

Սայլը լծեցինք ու հորս հետ գնացի անտառ փայտ բերելու։ Երբ տուն եկանք, իմ քույր Կատին մոտեցավ ու ականջիս կամաց ասաց.

— Ամնի-աղջիկը կանչում է քեզ։

Ես իսկույն վազեցի նրա մոտ։

— Մադի, էս գիշեր, լուսաբացին Գնջալվանց սելերը դարիցորեն ֆն տանում քաղաք ծախելու։ Որձկանչին վեր կկենաս, թաքուն դուրս կգաս տանից, կգաս կընկնես էդ սելերի հետ ու թո՛ւշ, գրա քաղաք։ Գնջալվանցը տունը հո գիտես, Ղոբնի ծերին ա։ Աշխատիր քնով չընկնես ու մնաս. տանցոնց բան չասես։ Դու փախի գնա, տեսնեմ քու նանն ու ապին ինչ կանեն։

---

31 Փանահ-աղա — իր ամուսնու ծաղրական անունն էր։

Այդ օրը ես շատ էի տխուր, ամբողջ ժամանակ իմ փախուստի մասին էի մտածում։

— Էդ ինչի՞ ես էդքան մտամոլոր, Մաղի ջան, հո հիվանդ չե՞ս։

Նանը խիստ-խիստ նայեց աչքերիս։ Երևի նա դիտե, զգում է, որ իմ մեջ մի վատ բան է կատարվում. չլինի նրա սիրտն իմացել է, որ ես փախչում եմ... — մտածեցի ու առանց նրան նայելու ասացի.

— Չէ, Նանի ջան, ոչ մի տեղս չի ցավում։

Կացինն առա ու գնացի թոնրի համար փայտ կտրատելու։

Նանն ամբողջ օրը հետևում էր ինձ. ուր գնում էի, մի բան, մի պատրվակ էր գտնում, գալիս էր ետևիցս ու աչքի տակով նայում էր ինձ։ Այդ օրը ես էլ էի տխուր, նա էլ։

Երբ իրիկնահացը կերանք, երեխաները սովորականի պես մտան իրենց տեղերը քնելու, ես մնացի օջախի կողքին նստած ու սկսեցի կրակը խառնել։

— Բա դու ինչի՞ չես քնում,— անհանգիստ նայեց Նանը։

— Կքնեմ,— ասացի ես ու սկսեցի տրեխներս հանել. կամաց-կամաց շորերս էլ հանեցի ու մտա տեղս։

Նանը հանգստացած՝ ձեթի ճրագը հանգցրեց ու ինքն էլ քնեց։

Տեղիս մեջ աչքերս արոտում էի, որ չքնեմ, քիչ հետո, երբ տեսա, որ բոլորը քնած են, վեր կացա, շորերս հագա, տրեխներս կապեցի, օջախի վրա մի քանի փայտ ավելացրի։

Փայտերը ճըթ-ճրթալով վառվում էին, ես նայում էի կրակի բոցերին ու մտածում իմ փախուստի մասին. այդ բոպեին մի միտք էր միայն ինձ տանջում, որ քնով չընկնեմ ու արաղաղների կանչը չլսեմ...

Հայրս խռմփում էր, Նանը հանգիստ շնչում. քույրերս ու եղբայրներս փարվել էին իրար, աչքերը փակել... Կրակի աղոտ լույսի տակ այնքան գեղեցիկ էին նրանք։

Մենակ իմ փոքրիկ շնիկ Հերոեշն էր արթուն. խելոք նայում, կարծես հասկանում էր իմ միտքն ու քաջալերում ինձ...

Բայց նա էլ շուտով կծկվեց, գունչը պահեց պոչի մեջ ու խաղաղ քնեց։

Մնացի մենակ։ Տեղիցս վեր կացա, դուռը կամաց բաց արի,

գուրս գնացի ու ակամայից նայեցի երկնքին։ Աստղերը վառվում-հուրհրատին էին տալիս։ Քանիս կարծես մի փոքր փախավ. աչքերս այլևս չէին փակվում. նայում էի աստղերին ու մտածում... երանի ո՞րն է իմ աստղը... «Դարմանագողի» ճամփան շատ էի սիրում. այնտեղ մի փայլուն աստղ կար... ո՞վ գիտե նա է իմ աստղը... Այդ մտածմունքների մեջ ինչ-որ ցուրտ զգացի. ոտքերիս ծայրերով նորից տուն մտա, նստեցի օջախի մոտ, մի բանի փայտ ավելացրի. կրակը բոցավառվեց։

Եթե նանը հանկարծ աչքերը բաց անի ու տեսնի ինձ նստած, ի՞նչ կանեմ... Կասեմ փորս ցավում է, նանի ջան։ Այդ մտածմունքների մեջ, հակառակ իմ կամքի, աչքերս փակվել էին, նստած տեղս քնել էի...

Մեկ էլ հանկարծ լսեցի մեր մեծ արլորի «ծուղրուղուն»... Սիրաս թռավ, տեղիցս վեր կացա. մտա թանրատուն. շտապ մի բանի հաց վերցրի տաշտից. բերանի կճուճից էլ պանիր. փաթաթեցի թաշկինակիս մեջ. կապեցի մեջքիս, ճիպոտն առա ու կանգնեցի։

Կրակն իր ադոտ լույսով մի առանձին գեղեցկություն էր տվել մեր ադքատիկ խրճիթին։ Նայեցի նանին. սիրուն աչքերը փակած, հանգիստ քնած էր. նայեցի ապին. դեմքը խաղաղ, շընչառության հետ շրթունքները բաց ու խուփ էին լինում. նայեցի քույրերիս, եղբայրներիս... որքան գեղեցիկ էին նրանք այդ անմեղության մեջ... երկայն թերթերումքները փակել էին նրանց մանկական աչքերը. դեմքերն անդորր ու խաղաղ...

Անընդհատ նայում ու չէի կարողանում հագենալ... Զոքեցի ու զգուշությամբ սկսեցի մեկ-մեկ համբուրել նրանց դլուխը, ձեռքերը, ճակատը...

— Մնաս բարով, Կատի ջան, Թոսի ջան, մնաք բարով երեխաներ,— հաղիվ լսելի մրմնջում էի ես... Սոտեցա մորս. քիչ էր մնում ընկնեի նրա հարազատ գիրկը... — Մնաս բարով, նանի ջան, ինձ համար դարդ չանես... — մտքումս մրմնջում ու շրթունքներովս հպվում էի նրա պարղած ձեռքին։

Արցունքներս խեղդեցին... Հեկեկանքս հաղիվ դոպած, ոտքերիս ծայրերով մոտեցա դռներին... կանգ առա... ետ նայեցի, մի անգամ էլ նայեցի ու դուռն իմ ետևից փակեցի... Դուրսն էլ ինձ չկարողացա զսպել... արցունքներս թափվում էին ու ես լուռ հեկեկում էի...

Հեքուեշն ինձ հետ արթնացել, ձեռքերս լիզում էր ու տխուր-տխուր նայում։ Ինձ թվաց, որ նրա աչքերն էլ էին թաց... Գրկեցի նրա գլուխն ու ամուր-ամուր սեղմում էի կրծքիս...

Աքաղաղների եռանդագին կանչն ինձ սթափեցրեց։ Մտա դամ. մնաս բարով արի իմ թառլան ձիուն. հորթուկիս դունչը համբուրեցի. դուրս եկա դամից. մի անգամ էլ նայեցի մեր տանը, մեր մեծ թթենուն։ Մնաք բարով ասացի ու քայլերս ուղղեցի դեպի Գնջալվանց տները։

Հեքուեշն առաջիս ուրախ-ուրախ թռչկոտում էր։ Գյուղը դեռ խոր քնի մեջ էր. Աքաղաղները մի բերան կանչել, դադարել էին. լսվում էր շների հաց ու կենա հաջոց ու նորից լռում ամեն ինչ։

Մի քանի ծուռ ու մուռ փողոցներ անցնելուց հետո, հասանք գյուղի ծայրը, Գնջալվանց տներին։

Պահվեցի մի պատի տակ ու ամբողջապես լսելիք դարձած, նայում էի նրանց կողմը, բայց այնտեղից ձեն ու ձուն չկար։ Տիրում էր խորին լռություն։— Երևի սայլերը լծել, գնացել են,— մտածում էի ես անհանգիստ. Հեքուեշը պոչը շարժում ու կարծես հանդստացնում էր ինձ. և իրավ, քիչ հետո լսեցի Գնջալվանց Ակոբ բիձու խռպոտ ձայնը։

«Հո Բանուշ, հո Բանուշ» ասելով եղները դուրս էր անում դամից։ Ճրագը ձեռքին, նրա ետևից դուրս եկավ մի կին. նրանք միասին խոսում էին. կինն ինչ-որ պատվերներ էր տալիս։ Լսվեցին էլի ուրիշ տղամարդկանց ու կանանց ձայներ։

Ես տեղս կուչ եկած, շփոթում էի Հեքուեշի գլուխը, որ չհաչի. նա պոչը շարժում ու հանդիստ նայում էր ինձ։

Լսվեց սայլերի ու անիվների ճռճռոցը. տեղիցս վեր կացա. դաղտագողի սկսեցի հետևել նրանց։ Երեք բեռնավորված սայլ էին։ Առաջինին նստած էր ինքը Ակոբ բիձան. նրանք եղները քշում ու իրար հետ ինչ-որ խոսում էին։ Սայլերը ճռճռալեն գնում էին. մենք արդեն դուրս էինք եկել գյուղամիջից. մեր առաջը ձգված էր հարթ-հավասար ճանապարհ. ես շատ հեռվից, աննկատելի հետևում էի նրանց։

Զգում էի մի առանձին թարմություն. առավոտվա մեղմ զովը փչում էր երեսիս... Ինձ թվում էր, ոչ թե քայլում էի, այլ թռչում ծռում... Այն գիտակցությունը, որ քաղաք եմ գնում, ոգևորել էր ինձ։ Պատկերացնում էի ինձ եղբայրներիս պատմած մեծ քաղաքը,

բարձր-բարձր տները, մեծ Քուռ գետը իր երկաթե կամուրջներով, մաքուր, լայն փողոցները... Հերոեշն էլ էր ուրախ, շուրջս պատուլյոներ էր անում, թոչկոտում էր ետ ու առաջ. նրան թվում էր, որ դաշտ էինք գնում վար ու ցանքի։

Երկինքը պարզվում էր. լուսաբացն այդ ժամին աննման էր. վառվռուն աստղերը կամար էին կապել. բաղումքը, կշիռը, «քարվանդուանը»*) փայլ-փլեալով նայում էին ինձ։ Լուսաստղը հենց գըլխիս վերևը շողշողում ու իր չքնաղ փայլով զարդարում էր երկինքը։ Այդպիսի աստղալից երկինք, հրաշունչ լուսաբաց կյանքումս չէի տեսել։ Իմ մանուկ հոգին հրճվում էր. թվում էր՝ ինքս էլ այդ աստղերից մեկն եմ ու այն անհո՞ւն կապուտակում խաղում եմ ես էլ նրանց հետ։

Լուսացավ. մենք գյուղի հանդից անցել, մտել էինք Հարևան, Ինջալլու գյուղի սահմանները, ուր սկսվում էր մի քոռը ձոր։ Գյուղացիք սայլերը կանգնեցրին, իջան, անիվները կապեցին։

— Ա՞-ա՞... ՝էն ո՞վ ա, էն տղեն,— ձեռքը ճակատին դրած նայեց դեպի ինձ Ակոբ-բիձան։

— Ես եմ, Ակոբ բիձա, խեչմանց Ուհաննեսի տղա՝ Մադին։

— Ադա, Մադի, էդ ո՞ւր ես գնում,— զարմացած հարցրեց նա։

— Քաղաք։

— Բա քու հերը գիտե։

— Որ նա դիդենար, ի՞նչ ունեի ձեր սայլերի հետ։ Տանցոնցե թաքուն փախել եմ...— ասացի ես համարձակ։

— Ադա, տեհնում ե՞ք էս «լակոտին»,— դառավ նա համագյուղացիներին, ապա խիստ-խիստ նայելով ինձ, ասաց.

— Եդ գնա, բալա ջան, քու հերը որ իմանա, կերե կխրովե մեզ. մենք քի քաղաք տանող չենք. իմացա՞ր։

— Իմացա, Ակոբ բիձա, դե ես հո ձեր սայլին չեմ նստում, համփեն չգիտեմ, թե չէ մենակ էլ կգնամ։

— Եդ գնա, ասում եմ, թե չէ էս ձեռիս ճիպոտը տեհնում ե՞ս։

Նա ճիպոտն օրորելով ետևիցս ընկավ, ուզում էր բռնել ինձ։

— Ի՞նչ է, ես ձեզ ի՞նչ եմ անում, ոտով ինձ համար գնում եմ,— նրա առաջից փախչելով ասացի ես։ Հերոեշն էլ իրան հերթին սկսեց հաջել։

---

*) Քարվան-դուանը Ցուպիտերն է։

կանոնից, իսկ այնուհետև արտածման շղթայի ոչ ծայրագույն տարրերին համապատասխան F բազմությունից ընտրել ու կիրառել այն արտածման կանոնները, որոնք կբերեն քննվող նախադասության համընկնող նախադասության արտածմանը:

Այսպես, եթե ձևափոխված <Σ, F> համակարգը կիրառենք the man hit the ball նախադասության անմիջական բաղադրիչների համակարգը կազմելու համար, ապա կստանանք հետևյալ պատկերը (տես աղյուսակը).

Աղյուսակ 3

Արտածման կանոնը	Ստացված արդյունքը
1 I → (Sentence)	
2 Sentence → (NP)(VP)	((NP)(VP))
3 NP → (T)(N)	(((T)(N))(VP))
4 VP → (verb)(NP)	(((T)(N))((verb)(NP)))
5 T → the	(((the)(N))((verb)(NP))))
6 N → man	(((the)(man))((verb)(NP)))
7 verb → hit	(((the)(man))((hit)(NP)))
8 NP → (T)(N)	(((the)(man))((hit)((T)(N))))
9 T → the	(((the)(man))((hit)((the)(N))))
10 N → ball	(((the)(man))((hit)((the)(ball))))

Ստացված արդյունքը նախորդի հետ համեմատելու համար մեզ մնում է ծայրագույն արտածման շղթայի մեջ, ձախից սկսած, յուրաքանչյուր նուլնանիշ փակագիծ համապատասխանության մեջ դնենք R բազմության (R-ը բնական թվերի բազմությունն է) տարրերի հետ՝

(((the)(man))((hit)((the)(ball))))

1 2 3 3 4 4 2 5 6 6 7 8 8 9 9 7 5 1

Ակնհայտորեն երևում է, որ երկու տարբեր ալգորիթմներով ստացված արդյունքները լիովին համընկնում են:

Քննենք <Σ, F> համակարգի կիրառման հետ կապված մի հարց ևս: Վերևում նշվեց, որ Σ բազմությունը միավորում է ոչ ծայրա-

Նրանք իրար հետ սկսեցին փոփոխել ու Ակոբ բիձան մեղմացած դիմեց ինձ.

— Դե որ եկել ես, արի, բալա ջան, արի սելին նստի, տանենք բաղաք, արի, վախել մի։

Ես զգալով նրանց միտքը, ետ-ետ գնացի ու բարկությամբ ասացի մեծերից լսածս դարձվածքը.

— «Ձեր էդ մտքինը, իմ էս կրնկի տակին ա»։

Վիրավորված իմ այդ խոսքերից, նրանցից մեկը գոռաց։

— Ջհանդամը դրա գլուխը, թող ո՞ւր ուզում ա կորչի,— ասաց ու քշեց եզները. մյուսներն էլ հետևեցին նրան։

«Վավ պրծա»,— մտքումս ասացի ինքս ինձ. էլ բան չեն ասի, հետները կգնամ քաղաք։ Ուրախ ու ազատ շունչ քաշեցի։ Հերոնշը տխուր-տխուր նայում էր ինձ։

— Դու գնա տուն, Հերոնշ, նանին, երեխաներին շատ բարով ասա. ես գնում եմ քաղաք։

Շունս կարծես հասկացավ ինձ. ոտներս ընկավ, մի քանի անգամ կլանչ-կլանչից ու ճամփա ընկավ ետ դեպի գյուղը. գնում-գնում, կանգնում, ետ-ետ էր նայում, կարծես սպասում էր, որ նորից կանչեմ։

Իջնում էինք ձորը. շունն աչքիս հեռացավ, կարծես մի բան պոկվեց սրտիցս։ Մինչ այդ թվում էր, թե ես դեռ չեմ կտրվել մեր տնից. Հերոնշի ներկայությունը, կարծես, մի տեսակ կապում էր ինձ մեր տան հետ։ Այժմ այդ միակ սփոփանքից էլ զրկվեցի։ Ալիս ոչ մեր հանդն էր երևում, ոչ մեր գյուղը և ոչ էլ իմ տնքան սիրելի շնիկը...

Գնում էի ցլխակոր, սայլերի ետևից։ Գյուղացիներն իմ դոյությանս մասին մոռացել, բարձրաձայն խոսում էին իրանց անց ու դարձի մասին. նրանց հետաքրքրում էր, թե ի՞նչ գնով կծախեն իրանց ցորեն-գարին։

Ես սայլերի ետևից խրոխտ քայլում էի. հոգնածություն չէի զգում, մենակ մի փոքր քաղցն էր նեղում։ Հենց որ իջանք ձորը, նրանք եզներն արձակեցին, խոտ դցեցին առաջները, իրանք էլ նստեցին ծառի շվաքում, սառն աղբյուրի կողքին ու սկսեցին նախաճաշել։

— Արի՛, ա՛ռա, Մարդի, դու էլ նհար արա,— կիսաբերան կանչեց ինձ Ակոբ բիձան։

— Չեմ ուզում,— ասացի ես։

Նստեցի մի ծառի տակ, թաշկինակս բաց արի ու խոռվկան երեխի պես սկսեցի ծամել իմ հացն ու պանիրը։ Ապա ընկա աղբյուրին, մի կուշտ ջուր խմեցի. թաշկինակս նորից կապեցի մեջքիս ու թեկն ընկա մի կոճղի։

Մի լավ հանգստանալուց հետո, սայլերը ճամփա ընկան, ես էլ հեռվից սկսեցի հետևել։

«Յարաբ նանը ո՞նց է. ապին ի՞նչ է անում,— մտածում էի ես։ Մեր տունը, մեր կալը կարծես աչքիս առաջը լիներ։ Ո՞վ գիտե Ամնի աղջիկը եկել, տանել է նրանց. Հերանշը հասել, խաբար է տվել նանին... Մտքերս խառնվում էին իրար... Երբեմն մեր տարերն էին առաջս, տարի ճամփան, ջրաղացը, ջրապացպանը... Նանն ու Կատին աչքիս չէին հեռանում. նրանք տխո՞ւր-տխո՞ւր նայում էին ինձ...

Ես մխիթարում էի ինձ.— Ամնի աղջիկը կասի. «Խաթուն քիրա, քու Մադին թոռա՛վ... Ինջալվանց սելերի հետ դնաց քաղաք»...

Նանը լքլքոցը կընկնի. կգնա ապին կասի.

— Մադին փախել ա, ա՛յ մարդ, մի ճար արա...

— Հա, փախել ա, փախել ա...— կասի ու կգնա դիզամեջ։

Նանն այս ու այն կողմ կընկնի. ապին ականջ չի դնի։ Նանն էլ կամաց-կամաց կհանգստանա. նրա սիրտը թաքուն կուրախանա, որ իր Մադին քաղաք է գնացել... Ու այդպես հաղար ու մի մտածմունք պաշարել էր ինձ. ես անգիտակցաբար եկել, սայլերին մոտեցել ու հասվել-հաս քայլում էի։

— Ա՜... ա՜... հրե մի ձիավոր ա գալի դրա մեղ. յարաբ էդ ո՞վ ա,— խոսեց Ակոբ բիձան ու նայեց ինձ։

Ես վախեցած ետ նայեցի.— հայրս էր։ Թաղանին նստած, թոռած գալիս էր. սիրտս ծուլ էլավ։

— Ադա, Մադի՛, քու ապին ա, վայ քու մեղքը. կաշիդ պիտի պլոկե,— ասաց մի գյուղացի։

— Հա՜... նա ա որ կա,— պնդեց Ակոբ բիձան։

Ես խսկույն ճամփից դուրս եկա, անցա սայլերի առաջ, սկսեցի վազել քանի ոտքերումս ուժ կար. վազում ու ետ-ետ էի նայում։ Արդեն ձիու ոտքերի տրոփյունը լսում էի. ճամփաս ծռեցի, անցա մացառուտը... Ոտքերս թոպանում էին, վեր էի բռնկում.

մեկ-էլ մի ձեռք թևիցս ամուր բռնեց։ Ապին էր. այնպիսի զայրույթ կար նրա դեմքին, որ երբ նայեցի, քիչ էր մնում սիրտս ճաքեր։

— Վա՛յ, ապի ջան,— միայն կարողացա արտասանել ու ձեռքս բնազդաբար պահեցի դլխիս։

Նա առանց մի բառ արտասանելու, թևիցս քաշեց, նստեցրեց դավակին։

Ես նրա մեջքին կպած ,սարսափից դողում էի... Ձին ետ տվեց. հենց որ հասանք սայլերին, նայեց Ակոր բիձային ու դառնացած ասաց.

— Ասենք սա ըրեխա ա՞... բա դուք ի՞նչ մտածեցիք, ձեր դլուխը ո՞նց վեր կալավ, էս քորիա ըրեխին տանել էն քանդվածը — շներոց, դելերոց աննելո՞ւ...

— Դա ըրեխա հո չի, պեծ ու կրակ ա,— ասաց Ակոր բիձան։

Ապին էլ չխոսեց. նա կարծես հանդստացած, թևիցս ամուր բռնեց ու մտրակեց ձիուն։

Ինչից որ սարսափում էի՝ հակառակը դուրս եկավ. նա ոչ միայն չծեծեց, մի չոռ անդամ չասեց ինձ, այլ ճանապարհի ամբողջ ընթացքում սիրալիր նայում էր ինձ. մի քանի անդամ էլ քնքշությամբ ասաց.

— Բալա ջան, ղայիմ բռնի մեջքիցս, վեր չընկնես...

Ես մի առանձին կարոտ զդալով դեպի նա, ձեռքերով ամուր գրկեցի նրա մեջքը ու սկսեցի ներքուստ ինձ կշտամբել։

— Ինչո՞ւ էի փախչում. բա իմ ապին մեղք չէ. գիշեր-ցերեկ մենակ շարչարվում-տանջվում է...

Այդ մտքերի մեջ էի հասանք տուն։

Ամենից առաջ մեզ նկատեց Հերոնը. հաջելով վազեց մեզ ընդառաջ. ծուլ-ծուլ էր լինում, կախ էր ընկնում, քաշում էր ոտքերիցս, քիչ էր մնում ինձ վայր գցեր ձիուց։

Շան հաջոցի վրա դուրս թափվեցին երեխաները...

— Նանի, Մադին,— գոռացին նրանք ու քիչ էր մնում ձիու ոտքերի տակն ընկնեին։

Նանը լեղապատառ դուրս ընկավ տնից։

— Մադի ջան... —դուրս թռավ նրա կրծքից այդ միակ բառը ու ձեռքերը մեկնած, վրա ընկավ մեր ձիուն։

Ես թռա, ընկա նրա գիրկը, գլուխս դրի նրա կրծքին ու սկսեցի հեկեկալ։

Մայրս սեղմել էր ինձ իր դոշին, համբուրում, գգվում ու արցունքը գունդ-գունդ աչքերից թափվում էր...

— Իմ սիրուն բալաս, դու որ կորչեիր, քու նանը ո՞ր ջուրն ընկներ... Իմ սար ու դաշտ տղա, ո՞ւր էիր գնում, ո՞ւմ էիր թողնում քո խեղճ նանին. բա նա մեղք չէ՞ր...

Ես ամաչում էի երեխաներից, նրանք շրջապատել ու թախծալի նայում էին ինձ։

Ապին ձին ման էր ածում կալում ու մերթ-մերթ նայում մեր կողմը։ Նա էլ էր տխուր. կարծես ինչ-որ խորը մտածմունքների մեջ էր։ Ձին կապեց ու եկավ նստեց սրահի թախտին։

— Կատի, մի սաստը ջուր տու,— դիմեց նա քրոջս։

Սրբ ջուրը խմեց, փարչը դրեց մի կողմ, նայեց մորս, ինձ ու ասաց.

— Խաթուն, էս ըրեխի ոտն ու ձեռը դրստի, էգուց տանեմ քաղաք, կոնից բռնեմ, Քուռը գցեմ ու դամ։

Ես զարմացած նայեցի հորս. խորը թախիծ կար նրա դեմքին։ Մայրս տեղից վեր կացավ, մոտեցավ հորս ու վախվխելով հարցրեց.

— Ի՞նչ ես ասում, ա՛յ մարդ...

— Ասեցի էգ գյադի ոտն ու ձեռը դրստի, էգուց տանում եմ քաղաք,— բարկությունը զսպած, խոսեց նա ու դուրս գնաց։

Քիչ հետո եկավ Ամնի-աղջիկը։

— Լաց էիր լինում, Խաթուն քիրա... դե հիմի տար դուանդ նոքար արա... խեղճ ըրեխեն էնքան լաց ա էլել, որ աչքերը կարմրել են, բա մեղք չի՞ դա...

— Այ քիրա, ա՛յ մերա, ի՞նչ ես ուզում մնզանից...

Ամնի աղջիկը, տեսնելով մորս վրդովմունքը մեղմացած ասաց.

— Հանաք եմ անում, Խաթուն. ինչի ես նեղանում։

— Էգուց ապին տանում ա Մադնին քաղաք,— ասաց Կատին ու իր քնքուշ հայացքը դարձրեց ինձ։

— Հա՞, Խաթուն։

— Հա,— սրտնեղած խոսեց նանը ու աչքերը նորից լցրեց։

— Շաշ... հրեդ հավի թխսի պես չորս կողմդ լցրել ես, հերիք

չի՞ թեզ... վեր կաց ճամփու համար բան ու ման արա, հաց թխե. էս ա օրը ճաշ ա դառնում. էլ ե՞րբ պիտի հասնես։

Նրանք մեզ թողին սրահում ու իրանք մտան թոնրատուն։

— Կատի ջան, գիտե՞ք, որ փախել եմ։

— Ջ, էն ա ասացինք Հերոնշի հետ քաղերն ես ընկել զորա-գա *) անելու. մեկ էլ տեսանք Հերոնշը եկավ, կլանչից-կլանչից ու նանի ոտներն ընկավ։

— Բա ո՞ւր ա Մադին,— նանը վախվխելով հարցրեց ապ-նին։

— Ուր պտի ըլի, հրես կգա,— ասաց ապին ու ձին տարավ ջուր տալու։

Մեկ էլ տեսանք, Ամանի-աղջիկը ծիծաղելով գալիս ա։

— Վախել մեր. Մադին Գնջալվանց սելերի հետ փախավ քա-գաք։

Նանը ծնկներին տվեց ու հենց ծվաց, որ ապին էլ ծվոցի վրա ասուն ընկավ։

— Էդ ի՞նչ ա պատահել, խաթուն։

Մադին, Մադին... փախել ա,— ասաց ու նորից խփեց ծընկ-ներին։

Մենք էլ սկսեցինք լաց լինել...

Ապին թռավ ձիուն ու ճամփա ընկավ։

— Շատ ուրախացա՞ր, Կատի ջան, որ ինձ տեսար։

— Շատ,— ասաց նա ու իր բարի աչքերը գցեց երեսիս։

Ես դրեցի նրան ու ամուր-ամուր համբուրեցի։

Նանը կանչեց մեզ, ես ու Կատին վազեցինք թոնրատուն։

Ես շորերս հանեցի, նստեցի տաշտի մեջ. Կատին ջուր էր լցնում, նանը լողացնում էր ինձ։

Երբ վերջացրեց, ոտիցս մինչև դլուխ հագցրեց մաքուր շո-րեր։

Այդ օրն ամենքն աշխատում էին ծառայել ինձ, տան ազիզն էի։ Ապին մի քանի հավ մորթեց, շտապ-շտապ մանվ էր գալիս ու ինչ-որ պատրաստություններ էր տեսնում։

Նանն աչքերը ինձանից չէր հեռացնում. ախ ու վախ էր ա-նում։ Ես էլ էվ տխուր. ինչ-որ անհայտ երկյուղ էի զգում, ինչո՞ւ ապին ասաց.— ինձ տանում է Քուռը դցելու...

*) Զորաբա անել—մերդ հավաքել։

Այդ երեկո նանը տեղերը շուտ գցեց. պառկեցինք մեկ եղավ։

ՔԱՂԱՔՈՒՄ

Չգիտեմ որքան էի քնել, երբ աչքերս բաց արի, տեսա նանը համբուրում է ինձ։

— Վեր կաց, Մադի ջան, վեր կաց. աքաղաղները կանչում են, հերդ ձին թամքում ա... Ճամփի պաշարդ կապել եմ, վեր կաց, բալա ջան,— ասում ու աչքերից արցունքներ էր թափում։

Կատնի թևը վզովս էր գցած, ես զգուշությամբ բաժանվեցի նրանից. նստեցի, շորերս հագա. դա իմ տոն օրերի հագուստն էր. կարմիր բրդի բաճկոն, նարնջի գույնի վերնաշապիկ, գույնզգույն թելերով գործած գուլպա, նոր տրեխներ... գոտիկս էլ կապեցի մնացի կանգնած։

Նանը կողքիցս չէր հեռանում. կոճակներս էր կոճկում, օձիքս ուղղում, թափ էր տալիս վրաս։

Ապա պահարանից հանեց մի բոտ կանֆետ, լցրեց գրպաններս։

Երեխաները հանգիստ քնած էին. ես կռացա, մեկ-մեկ համբուրեցի Կատնին, Կանուշին, Մարինին, Թորոսին, Մուխոյին ու նանի հետ դուրս եկանք սրահ...

Երկինքը ամպամած էր, տեղ-տեղ երևում էին հատ ու կենտ աստղեր։

Ապին թամքը մի անգամ էլ ամրացրեց, խուրջինը գցեց ձիու վրա. ինքը նստեց ու ուզում էր առնել ինձ իր գավակը։

Նանն ինձ ամուր գրկած բաց չէր թողնում։

— Եսթեռն,— կես բարկացած, կես հանդիմանական ասաց ապին։

Նանը սթափվեց. ամուր համբուրեց աչքերս ու ես թռա հորս գավակը։

Նանը կիսախավարի մեջ նայում էր մեզ, իսկ Հերոնջը ձիու առաջից թռչկոտում էր։

— Մնաս բարով, նանի ջան,— ասավ իմ սիրտը...

— Գնաս բարով, Մադի ջան, —ասավ իմ նանի սիրտը։

Մեր սրտերի ձայները ձուլվեցին ու տարածվեցին խավարի մեջ։

Ճիշտ որ Թառլան էր մեր ձին, մի շնչով հասավ «Կոտրած կամուրջը» *). առաջին անգամ էի տեսնում ես այդպես մեծ գետ։

— Ասի, սա՞ է Քուռը,— կամուրջից նայելով խոր ջրերին, հարցրի ես։

— Չէ, բալա ջան, սա Խրամն ա։ Քուռը սրանից շատ ա մեծ,— ասաց ապին։

Հենց այդ կամուրջի կողքին մի խանութ կար։ Իջանք, խուրջինը վեր բերինք, ձին կապեցինք, գարի, դարման տվինք. մենք էլ նստեցինք սեղանի առաջ երկար նստարանին, մեր պաշարը հանեցինք. ես կրծում էի հավի ոսկորներն ու մտքումս ասում. «էիմ նանի ելիածն ֆ»։ Երբ նախաճաշը վերջացավ, խուրջինը կապեցինք, ձին տարանք ջուր տվինք.

Նույն օրը, կես դիշերվա դեմ, հեռվից երևացին շատ կրակներ։

— Ա՞յդ է քաղաքը, ապի,— հարցրի ես։

— Հա,— ասավ ու ձիուն կրնկեց։

Քիչ հետո մենք արդեն քաղաքի ծայրամասումն էինք։

Ճանապարհի աջ ու ձախ կողմերը, փայտե սյուների վրա, վառվում էին ճրագներ. քանի գնում էինք, այնքան շատանում էին այդ լույսերը։ Մեկ-մեկ էլ պատահում էին կառքեր ու սայլեր։

Ես ամուր բռնել էի հորս մեջքից ու զարմացած նայում էի չորս կողմը, ինչ-որ վախ էի զգում։ Լսվում էին սուլոցներ. մի տեղ այնպես ուժեղ շվվացրին, որ մարդիկ հավաքվեցին, աղմուկ բարձրացավ։

Ապին ձին քշեց առաջ։

Ես չգիտեի ուր ենք գնում, որտեղ ենք. այդ միջոցին ապին ձին թերեց, մտանք մի ընդարձակ դավիթ ու իջանք ձիուց։ Մեզ տվին մի առանձին սենյակ. պատի մոտ մի երկար թախտ էր դրված, առաջը սեղան, շուրջը մի քանի աթոռ։

Ապին ձին տարավ տեղավորելու. ես խուրջինի կողքին թախտի վրա նստեցի ու այնքան հոգնած էի, որ նստելս ու քնելս մեկ եղավ։

---

*) Խրամ գետի կամուրջը։

Երբ աչքերս բաց արի, լուսացել էր, ապին թեյ էր պատրաստում։

— Վեր կաց, բալա ջան,— ասաց նա,— ջուր տար, դուրսը լվացվիր ու արի թեյ խմենք։

Նստեցի նրա կողքին, իմ թեյը լցրած՝ պատրաստ էր, երբ վերջացրինք, ապին սենյակի դուռը փակեց, բանալին գրպանը դրեց գնացինք գոմ, ձիուն էլ խոտ տվինք ու դուրս եկանք փողոց։

Նոր ես տեսա իսկական քաղաքը. և պետք է ասած, իմ երևակայության մեջ նա ավելի մեծ, հոյակապ ու մաքուր էր, քան այդ Յեղտոտ փողոցները, փոքրիկ, տեղ-տեղ էլ փլատակ տները։

— Ապի, սա՞ է քաղաքը։

Հայրս հասկացավ։

— Սա քաղաքի մի ծերն ա, այ, Հիմի գնում ենք իսկական, մեծ քաղաքը։

Ես հորս փեշը բռնած, գնում էի։ Ինձ ավելի շատ հետաքրքրում էին քաղաքի զարդարուն խանութները, սիրուն զարսած մարդերը... Իսկ ամենից շատ զարմանում էի, թե որտեղից են գալիս և ո՞ւր են գնում այդքան մարդիկ. նրանք այնքան շատ էին, որ մեզ ճամփա չէին տալիս ու բոլորը շտապում էին... Բացի այդ՝ ֆուրգոններ, սայլեր, կառքեր՝ իրար ետևից անվերջ... Իսկ տները, ճիշտ է, հետաքրքրում էին ինձ, բայց չէին վառում երևակայությունս։

Հեռվից երևաց լայն ափերի մեջ ընկած մի մեծ գետ։ Առանց վշշալու, առանց փրփրալու, հանդարտ հոսում էր։

—Ապի, այն ի՞նչ ջուր է,— ձեռքս մեկնելով այն կողմ, հարցրի։

— Քաղաքի Քուռն ա դա,— ասաց նա ու ձեռքս ամուր բռնեց։

Իսկույն հիշեցի հորս խոսքերը. «Ձանեմ կռնից բռնեմ, Քուռը ղղեմ»։ Ինչ-որ սարսուռ զգացի, բնաղդաբար ամուր կպա հորս։ Մի քանի ծուռ ու մուռ փողոցներ անցնելուց հետո, հասանք երկաթե մեծ կամուրջին։ Մտքումս ասացի. «Երևի հայրս այստեղից պիտի դցե ինձ ջուրը»։ Բայց չգիտեմ ինչու չէի վախենում։ Երբ հասանք կամուրջին, ես նայեցի ապնի աչքերին. նա այնքան բարի էր... փեշիցը կպա, ջրին նայելով անցանք։

— Ապի, ո՞վ է շինել այս երկաթե կամուրջը. ի՞նչու է ջուրը այդպես կանգնած, ո՞չ խշշում է, ոչ վշշում։

Լեզուս բացվել էր, իրար նեկից հարցեր էի տալիս. նա էլ կամ «հա» էր ասում, կամ «չէ»։ Մի տեսակ մտաղբաղ էր։

Մտանք մի մեծ, ծածկած փողոց. ապին կանգնեց մի խանութի առաջ։

— Աշկերտ չեք ուզո՞ւմ։

Խանութպանը նայեց ինձ ու ասաց.

— Չէ, բիձա, պուճուր ա...

Մտանք կողքի խանութը, նրանք էլ մերժեցին. անցանք դարձյալ մի քանի խանութ. ամեն տեղ նայում էին ինձ, չափում էին ոտից մինչև գլուխ ու ասում.

— «Չէ՛, բիձա»։

Մի քանի խանութ էլ անցանք ու կանգ առանք մի կրպակի առաջ. հորս հասակին մի տարիքավոր մարդ էր խանութի տերը։

— Բարով,— ասաց ապին։

— Բարում կենաս,— ասաց նա ու զարմացած նայեց հորս.

— Ինչ եք կամենում, բարեկամ։

Նա կարծեց հայրս ապրանք գնելու է եկել։

— Էս ըրեխին ուզում եմ աշկերտ տալ։

— Բա մեղք չէ, որ էս քորփա ըրեխան խանութի աշկերտ դառնա... Կկորչի, կգնա...

Հայրս մնացել էր մոլոր կանգնած։ Իսկ նա կարծես ինչ-որ մտածում էր։

— Ի՞նչի ըրեխին շկոլ չես տալի.

— Ուժս պատում չի... մի տուն քուլփաթ, ինքս մենակ մարդ...

— Դու մենակ քնելու տեղ արա. մնացածը հեշտ է։ «Համքարի»*) շկոլը լավ է, էնտեղ համ ուսում են տալի, համ արհեստ սովորեցնում. ճաշ էլ են տալի. իմ երկու տղին էլ էնտեղ եմ տեղավորել. դրա պես լավ ուսումնարան չկա։ Գնանք, կարելի է էս ըրեխին էլ ընդունեն։

Նա վերարկուն գցեց ուսին, շտապելուց միայն մի թևը հագավ ու ընկավ մեր առաջ։

---

*) Համքարի—արհեստավորների։

Հորս աչքերն ուրախությունից փայլում էին. մեջքը ուղղվել էր, կարծես մի մեծ բեռ էր ընկել ուսերից։

Ծածկված փողոցից դուրս եկանք, ծովեզերքը դեպի աջ, մի երկու փողոց էլ անցնելով, մտանք մի մեծ բակ։

Երեխաները վազվզում, խաղում էին։ Մի նիհար ու բարձրահասակ մարդ, ոսկե ակնոցներով մոտեցավ մեզ։

Մեզ տանող մարդը առանձնացավ նրա հետ ու սկսեց մտերմաբար խոսել։ Խոսելիս մատնանիշ էր անում ինձ։

Վերատեսուչը սիրալիր նայեց ինձ ու դիմելով հորս հարցրեց.

— Գրել-կարդալ գիտե՞։

— Հա, շատ թե քիչ սովորեցրել եմ. դե մեր գեղում ուսումնարան չկա, որ երեխան կանոնավոր մի բան իմանար, բայց շատ աչքաբաց ա։

— Իսկ թվաբանությո՞ւն։

— Թվաբանությունից լավ ա. միտքը սուր ա,— ասաց ապին։

— Լա՛վ, կքննենք, եթե շատ թույլ չլինի, կընդունենք։

Մարդը սեղմեց վերատեսչի ձեռքը, ապա դիմելով հորս, ասաց.

— Եթե երեխին չընդունեն, բերեք ինձ մոտ։

Հենց այդ ժամանակ զանգը խփեցին, երեխաները հավաքվեցին դասարանները։

Վերատեսուչը մեզ տարավ մի ընդարձակ սենյակ. հորս խնդրեց, որ նստի, ու սկսեց քննել ինձ։ Նախ թվաբանությունից. ես բոլոր հարցերին պատասխանեցի, մի երկու խնդիր էլ բերանացի լուծեցի։ Ապա սկսեց հայոց լեզվից. ես կարմրել, ամբողջ մարմնով դողում էի, թվում էր սրտիցս քաշում, մի բան են պոկում, քըրտինքը ճակատիցս կաթ-կթում էր...

Ապին խեղճ-խեղճ նայում էր ինձ, երևի զգում էր, որ չպիտի կարողանամ քննությունն տալ։

Լավ էր երկար չտևեց։

— Լեզվի կողմից մի փոքր թույլ է, բայց ինչպես տեսնում եմ, ընդունակ երեխա է. ոչինչ, շուտով կհասնի ընկերներին,— ասաց վերատեսուչն ու ցուցակագրեց աղջանունս, տարիքս, որ գյուղից լինելս ու դառնալով հորս ասաց.

— Մինդյան վկայականն անհրաժեշտ է, որքան կարելի է շուտով հասցրեք։

Հայրս շնորհակալություն հայտնեց ու գնաց դուրս։

Վերատեսուչն ինձ տարավ կողքի դասարանը, ուր պարապում էին թվաբանություն. ինձ տեղավորեց ու դուրս գնաց։

Երբ դասը վերջացավ, դուրս եկա դավիթ, տեսա հորս պատի տակին մի քարի վրա նստած։

— Ապի,— ասացի ես և ուրախ-ուրախ վազեցի ընկա նրա գիրկը։

— Ա՛յ, այս պատկերներով գիրքն ուսուցիչը տվեց, դաս նշանակեց «Հին տունը». վաղը պիտի անգիր անեմ...

Հորս դեմքին թեթև ժպիտ խաղաց։

— Հապա գիշերը քնելու տե՞ղ... — ու դեմքը նորից մռայլվեց։ Նրա տխրությունն աղջեց և ինձ վրա։ Ես էլ տխրեցի։ Հիշա, ո՞րտեղ պետք է քնել գիշերը...

Երեխաները վազվզում, ուրախ-ուրախ խաղում էին, ես հորս կողքին քարի վրա նստած, նայում էի նրա աչքերին, նրա վշտահար դեմքին ու մտածում...

— Ապի, եկ գնանք դյուղ, ես էլ չեմ վախենա,— հաստատ, ասացի ես։

— Չէ, բալա ջան, քեզ ես չեմ տանի մեր էն քանդվածը։

Նա տեղիցը վերկացավ, մի անգամ էլ զգուշավոր նայեց ինձ ու ասաց.

— Էստեղ մնա մինչև իմ գալը։

Այս ասելով նա շտապ դուրս գնաց։

Ջանը խլեցին, մտանք դասարան, նորից դուրս եկանք, վերջն աշակերտները բոլորը գնացին իրենց տները։ Ես մնացի մենակ։

Արևը թեքվել էր, ծառերի ստվերները երկարացել, օրը մթնում էր, ապին չկար. շուտ-շուտ մոտենում էի դարպասի մեծ դռներին, նայում էի դուրսը. ապին չկար ու չկար, քիչ էր մնում սիրտս ճաքեր. ո՞ւր գնամ, ի՞նչ անեմ։

Մեկ էլ տեսա ապին ուրախ-ուրախ ներս եկավ, թևիցս բռնեց ու ասավ.

— Գնանք, գիշերը քնելու տեղ արի քեզ համար։

— Ապի, ով գիտե Թառլանը ծախեցիր,— վախվխելով հարցրի ես ճանապարհին։

— Չէ՛, բալա ջան, գոմոմը կապած, իրա համար գարի ա ուտում։

Ես հանդատացա։

Սկանք մեր սենյակը, ապին խուրջինը բաց արավ, պաշարը դարսեց սեղանին... Թեև սովից սիրտս դնում էր, բայց ես վազեցի գոմ, Թառլանի գլուխը սեղմեցի կրծքիս, ճակատը համբուրեցի ու եկա հորս մոտ։

Այդ օրը հալալ հաց կերանք, հորս լեզուն բացվել էր, ու խոսում էր հեռս։

— Դու լավ աստղի տակ ես ծնված, որդի, բախտ ունես. ուր գնայինք, աջողվեց, տեսա՞ր էն օտար մարդը ո՞նց առաջ ընկավ... Բա մեր Շահնազարն էն, որ կայարանումը բանում աս։ Ձին դուրս քաշեցի մեյդան, ծախում էի. ո՞րտեղից որտեղ դուրս եկավ նա. ձին ձեռքիցս խլեց. «Մի ըրեխա չի՞, աչքիս լսի պես կպահեմ, իրար հետ կապրենք»,— ասաց ու ձին տարավ, կապեց գոմոմը։

— Դե, ես էլ պարտքի տակ մնացող մարդ չեմ ... Դու մենակ լավ սովորի, մեծ մարդ դառ... Այդպես խոսում ու ուտում էր, ես նրան այդպես ուրախ տեսած չէի։

Այն տունը, որտեղ ես պիտի մնայի, գտնվում էր քաղաքի մի ետ ընկած թաղամասում, կայարանի մոտերքը։

Ապին առավոտներն ինձ տանում էր ուսումնարան, երեկոները դալիս՝ տուն էր բերում։

Մի երկու օրից, ես արդեն սովորել էի ճանապարհը, մենակ գնում գալիս էի։

Ապին Թառլանին նստած եկավ, ձիուց իջավ, գրկեց ինձ, ամուր-ամուր համբուրեց։

— Մնաս բարով, Մաղի ջան, խելոք կաց, քի մատաղ,— ասաց նա, թաշկինակը հանեց, երեսը շոտ տվեց, աչքերը սրբեց. նորից նստեց Թառլանին ու ճանապարհ ընկավ...

Իր կյանքում առաջին անգամն էր նա ինձ համբուրում. ես այնքան էի հուզվել, որ ոչ մի խոսք չկարողացա արտասանել. ուզում էի ասել՝ նանին շատ բարով արա, Կատինին, Սարինին... երեխանցը...

— Ապի, ապի,— շշնջացի ես նրա ետևից...

Նա ետ նայեց, ձեռքը բարձրացրեց, մեր հայացքները հանդի-

պեցին իրար. երևի նա էլ էր հոգնված ինձ պես, ձին քշեց, ընկավ կողքի փողոցն ու անհայտացավ աչքերիցս։

ԱՐՀԵՍՏԱՎՈՐՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

Ես վերադարձա տուն, գլուխս թաղեցի բարձի մեջ ու սկսեցի հեկեկալ։ Տանը մարդ չկար. այդ մեծ քաղաքում ես ինձ զգացի մենակ, որբ ու անխնամ...

Դուռը բացվեց. խնչոն էր։

— Ադա, Մադի՞։

— Հ՞ը,— ասացի ու տեղիցս վեր թռա։

— Ադա, էդ ինչի՞ ես լաց եղել։

— Ապին գնաց գյուղ,— ասի ես ու նորից սկսեցի հեկեկալ։

Խնչոն մոտեցավ, ձեռքը դրեց ուսիս ու ասաց.

— Վա՜յ, Մադի՞... բա ես հենց գիտեի իգիթ ես, բա տղամարդը լաց կլինի՞... որ կեսդ էլ կտրած ըլնես, աչքդ չպիտի թաց անես։ Փեշաքարի շկոլն ես ընկել, գիտե՞ս ի՞նչ ուսումնարան ա. դա որ պրծնես, ինձ մոտ վադզալ պիտի տանեմ քեզ։ Գնա երեսդ լվա, սրանից հետո որ աչքերդ թրջել ես, վայ քու մեղքը... Ինձ խնչո կասեն, ես քու նանն ու ապին չեմ, որ «քի մատաղ», «քի ղուրբան» ասեմ...

Ես վախեցած նայեցի նրան. աչքերից կարծես կրակ էր թափվում, մոտ երեսուն տարեկան առույգ երիտասարդ էր. դեմքը վերին աստիճանի արտահայտիչ, նա տեղովը մեկ նստած էր... Նրա խոսքերն աղդու էին, թափանցում էին սրտիս խորքը։

Երբ լվացվեցի, ներս եկա. նա բոլորովին փոխված էր. մոտեցավ, ուղիղ աչքերիս նայելով՝ ասաց.

— Դեշ սիրտ ունես, Մադի ջան, ես որ էդպես սիրտ ունենայի, կրծքիցս կհանեի, դեն կդցեի...

Խեղճ-խեղճ նայեցի ու լռեցի... Շատ ուշ, երբ կյանքի չարն ու բարին իմացա, միայն այն ժամանակ հասկացա նրա այդ խոսքերի իմաստը...

Երեկոները նա ժամերով խոսում, խրատում էր, ես ակնածությամբ լսում էի։ Նրա յուրաքանչյուր խոսքը տպավորվում էր իմ սրտում ու այդ մանուկ օրերիս բաղձանքն էր, որ մի խնչո էլ ես դառնամ...

Ուսումնարանի ճանապարհն արդեն սովորել էի, մենակ գնում-գալիս էի։ Ինձ դժվարացնում էր լեզուներ չիմանալը։ Խոսում էին վրացերեն, ռուսերեն, իսկ ես գիտեի միայն հայերեն։ Բայց շուտով ընտելացա, նույնիսկ անհրաժեշտ բառեր յուրացրի։

Մեր արհեստանոցը դեռ կարգի չէին բերել. ուսումնարանը նոր էր բացվել. մի շաբաթ ավել գնում-գալիս էինք, մենակ ուսումնական մասն էր կանոնավոր։ Մենք ազատ ժամանակ խաղում, վազվզում էինք. պետք է ասած, շատ շուտ ընտելացա ու սիրեցի քաղաքի երեխաներին։

Մի օր վերատեսուչը եկավ դասարան, դիմելով մեզ հարցրեց.

— Ո՞վ ինչ արհեստ է ուզում սովորել։

Նա մի առ մի թվեց բոլոր արհեստների անունները՝ «փականագործի», «ատաղձագործի», «դարբնի» և «ձուլողի»։ Ինձ Խեչոն ասել էր. ձեռքս բարձրացրի ու ասացի.

— Ես ընտրում եմ փականագործի արհեստը։

Վերատեսուչը քննող հայացքով նայեց ինձ. երևի իմ ֆիզիկական կազմվածքն էր դիտում։

— Լավ,— ասաց նա ու աղգանունս գրեց մատյանում։

Երբ ամբողջ դասարանը ցուցակագրած էր, մի մեծ ճաո ասաց։ Այսքանն էր տպավորվել իմ մեջ, որ ամեն մի մարդ արհեստ պիտի գիտենա. ով փեշակ չունի, նա կորած է. «Արհեստ իմացողի մատները ոսկի են»... Այդ խոսքերի վրա ես ակամայից նայեցի իմ ձեռքերին, փոքրիկ մատներս շարժում էի, կարծես ինչ-որ որոնումների մեջ էի...

Նա դարձյալ շատ բան ասաց, վերջը ջերմ խոսքերով շնորհավորեց մեզ։

— Վաղն առավոտ,— ասաց նա,— կգաք արհեստանոց, կըստանաք գործիքներ ու կսկսեք աշխատել։

Մենք ուրախությունից թռչկոտում էինք. երբ եկա տուն, բոլորը պատմեցի Խեչոյին ու ավելացրի.

— Փականագործությունն ի՞նչ է որ, մի շնչում կսովորեմ։

Ինձ թվում էր, որ դա էլ «այր-բեն»-ի պես հեշտ է։

Խեչոն մի կուշտ ծիծաղեց։

— Դու մի տարում որ կարողանաս կանոնավոր մուրճ բռնելը սովորես, լավ ա, հապա ուղիղ խարտոցե՞լը, գործիքներ մխե՞լը...

նորոգե՞լը... Էնքան բան կա՞, բալա ջան, դու ասա ուզուփ ունենաս։

— Ուզուփն ի՞նչ է, քեռի։

— Ուզուփը, ուզուփը... ոնց ասեմ, յանի թե, շնորհք, զեհմ, զայրաթ...

Իհարկե, էդ խոսքերից բան չհասկացա, ու ամբողջ ժամանակ դլխումս պտտվում էին խեչոյի ասաց խոսքերը։ «Ուզուփ», «զայրաթ»... Պատկերացնում էի մեր դյուղի դարբնին, երկաթները ծեծելիս, մեր Բաննահ Աթոյին, քար ու կրով դուռ-դուռ պատեր շարելիս... Այդ մտածմունքների մեջ ամբողջ գիշերը չափ ու ձև էի անում...

Առավոտը շատ վաղ զարթնեցի, տեղիցս վեր թռա, շորերս շտապ հագա, կայարանի «դուդուկը» հնչեց։ Խեչոն վեր կացավ, գարմացած նայեց ինձ ու ասաց.

— Ա՛յ զայրաթն էդ ա, հա՞, տես ոնց ես վեր թռել...

Մենք միասին դուրս եկանք. նա գնաց իր արհեստանոցը, ես՝ իմը։

Վերատեսուչն ու վարպետն եկան արհեստանոց ու մեկ-մեկ ազգանունով կանչում էին մեզ։

Երբ իմ ազգանունը լսեցի, կեծ-կարմիր կտրած՝ ներս մտա ու կանգնեցի վարպետի առաջ։

Նա զննողաբար նայեց ինձ. մի վայրկյան տիրեց լռություն։

Վարպետը, որ մի շեկ մազերով, համակրելի դեմքով երիտասարդ էր, մկաններս շոշափեց, թևերս սեղմեց, ապա ժպտալով հարցրեց.

— Կարո՞ղ ես փականագործ լինել։

— Կարող եմ,— ասացի ու վստահ նայեցի նրան։

— Ա՛յ, տես, պետք է լավ աշխատես,— ասաց նա ու ինձ տարավ դազգահի վրա ամրացրած, մի ցածլիկ մանդանայի առաջ կանգնեցրեց։

— Սա կլինի քո մանգանան, էս էլ քո գործիքները։

Վարպետը դուրս քաշեց կողքի արկղը, որտեղ դասավորված էին մի գեղեցիկ մուրճ, մի տափակ խարտոց, մի պողպատի կըտրիչ, մի անկյունաչափ։ Արկղիկը նորից փակեց, բանալին տվեց ինձ ու ասաց.

— Սպասիր այստեղ, ոչ մի տեղ չդնաս։

Երբ այդպես մոտ քսան հոգի շարվեցին իրանց հատկացրած մանգանայի շուրջը, բերեցին իրենց առաջին փորձ աշխատանքի համար թուջից ձուլած, մոտ տաս բթաչափ մեծությամբ հարթ «քառակուսի»։ Դա կոչվում էր առաջին «պրիոմը», մեկ-մեկ բաժանեցին մեզ։ Վարպետը հերթով մոտենում, պրիոմն ամրացնում էր մանգանայի բերանին. ցույց էր տալիս, թե ինչպես պետք է տաշել — կուռը շարժել, որ հարվածներն ուժեղ լինեն։

Ես հեռվից նայում էի, թե ինչպես են պրիոմն ամրացնում մանգանայի վրա, ինչպես են թուջի երեսը տաշում... Մինչև վարպետի ինձ հասնելը, ես պրիոմն ամրացրել, մի ափն էլ տաշել էի...

Երբ վարպետը մոտեցավ ինձ, ես կանգ առա։

— Շարունակիր, շարունակիր,— ասաց նա ու սկսեց նայել, թե ինչպես եմ կուռս շարժում։

— Մուրճն ամուր սեղմիր, կուռդ ազատ, ավելի լայն շարժիր, կտրիչն ավելի թեք բռնիր. էդպես, էդպես,— ասաց նա։

Ես ոգևորվեցի, ավելի շուտ շփոթված՝ վարպետի ցուցմունքի համաձայն, մուրճը տարա-բերի ու փոխանակ կտրիչին խփեցի ձեռքիս երեսին. ձեռքս իսկույն արյուն-լվիկ եղավ։

— Ոչինչ, էդ էլ է հարկավոր, դու ինձ մոտ լավ վարպետ կդառնաս,— ասաց նա ու դնաց կողքիս աշակերտի մոտ։

Բոլորս իրար նայելով, Իրը՝ խկ-հա Իրը՝ խկ տաշում էինք։ Արհեստանոցում տիրում էր մի առանձին կենդանություն. բոլորս եռանդով աշխատում էինք։

Վարպետն ամբողջապես էներգիա դարձած, մոտենում էր այս ու այն աշակերտին, ուղղում նրանց սխալները։

Ես աչքիս տակով նայում էի ընկերներիս, նրանք դեռ մի կողմն էլ չէին տաշել, իսկ ես համարյա ավարտում էի։ Նրանք նախանձով էին նայում ինձ, իսկ ես ավելի ու ավելի եռանդով էի աշխատում։

Հենց առաջին օրից զգացի, որ մեր մեջ կա մանկական մի անմեղ ու բարի նախանձ, մի ինչ-որ ձգտում բոլորից առաջ անցնելու. բոլորին հաղթելու և կարծես այդ ներքին մրցումն էր, որ մղում էր ինձ առաջ...

Երբ տաշելը վերջացրի, պրիոմն առա, վազեցի վարպետի մոտ և վստահ, որ նա պիտի հավանի, ասացի.

— Լավ եմ տաշել, չէ՞։

— Չէ,— ասաց նա կտրուկ,— տեսնո՞ւմ ես, էստեղ փոս է քնկած, իսկ մյուս կողմը դուրս է սլրծած, նայի՛ր անկյունաչափը հարթության վրա խաղում է. նա իր բոլոր կետերով պիտի միանա հարթությանը։

Ես կարմրել էի. երբ նա տեսավ իմ դեմքը, մի առանձին բարի ժպիտ խաղաց նրա շրթունքներին։

Պրիոմս առա, վազեցի իմ տեղն ու սկսեցի ուղղումներ անել։

Զանգը տվին, հարվածները բոպեապես դադարեցին, դրան փոխանակեց մանկական կենդանի աղմուկ...

Գործիքները հավաքեցինք, բանալիները կախեցինք իրենց համարներին ու շտապեցինք տուն։

Չնայելով մի քանի ժամ էի աշխատել, ինձ թվում էր, որ ես արդեն «սլեսար եմ» դարձել. քայլերս մի տեսակ խրոխտացել էին։

Իմ արկղիկը, մանգանան, մուրճը, խարտոցն աչքիս չէին հեռանում... «Ե՞րբ պիտի մթնի, նորից լուսանա, որ գնամ աշխատեմ»,— մտածում էի ես։

Խնչոն եկավ։

Ես ուրախ-ուրախ պատմում էի նրան։ Մեծ նորություն էր ինձ համար, ես մի առ մի նկարագրում էի իմ գործիքները. հիացած էի մանգանայով։

— Գիտե՞ս, պրիոմն իր բերանի մեջ էնպես ամուր սեղմում է նա... ոգևորված խոսում էի ես, իսկ նա ծիծաղում էր իմ անմեղ հրեխայության վրա։

— Բա ձեռքիդ ո՞նց խփեցիր,— հարցրեց նա։

— Ոչինչ, վարպետն ասաց՝ էդ էլ է հարկավոր,— ասացի ես։

Ամոթխած նայեցի ու չդիտեի ձեռքս որտեղ պահեմ։ Այդ գիշեր համարյա չկարողացա քնել. ամբողջապես իմ գործիքների հետ էի. մերթ մանգանան էր աչքիս առաջ, մերթ անկյունաչափը, մերթ կտրիչն ու մուրճը...

Դեռ լույսը չբացված, խնչոյին թողի քնած ու շտապեցի ուսումնարան։ Ծառան զարմացած նայեց ինձ։

— Ա՛յ տղա, գիշերը քունդ չտարա՞վ,— ասաց նա։

— Չէ, բիձա,— ասի ես ու նստեցի երկար նստարանին, մեր բակի մեծ ծառի տակը։

Մառախլապատ առավոտ էր. երեսիս փչում էր սառը քամին, ծառերի ճյուղերը օրորվում էին գլխիս վերև, տերևները խշշում ու անձրևի կաթիլների հետ մեկ-մեկ ընկնում էին ցած։ Ինձ թվաց, որ մեր սարերում, մեր ձորերումն եմ... Ջրերը վազում են, կով ու հորթ բառաչում, ես անձրևի տակ վազվզում եմ այս ու այն կողմը, օգնում եմ նանին։

— Խեչոմյան Մաղի...— ականջիս հասավ մեր աշակերտների ձայնը։

Երբ աչքերս բաց արի, սիրտս ուժգին բաբախում էր. նայեցի շուրջս աշակերտներ՝ հատ ու կենտ եկել, հավաքվել էին արհեստանոցի ծածկի տակ... Նայեցի ու նորից աչքերս փակեցի. չէի կարողանում անջատվել իմ մտապատկերներից, այնքան հարազատ, սրտագին էին նրանք իմ մանուկ հոգու համար... Լսվեց զանգի ձայնը, տեղիցս վեր կացա և շտապեցի արհեստանոց։

ԻՄ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

Ամեն ինչ փոխվել էր, ամեն ինչ հեղաշրջվել իմ մեջ։ Կարծես ես այլևս այն մեր գյուղի խեչմանց Մաղին չէի, մի նոր մարդ էր առաջացել իմ մեջ։

Այսքան կարճ ժամանակամիջոցում ի՞նչը փոխեց ինձ. արհե՞ստը, մո՞ւրճն ու խարտո՞ցը, խեչո՞ն, Ստեփա՞նը, այն ոսկե ակնոցավոր մա՞րդը, շիկ մազերով վարպե՞տը, մեծ հսկայական քաղա՞քը, թե՞ մի ուրիշ հանգամանք, որ ես չէի կարողանում ըմբռնել, հասկանալ։ Մի բան միայն ինձ համար պարզ էր, որ ես այլևս առաջվանը չէի։ Իմ մեջ կատարվել էր մի մեծ փոփոխություն՝ թեև մշուշապատ, անկազմակերպ, բայց կատարվել էր։

Ո՞ւր պիտի տանի դա ինձ, ի՞նչ ուղի պիտի բացվի իմ առաջ, ի՞նչ է սպասում ինձ... Իմ մանուկ հոգին այդ որոնումների, ձգտումների մեջ խարխափում էր... Պիտի կարողանա՞մ արդյոք ինձ պատած սարդի ոտայնների թելերը կտրատել, ազատ դուրս սողալ, թե՞ պիտի ավելի ու ավելի խճճվեմ ու կուլ գնամ քաղաքի ժխորի մեջ...

Թերևս մի ներքին հույս, թանձր քողի տակ թաքնված, մի ջերմ զգացմունք ապագայի վառ հույսերով, ողևորում, բաջալերում էր ինձ...

Օրը մթնեց. լամպը վառեցի ու սկսեցի դասերս պատրաստել։ Երկու ուսուցիչ ունեինք. մեկը հայոց լեզվի ու կրոնի, մյուսը թվաբանության ու բնագիտության։ Երկուսն էլ հենց առաջին օրերից լավ էին վերաբերվում դեպի ինձ։ Ես էլ իմ հերթին, աշխատում էի ճշտությամբ կատարել նրանց պատվերները։ Դասերս պատրաստում, խնդիրները լուծում էի, բոլոր հարցերին պատասխանում ու դրանով ավելի ու ավելի էի կապվում իմ ուսուցիչների հետ։

Հայոց լեզվի ուսուցիչը սև աչք ու ունքով, սև մեծ մորուքով մարդ էր։ Նա իրեն պահում էր շատ լուրջ ու խիստ և շատ կրոնամոլ էր։ Վա՜յ նրան, ով իրեն անկարգ էր պահում... Ես էլ դրանց թվին էի պատկանում... Չգիտեմ ինչո՞ւ, նրա դասի ժամանակ հանգիստ չէի կարողանում մնալ... Մի անգամ նա ինձ խիստ նկատողություն արավ այդ առթիվ...

Մեր թվաբանության ուսուցիչը նույնպես մաղով, միրուքով մարդ էր, բայց սա ավելի շեկ էր ու երիտասարդ։ Հայանի մաթեմատիկոս-բնագետ էին համարում նրան ընկերներս։

Նա դասարան էր մտնում լուրջ ու մտազբաղ. մեղանիչ մեկն ու մեկին կանչում էր գրատախտակի մոտ, ինքն էլ կանգնում էր նրա կողքին, թելադրում խնդիրը։ Աշակերտը գրում էր գրատախտակի վրա ու ամբողջ դասարանով լուծում էինք. այդ առարկայի մեջ ես առաջինն էի. միտքս սուր էր. իսկույն ըմբռնում էի նրա ասածները։ Ձեռքս բարձրացնում ու, թեև անկապ բառերով, բայց խնդիրը լուծում էի ուղիղ։ Կարճ ժամանակում այնքան էի ընտելացել, որ ոչ մի դժվարության առաջ կանգ չէի առնում։

Հետևյալ օրվա համար երեք խնդիր էր տված. երկուսը հեշտ էր, մեկը՝ դժվար։ Մի փոքր շարշարվելուց հետո խնդիրները լուծեցի ու մաքուր արտագրեցի։ Հայոց լեզվից ունեինք կարդալու ու պատմելու մի արձակ, և մի ոտանավոր՝ անգիր անելու։ Մի շնչում սովորեցի, անգիր արի ու պրծա։

Քանի դեռ դասերով զբաղված էի, ժամանակը սահում էր անկասելի։ Երբ դրքերս հավաքեցի, պայուսակս կապեցի, մի ծանր թախիծ եկավ, պաշարեց ինձ։ Սենյակի չորս պատերը, առաստաղը կարծես ճնշում-խեղդում էին ինձ... Այս մեծ քաղաքում առաջին անգամն էի մնում մենակ։ Դիշերվա իլավարը դրսի խորը լռությունը սարսափ էին աղդում ինձ... Չէի վախենում, դեռ շատ

մանուկ հասակից չգիտեի ահն ինչ է, մեն-մենակ սար ու ձոր էի ընկնում ու ժամերով թափառում։ Դա չէր պատճառը. ինձ ճնշում էր մենակության տպավորությունը. նոր էի զգում խնչոյի հետ կապված լինելս...

Երբ նա աշխատանքից վերադառնում էր, ես վազում էի ընդառաջ. նրա հայացքը, դեմքը, բոլոր շարժվածքները, խմաստալից խոսքերն ինձ թև ու թիկունք էին տալիս։ Նրա ներկայությամբ ես իմ մեջ մեծություն, հոգեկան ուժ, կարողություն էի զգում։

Նա պատմում էր իրենց գործարանի ամեն ու դարձից, ինձ համար հետաքրքիր, ուսանելի։ Բայց այսօր, մենակության մեջ սարսուռ էի զգում, կարծես մի անհայտ ձեռք խեղդում էր ինձ...

ԵՐԳԻԿԸ

Տուն հասնելուն պես, վրա ընկա նանի թխած դաթային. մի շնչում կեսը վերջացրել էի, վառվիկի բուրդ ու ճիվը կրծոտում էի. հանկարծ հիշեցի մեր հարևանի աղջկան. «վայ երեխա է, արի նրան էլ բաժին հանեմ»,—մտածեցի, ես. վերցրի մի տասը ձու, դարսեցի ափսեում, վրան էլ մի դաթա ու անհամարձակ բախեցի նրանց դուռը։ Ուզում էի, որ աղջիկը դուրս գա։ Սրտովս եղավ, նա էր։ Մեր ամոթխած հայացքներն առան իրար։

— Արվիկ, սա էլ քո բաժինն է, գյուղից են բերել...

— Շնորհակալ եմ,— ասաց նա. ափսեն ձեռքիցս առավ ու ներս տարավ։

Ես մնացել էի դռների եռանում կանգնած, քիչ հետո նա ափսեն ձեռքին դուրս եկավ։

— Մայրիկս շատ շնորհակալ է,— ասաց,—ինչո՞ւ եք անհանգստանում, նեղություն կրում...

Ես այդ բառերից բան չհասկացա.— «Ի՞նչ քաղաքավարի խոսքեր են,— մտածում էի ես ու նայում աղջկան։

— Քո անունը ի՞նչ է,— դառավ նա ինձ։

— Մադի՞,— ասացի ես։

— Մադի, Մադի. սիրուն անուն չի,— շրթունքները ծամռելով խոսեց ինքն իրեն։

— Բա ո՞րն է սիրունը։

— Ա՛յ, Սուրեն, Վազգեն, Գուրգեն...

— Քո անունն էլ սիրուն չէ,— ժպտալով ասացի ես։

— Բա ո՞րն է սիրունը։

— Ա՛յ, Հերիքնա՞զ, Գյուլնա՞զ,— տվեցի իմ գիտցած, մեր գյուղի աղջկերանց անունները։

Նա ուրախ, քրքջալի ծիծաղեց իմ այդ անունների վրա։ Ես էլ իմ հերթին։

— Դու քույր ունե՞ս։

— Ունեմ, այն էլ չորսը. իսկ դո՞ւ։

— Ես ոչ քույր ունեմ, ոչ եղբայր։

— Դրա համար ես այդպես երևս առա՞ծ։

Նա ժպտաց ու սիրալիր նայեց ինձ։

Ո՞ր ուսումնարանումն ես սովորում, Արփիկ։

— Հովնանյան դպրոցում, Մադի,— ասաց մինչև ականջները կարմրեց ու փախավ...

Այնքան գեղեցիկ էր նա այդ վայրկյանին... Նրա պատկերն աչքիս առաջից չէր հեռանում։ Իմ քույր Մարինին նման է, մտածում էի ես ու կարծես մեր երեխաների կարոտը նրանից էի ուզում առնել...

— Արփիկ, Արփիկ,— գոչեցի ու առանց երկար մտածելու վազեցի, բախեցի նրանց դուռը։

— Հը, ի՞նչ ես ուզում, Մադի։

— Արի, մի բան պիտի ասեմ քեզ։

Նա, լուրջ դեմք ընդունելով, հետևեց ինձ։

— Նստիր,— հրամայեցի ես։

Նա, ավելի շուտ հենվեց սեղանին, քան նստեց աթոռին, մատներով սկսեց խաղալ Ղղիասպանակի հետ ու աչքի տակով դիտել իմ բոլոր շարժվածքները։

Պահարանից հանեցի զայմաղի կճումը, ափսեն լցրի շերտավորած, դեղին կարագի նման սերուցքը։

— Սա իմ նանի պատրաստածն է. մի կեր, տես ինչ համեղն է,— ասացի ու ափսեն քաշեցի նրա առաջ։

Նա մի փոքր կանգ առավ, մտածմունքների մեջ ընկավ. ուտե՞, թե՞...

— Ուզո՞ւմ ես, տար մայրիկիդ,— ասացի ես, հասկանալով նրա միտքը։

— Կարելի՞ է։

Նորից ամբողջ դեմքով կարմրեց նա։

— Կարելի է, իհարկե, կարելի է,— թեև ներքուստ չէի ուզում, որ նա գնա իմ մոտից։ Բայց, ասացի.

— Ա՛յ, այն կարմիր խնձորն էլ վերցրու, Արփիկ...

— Ինչ լավ տղա ես,— բացագանչեց նա, ձեռքը մեկնեց ու կանգ առավ, կարծես չէր համարձակվում մի այդպիսի քայլ անել։

— Վերցրու, Արփիկ ջան, վերցրու, այդ բոլորը քոնն է,— ասացի ու քնքշաբար նայեցի, ինչպես իմ հարազատ քրոջը։

Նա մի ձեռքում խնձորը, մյուսում՝ սերուցքը բռնած, իր սիրուն հայացքը գցեց ինձ ու առանց շտապելու, ետ-ետ նայելով գնաց...

Ընկա թախտին ու տարվեցի ինձ պաշարող խոհերով։ Մեկ էլ հանկարծ լսեցի երկչոտ քայլվածքի ոտնաձայն։ Մինչ ուզում էի ես ոտքի կանգնել, ընդառաջ գնալ, նկատեցի, որ Արփիկն է... տեղիցս չշարժվեցի... Նա դաղտագողի, մի թեթև ոստյունով թռավ-ընկավ թիկունքիս ու, իր փոքրիկ ափերով աչքերս փակեց։

— Ո՞վ եմ... թե իմանա՞ս,— ականջիս հասավ նրա ձայնը։

— Հերիքնա՞զը... Գյուվնա՞զը...

— Չէ, չէ... — աչքերս ամուր սեղմած քրքջում էր նա — Չգտա՞ր... չգտա՞ր։

Նա նորից քրքջաց։

— Գտա... գտա... իմ փոքրիկ քույր Մարենն ես...

— Վա՛յ... Արփիկն եմ... չես ճանաչո՞ւմ,— բացագանչեց նա ու ձեռքերը քաշեց երեսիցս։

— Չէ՛, դու Արփիկը չես, դու իմ քույրն ես։

— Հա... դով էլ իմ մեծ եղբայրն ես... Չէ՞ որ ես եղբայր չունեմ։

Այդ ասելով նա այնպես սիրալիր նայեց ինձ, որ ես այլևս չկարողացա ինձ զսպել ամուր սեղմեցի նրա ձեռքերը։

Ամոթխածության մի անմեղ քող պատեց մեր մանկական դեմքերին... Երկուսս էլ կարմրեցինք... Երկուսս էլ լուռ էինք, տարված վսեմ զգացմունքներով, որ այնքան հարազատ է մանուկ սրտերի համար...

— Մադի, մենակ որ մնացիր, շատ տխրեցի՞ր։

— Հա, Արփիկ, առանց խեչոյի այնքան տխուր, այնքան տրխուր էի... Դու որ չինեիր, ես ի՞նչ կանեի...

Լեզուս բացվել էր, ուզում էի երկար խոսել նրա հետ, հազորդակից անել իմ բոլոր տպավորություններին...

Դուռը բախեցին։

Վեր-թռանք։

— Մայրիկս է,— ասաց Արփիկը։

Մայրը բերել էր մեզ համար մի ափսե լիքը շոր միրգ։

Մի վայրկյան սիրուս թռավ. հիշեցի մորս... բայց սա նման չէր իմ նանին։ Նախ շատ ջահել էր, բարձրահասակ, սև աչքունքով և այնպես սիրուն չէր, ինչպես իմ նանը։

Ափսեն ղրեց պահարանում ու զննող հայացքով նայեց ինձ։

Ես շփոթվել, մնացել էի կանգնած։

— Մայրիկ, մենք քույր-եղբայր ենք դառել, գիտե՞ս,— բացականչեց աղջիկն ու իր պայծառ աչքերը հառեց մորը։

— Լավ եք արել,— ասաց մայրը. շոյեց աղջկա մազերն ու սիրալիր նայելով ինձ՝ հարցրեց.

— Անունդ ի՞նչ է, որդի։

— Մաղի է,— իմ փոխարեն պատասխանեց Արփիկը։

— Մաղի՞...

Ինչ-որ տարօրինակ թվաց նրան իմ այդ անունը։

— Քա՞նի տարեկան ես, Մաղի,— դ տառը փոխելով ռ-ի, հարցրեց նա։

— Տասներեք տարեկան եմ,— պատասխանեցի ես, առաջվա ճնշվածությունից մի փոքր ազատված։

— Մայր ունե՞ս։

— Այնպիսի լավ նանի ունի ո՞ր,— նորից միջամտեց աղջիկը։

— Բա էս զարիրության մեջ, առանց նանի ո՞նց ես դիմանում,— դիմեց նա ինձ։

— Մեր գյուղում ուսումնարան չկա, եկա այստեղ սովորելու,— մեծի դիրք ընդունելով պատասխանեցի ես։

— Ճիշտ չի ասում, մայրիկ, գյուղից փախել, եկել է ու հիմա այնպես է կարոտել իր նանին, որ քիչ է մնում լաց լինի ու նորից փախչի, գնա գյուղ,— շարաճճի հայացք գցելով վրաս ասաց նա։

Ես լռել էի, չէի կարողանում ազատ խոսել. այդ կնոջ ներկայությունը ճնշում էր ինձ։ Որքան աղջիկը հարազատ էր ինձ, այնքան մայրն օտար... Ես սրտանց ուզում էի, որ նա շուտով գնա...

Կարծես մայրը հասկացավ իմ միտքը. խղճահարության պես մի հայացք գցեց վրաս, ապա դիմելով աղջկանը՝ ասաց.

— Արփիկ, խելոք կաց, շարություն չանես. ինձ նույնպես խրատեց ու հեռացավ։

Մոր գնալուց հետո, Արփիկն ուրախ ու կայտառ, թռավ թախտին, նորից իջավ, հրեց ինձ, քիչ էր մնում վայր գցեր. նորից ցատկեց ու իր զուլալ քրքիջով լցրեց իմ մռայլ սենյակը...

Նրա ուրախությունն ինձ էլ վարակեց. սկսեցի ես էլ թռչկոտել, պտտվել սեղանի շուրջը. ուզում էի բռնել նրան, բայց նա ճարպկությամբ խույս էր տալիս. մեկ սեղանի տակն էր մտնում, մեկ վրան էր բարձրանում, մութաքաներն էր շպրտում ինձ վրա, թախտին էր ընկնում... Սենյակը տակն ու վրա էր եղել։ Ես մոռացել էի և՛ ինձ և՛ Խեչոյին,— ռամմնարանը, իմ պրիոմը. միակ մարդն այդ անմեղ արարածն էր, որ իր կենդանությամբ, իր վառվռուն աչքերով կաշկանդել էր ինձ։

— Բավական է, Արփիկ, հերիք շարություն անես, մայրիկդ կբարկանա,— ասում էի ես, բայց նա ավելի ու ավելի էր ոգևորվում։ Այտերը կարմրել էին, աչքերը՝ կրակ, վառվռուն հայացքով նայում էր ինձ ու նորից թռչկոտում շուրջս...

— Կբռնեմ, Արփիկ, կբռնեմ,— ասում էի ես։

— Չես կարող, Մադի, չես կարող,— շարժվում էին նրա շրթունքները, փայլում էին սպիտակ, մարգարտանման ատամներն ու նա փոքրիկ այծյամի նման թավռում, փախչում էր ձեռքիցս...

Թախտ ու սեղաններն էին մեր բարիկադները. ես բարձրանում՝ նա իջնում էր, ես իջնում՝ նա թռչում էր վեր, պտտվում էինք սեղանների շուրջը։

— Արփի՛կ, կանգնի՛ր,— մեկնում էի ձեռքս։

— Մադի բռնի՛ր։

Նա մի վայրկյան կանգ էր առնում ու նորից թռչկոտում։ Այդ վայրկյաններին նա ավելի էր գվարթանում, ավելի էին այրվում նրա աչքերը։

Մի ճիգ, մի ոստյուն, և Արփիկն ընկավ իմ ձեռքը։

— Բռնեցի՞... բռնեցի՞,— գոչեցի ես։

Նա երկու ձեռքով բռնել էր ինձ և ամուր սեղմել, նայում էր աչքերիս ու ժպտում... Կարծես դա նրա խաղի շարունակությունը լիներ։ Մեր մանուկ օրտերը ուրախ էին, մենք վսեմ հայացքով նա-

յում էինք միմյանց... Ճիշտ է, վայրկյաններ էին դրանք, մանուկ սրտերի հուզիչ վայրկյաններ (որ քիչ է պատահել հետո իմ կյանքում), բայց դա այնքան խորն էր տպավորվել, որ մինչև հիմա մնացել է անջնջելի իմ հիշողության մեջ... Ու միշտ, երբ հիշում եմ Արփիկին, մի ներքին ջերմություն եմ զգում ու ցավում եմ, որ կյանքիս մեջ մի անգամ միայն ապրեցի այդքան անմեղ, անարատ զգացմունքներով։

Արփիկն, ազատվելով իմ ձեռքից, հանդարտ քայլերով մոտեցավ պահարանին, հանեց մոր բերած մրգերը, դրեց սեղանին. մի աթոռ ինձ առաջարկեց, ինքն էլ նստեց իմ դիմացը, ու սկսեց.

— Այո՝ գեղձի շիր է, գիտե՞ս, շատ համեղ է. սա տանձ է, ա՛յ, սերգևիլն էլ շատ լավն է, կե՛ր,— հրամայեց նա։

Դիմացս նստածը, կարծես քիչ առաջվա կայտառ աղջիկը չէր, որ ողնրված թռչկոտում, թռվռում էր իմ առաջ... Դեմքը լուրջ, հայացքը՝ հեզ, հանդարտ, ասում, խոսում էր ինձ հետ։

— Արփի՛կ,— լսվեց դրսից մոր ձայնը։

— Գալիս եմ, մայրի՛կ,— ասաց նա ու առանց շտապելու, տեղիցը վեր կացավ, նայեց ինձ, մի փոքր կանգ առավ. ինչ-որ մտածում էր։

— Ես էլի կգամ, Մադի,— ասաց ու ավելի տխուր սկսեց թերթել սեղանի վրա ընկած գիրքը։

Երևի իմ դեմքին էլ էր պատկեր տխրություն, և դա էր պատճառը, որ նա այդպես հանկարծ փոխվեց։

Նրան ճանապարհ դցեցի ու մնացի դռներում կանգնած... Դեռ երկար ժամանակ ականջներումս էր նրա թեթև քայլերի ձայնը...

ԽԵՋՔԵՂ

Ուսումնարանից վերադառնում էինք տուն։ Ստեփանն ուրախ էր բայց ես տխուր։ Ինքս չգիտեի իմ տխրության պատճառը... Միրտս որոնում էր մի նեցուկ, որին հենվեի, որին հաղորդակից անեի իմ բոլոր ապրումները...

Երանի գնամ տեսնեմ խեչոն եկել է... Այդ էր ամբողջ ճանապարհին իմ մտածմունքը...

Եվ իրավ, դուռը բախելուն պես դուրս եկավ դիմացս ինքը՝

Խեչոն։ Ես անգիտակցաբար ընկա նրա գիրկը։ Նա առավ ինձ իր բազուկների մեջ, կարոտով նայում էր։

— Ո՞նց ես, Մադի։

— Առանց քեզ այնքան տխուր էր, այնքան տխո՞ւր,— ասացի ես ու աչքերս լցվեցին։

Ինչպես երևում էր Խեչոն էլ էր հուզվել։ Նա մի փոքր լռությունից հետո հարցրեց.

— Ի՞նչպես անցկացրիր օրերդ։

— Ոչինչ,—արցունքներս պահելով ասացի ես ու սկսեցի պատմել բոլորը, նույնիսկ չմոռացա Արփիկին, նրա մորը, Ստեփանին։

Խեչոն համբերությամբ լսում էր ու լռում. երբեմն ժպիտ էր խաղում շուրթերին, երբեմն զարմանք...

Դռներում երևաց Արփիկը՝ մի աման ձեռքին։

— Քո բաժինն է, Մադի, մայրիկս է ուղարկել,— ասաց ու տիսեն պահեց պահարանում։

— Շնորհակալ եմ, ինչ նեղություն,— հաղիվ դուրս թռավ բերանից։

Նա արդեն փախել էր սենյակից։

«Երևի Խեչոյի ներկայությունից նա ամաչեց»,— մտածեցի ես ու շարունակեցի իմ ընդհատված պատմությունը։

Սկսվեց նորից մեր նորմալ կյանքը։

Մի օր ուսումնարանից եկա, տեսա Խեչոն տանն է... Գույնը թռել էր, աչքերը պղտորվել. արագ-արագ շարժումներ էր անում, ինչ-որ պատրաստություններ էր տեսնում։

— Ի՞նչ է պատահել, հո հիվանդ չե՞ս,— հարցրի ես։

— Ոչինչ, մի երկաթ ոտիս ընկավ. շուտ դուրս եկա արհեստանոցից. դաղարկ բան է, կանցնի։

Քիչ հետո եկան Խեչոյի ընկերները, որոնց առաջին անգամն էի տեսնում։

Նրանք ոչ մի ուշադրություն չդարձրին Խեչոյի ոտի ցավի վրա։ Խեթ-խեթ նայեցին ինձ ու կամաց փսփսացին իրար հետ... Ուզում էին, որ ես դուրս գնամ սենյակից, ինչ-որ գաղտնիք ունեին։ Ես այդ զգացի նրանց հենց առաջին քայլերից...

— Հէ՛, երեխան թող մնա, նա մեզ օգտակար կլինի,— ասաց Խեչոն մի այնպիսի տոնով, որ հակաճառելն ավելորդ կլիներ։

Երկուներից մեկը մաքուր հագնված, ակնոցավոր երիտա-

ծարդ էր. մյուս երեքը՝ խնչոյի հասակին, պարզ հագնված, բանվորներ էին։

Նրանք առանց ժամանակ կորցնելու, բոլորեցին սեղանի շուրջը։ Խնչոն ինչ-որ թղթեր հանեց ծոցի գրպանից, սկսեցին կարդալ, տաք-տաք խոսել ու վիճել։

Ինձ համար միանգամայն անհասկանալի խնդիրներ էին դրանք. ականջիս հասնում էր՝ «ութ ժամյա բանվորական օր», «անձի անձեռնմխելիություն», «պարտադիր ուսում», «հեղափոխություն»... Էդ խոսքերից բան չէի հասկանում, թեև մանկական հետաքրքրությամբ ականջ էի դնում, ու նրանց արտասանած յուրաքանչյուր բառը, ամեն մի խոսքն ուզում էի ըմբռնել, հասկանալ... բայց չէի կարողանում այդ բոլորն ինձ պատկերացնել... Երևակայությունս պղտորվում էր... «Ութ ժամը»... «պարտադիրը»... իբրև մի-մի անիվներ՝ աչքիս առաջ պտտվում էին ու չէի կարողանում ըմբռնել, հասկանալ դրանց իմաստը...

Ամենից շատ խոսում էր Խնչոն. նա պատմում էր Բաքվի բանվորների մասին, իսկ մաքուր հագնվածը գրում, ձեռքով շարժումներ էր անում. ճակատին թափված մազերը ետ էր գցում ու խիստ-խիստ նայում Խնչոյին։

«Երևի ուսուցիչ է»— մտածում էի ես, բայց չէի հասկանում ոչ նրա ասածները, ոչ նրա մեր տուն գալու նպատակը...

Հենց որ մութն իջավ, նրանք մեկ-մեկ դուրս գնացին։ Վերջը մնաց մաքուր հագնված մարդը։ Նա քննական հայացք գցեց ինձ վրա, կարծես նոր էր տեսնում։

Անունդ ի՞նչ է, այ տղա, դիմելով ինձ հարցրեց նա։

Խնչոն մի քանի խոսքով պատմեց իմ մասին ու ավելացրեց.

— Շատ ուղղությամբ ա, լավ վարպետ կդառնա, ժամանակին մեզ պետք կգա։

Այդ խոսքերը նեղքուստ շոյում էին իմ սիրտը, բայց ես իբր ոչինչ, սովորականի պես դուրս ու ներս էի անում, պատրաստում մեր ընթրիքի սեղանը. ղայմաղ էլ հանեցի, Արփիկի բերած կարկանդակներն էլ դարսեցի սեղանին։

Ուշ երեկո էր, որ իմ անծանոթն էլ գնաց։

Խնչոն շատ էր հոգնած, պառկեց թախտին, ես էլ նստեցի կողքին ու հարցեր էր, որ կարկուտի պես թափում էի նրա գլխին։

— Ի՞նչ է «հեղափոխությունը», «ութ ժամը» ո՞րն է, «պարտա-

դիր ուսումը», «անձի անձեռնմխելիությունը»... ու շատ ու շատ խոսքեր, որ մտքումս ամուր պահել էի...

Խեչոն մի առ մի բացատրում էր ինձ, այնքան պարզ ու հասկանալի, որ ամեն ինչ դրոշմվում էր իմ սրտում։ Հիացմունքով լսում, կլանում էի նրա յուրաքանչյուր խոսքը, յուրաքանչյուր միտքն ու մտածումը, որ կյանքում բոլորը ստախոս խաբեբաներ չեն, որ կան և լավ ու շիտակ, Խեչոյի նման մարդիկ...

Նա կարծես միտքս հասկացավ. մի վոքր լռությունից հետո ասաց.

— Այո, կյանքում կան, քու նանի ասածի նման, աղնիվ ու բարի մարդիկ, որ «փրար միս չեն ուտում»...

«Խեղճ, իմ նանի. «փրար միս չուտելը»— բարություն, աղնվություն էր համարումա»... — մտածեցի ես, բայց Խեչոյին բան չասացի։

— Դու չգիտես, դրանք ներքուստ, ժանիքները պահած, գայլեր են, իսկ արտաքուստ՝ հեզ ու խոնարհ գառներ... Երբ տեղը գա, նրանք պատրաստ են՝ ոտնատակ տալ իրենց իսկ հնարած ամեն մի «սրբություն», «առաքինություն» ու դրա նման շինծու վարդապետություններ, բզկտել, հոշոտել իրենցից թույլերին... Կմեծանաս դու շատ բան կիմանաս... գուցե և կաշվիդ վրա տանես, բայց մեր սկսած գործը դուք պիտք է շարունակեք...

Ես ընկա մտածմունքների մեջ. այդ ասածներից շատ քիչ բան էի ըմբռնում...

— Ի՞նչ ես մտածում, Մագի,— հարցրեց նա։

— Բա թագավորն ի՞նչ է անում, ինչո՞ւ է թողնում նրանց, որ իրանց քեփի ուզածն անեն,— մանկական անմեղությամբ, վախվրխելով հարցրի ես...

— Թագավորը նրանց ամենամեծ ընկերն է, բալա ջան, հենց ինքը՝ թագավորն է, որ նրանց գիծ է տալի էդ բոլորը կատարելու... Ամենամեծ հրեշը նա է, որ կա...

— Բա ինչո՞ւ իմ նանն ասում էր, որ թագավորն է մեր տերը ու տիրակալը. որ նա չլինի՝ աշխարհը իրար միս կուտեն, արյուն կիմանա։

Խեչոն ժպտում էր իմ երեխայության ու իմ նանի միամտության վրա։

Դեռ փոքր ես, բալա ջան, աշխարհի չարն ու բարին ոչ դու գիտես, ո՛չ քու էն լավ նանը։

Երկուսս էլ լուռ էինք, երկուսս էլ մտազբաղ։ Ինչ էր մտածում խնչոն, չգիտեմ... Բայց ես այդ օրվանից զգում էի, որ իմ մեջ առաջացել է բողոքի մի սարր, թեև թույլ ու երերուն, բայց ալեկոծել է իմ զգայուն սիրտը, կլանել իմ մտածող ու ընթուշ հոգին։

Ամեն կիրակի, խնչոյի ընկերները գալիս, հավաքվում էին մեր տանը. ծրագրեր էին կազմում, վիճում, տաքացած խոսում, կարծես կռվում էին իրար հետ...

Ես էլ այն առաջվան քաշված, ամաչկոտ երեխան չէի. այժմ ընտելացել, մտերմացել էի նրանց հետ։ Հարցեր էի տալիս, ասում էի իմ դիտեցածը, բայց մի բան ինձ ցավեցնում էր, որ նրանք ինձ երեխայի տեղ էին դնում։ Այնինչ, ես իմ մեջ զգում էի որոշ հասունություն։ Մի բան պարզ էր ինձ համար, գիտեի, որ նրանք պատրաստվում էին մի մեծ ցույցի և դա պետք է լիներ մայիսի մեկին։ Գաղտնի ծրագրեր էին կազմում։

Գլխավոր ղեկավարը նրանց այն մաքուր հաղնվածն էր (թեև այժմ նա էլ էր բանվոր դառել), աշխատում էր նույն գործարանում։ Ես այդ բոլորը հասկանում էի և դրա հետ դիտակցում էի իմ պարտականությունները։

Ուսանողներին ընկերները՝ Նալբանդյանը, Տեր-Պողոսյանը և ուրիշները այլևս առաջվա հմայքը չունեին իմ աչքում։ Այժմ, ավելի շուտ, նրանք էին ենթարկվում ինձ։ Աղատ խոսում, քարոզում էին նրանց իմ անդիր արած բառերը. «Բուրժուազիա», «աքսորավայր», «բանտեր» «մայիսի մեկը»...։ Մի առ մի բացատրում, պրոպագանդ էի մղում նրանց մեջ։ Իմ այդ աշխատանքների մասին երեկոները պատմում էի խնչոյին։

ԱԼԵՔՍԱՆԴՐ 2-ՐԴ ԹԱԳԱՎՈՐԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակը սահում էր։ Ես արդեն մինչև հինգերորդ պրիոմն ավարտել էի։ Անցել էի ավելի բարդ աշխատանքների։ Այժմ ինձ պատվիրած էր ոչ թե ձեռական պրիոմ, այլ գործածության համար

պիտանի գործիքներ՝ մուրճ, կտրիչ, կաբլին, փականքներ և այլ գործիքներ։

Ինչպես տառերը ճանաչելուց հետո դժվար չէր ինձ համար այլևս բառեր կապելը, իրար հյուսելը, այդպես էլ այդ հինգ պրիոմն ավարտելուց հետո, ինձ համար դժվարություն չէր սմենաբարդ գործիքներ պատրաստելը։

Իմ վերջին աշխատանքը մի նոր սիստեմի փականք էր. դա նուրբ ու բարդ գործ էր. քսան թուշից ու երկաթից բրոնզի հետ գործ ունեի։ Հրճվում էի այդ նուրբ մետաղի զանազան նախշերով ու զարդարում փականքի յուրաքանչյուր մասնիկը։ Ինձ համար ուսումը դժվարություն չէր ներկայացնում։ Դասերս իսկույն սովորում էի և ամբողջապես տարվում արհեստով, ուշքս ու միտքս արհեստն էր։ Ամբողջապես զբաղվել էի դրանով։ Օր-օրի վրա նորանոր նվաճումներ էի անում այդ ասպարեզում։

Արհեստն ավելի է զարգացնում երևակային, կյանքը նրան շոշափելի է դարձնում, լայնացնում է նրա աշխարհայացքը, մոտեցնում է նրան իրական կյանքին։ Երևի դա էր պատճառը, որ ես այդքան տարվել էի արհեստով։

Ուսումնարանում ես որոշ դիրք ունեի։ Իմ ընդունակություններով առաջինն էի թե ուսման և՛ թե մանավանդ արհեստի մեջ։

Վարպետը և տեսուչը բարյացակամ էին տրամադրված դեպի ինձ, բայց մի դեպք գցեց ինձ նրանց աչքից։

Մի առավոտ, սովորականի պես հավաքվել էինք դասարանում, սպասում էինք հայոց լեզվի ուսուցչին։ Տեր-Պողոսյանը ներս ընկավ գույնը թռած, այլայլված ու հուզված։

— Լսե՞լ եք, գիտե՞ք,— խորհրդավոր շշնջաց նա,— սարսափելի բան է պատահել... Մեր Թագավորին, Ալեքսանդր երկրորդին... Պետերբուրգում...

Նա այնքան էր այլայլված, որ էլ չկարողացավ շարունակել։

— Ի՞նչ է, ի՞նչ է պատահել,— բոլորս վրա պրծանք։

— Երբ նա կառքով գնալիս է եղել ժամը ազոթելու տեռորիստները ռումբ են գցել նրա վրա... *)։ Հնչտ բան չէ... Թագավորին... էն էլ Ալեքսանդր երկրորդին... նրա նման արքային սպանել... Ասում են հեղափոխական բանվորներն են արել,— ասաց

*) 1881 թվին Ալեքսանդր 2-րդի սպանությունը գնդրն է։

Նա ու ավելի խորհրդավոր տոն տալով իր ձայնին՝ ավելացրեց,— զզվելի արարածներ են էդ բանվորները։

Տղաներն անակնկալի եկած՝ երկյուղով նայում էին իրար։

— Շատ վատ բան է կատարվել,— խոսեց Ստեփանը,— ճընշված հայացքը գցելով իմ վրա. երևի ուզում էր իմ կարծիքն իմանալ։

— Դու չգիտես, Ստեփան, նա հրեշներից ամենամեծն էր,— կամաց շշնջացի ես ու դառնալով դասարանին՝ ինքնավստահ ու համարձակ սկսեցի ճառել...

— Մեծ բան չի պատահել, թող թագավոր էլ չլինի, մեր ինչին է պետք... Առանց նրան ավելի լավ կապրենք...

— Հիմար,— բացագանչեց Տեր-Պողոսյանը,— թագավորը որ չլինի, քարը-քարի վրա չի մնայ, իմացա՞ր. նրա ահն ա, որ մեզ պահում ա...

Հեգնանքով ու արհամարհանքով խոսեց մի ուրիշը.

— Լավ կանես ձենդ կտրես ու տեղդ վեր ընկնես, որ իմանան քո էդ խոսքերը՝ գիտե՞ս ինչ կբերեն գլխիդ։

— Հիմար ես, հիմար,— նորից մեջ ընկավ Տեր-Պողոսյանը ու խեթ հայացքով նայեց ինձ։

— Թագավորին հնարել են իշխաններն ու բուրժուաները, որ խեղճ ժողովրդին տանջեն, շարշարեն, բռնության մեջ պահեն։ Հենց այդ է պատճառը, որ ռումբ են գցել նրա վրա, ու...

Տեր-Պողոսյանը էլ ուշք չդարձրեց ինձ վրա, զայրույթը զըսպած, նստեց իր տեղը։

Դասն սկսվեց։ Հայոց լեզվի ուսուցիչը՝ քահանան էր։ Նա անչափ հուզված ու տխուր էր, դեմքը մռայլ, երեսից թախիծ էր թափվում։

Վայնաչարի պարապեց ու խոսքն հեռացավ։

Դասամիջոցին, այս ու այն անկյուններում, խորհրդավոր փըսփըսում էին... Լուրն արագությամբ տարածվել էր ամբողջ ուսումնարանում։

Զանգը տվին. նկավ թվաբանության ուսուցիչը. սա էլ թեև ըստ սովորության աշխատում էր հանգիստ պարապել, բայց կարծես փշերի վրա՝ լիներ։ Աչքի տակով մերթ ընդ մերթ նայում էր ինձ, խիստ քննական հայացքով, կարծես նոր էր ճանաչում։

Հենց որ դասը վերջացավ, նա երեք օրով դասարանն արձակեց, իսկ ինձ կանչեց ուսուցչանոց։

Տեսուչը և հայոց լեզվի ուսուցիչն էլ էին այնտեղ։ Երեքն էլ մռայլ հայացքով նայում էին ինձ։ Քիչ հետո ուսուցչանոցի դռներից գլուխը ներս հանեց Տեր-Պողոսյանն ու անհայտացավ։ Այժմ ինձ համար ամեն ինչ պարզ էր...

— Ամբողջ դասարանի առաջ դու այդ ի՞նչեր ես ասել,— խոսեց տեսուչն ու այնպիսի խիստ հայացք գցեց վրաս, որ կարծես աչքերով ուզում էր կլանել ինձ։

Ես գլխիկոր կանգնած, զգում էի մի ներքին հուզմունք, ականջներս խշշում էին, սիրտս բաբախում, ծնկներս դողում էին։

— Խոսիր, ի՞նչ ես լռել։

— Այո՛... ասել եմ,— մրմնջացի ես հազիվ լսելի ձայնով։

Նրանք ինչ որ տատանման մեջ էին. երեքը միասին քննական հայացքով նայում էին ինձ։

Նրանց առաջը կանգնած էր մի անզոր երեխա, իսկ իրենք աշխարհի «իմաստություններով օժտված» մեծամեծներ...

Սկսեցին խորհրդավոր ու ծանրակշիռ որոշումներ անել. «արտաքսել ուսումնարանի՞ց, ժանդարմերիայի ձեռքը տա՞լ, թե՞ գցել մութ ու խոնավ կարցերը...»։

Ես անկյունում կուչ եկած, ահ ու դողով լսում էի։ Քահանան էր իմ ամենախիստ դատավորը, ամենամեղմը՝ տեսուչը... Թվաբանության ուսուցչի համար այդ «խնդիրը» պարզ չէր։ Նա իրեն պահում էր շեղոք։

Չգիտեմ ինչու, այդ ճգնաժամին, ինձ պատկերացավ Ենչոն։ Թվաց ինձ, որ մենակ չեմ... և դա կարծես փրկեց ինձ։

— Թոմա, տար սրան էն մութ կարցերը գցիր, դուռը ամուր փակիր։ Թող առանց հաց ու ջրի էնքան մնա, որ խելքի գա...

Հրամայեց տեսուչը պահապանին։ Սա էլ իբր մեծ գործի վրա, թևերը մինչև արմունկները քշտեց, կուրծքը դուրս գցեց, բոթեց՝ գցեց ինձ իր առաջ...

Ես հլու, հնազանդ, ահ ու դողով, գլխիկոր քայլում էի այդ ածդահա մարդու առաջ։

Հեռվից Ստեփանը կարեկցաբար նայում էր ինձ, բայց չէր համարձակվում մոտ գալ։ Իսկ Տեր-Պողոսյանն ու մի քանիսները հրճվում էին ուրախությունից։

Դռնապանը տարավ ինձ ներքնահարկ. անցանք մի մութ, խոնավ նրբանցք... նա կանգ առավ. լուցկին վառեց ու դարձյալ մի քանի քայլ, հասանք կարցերին։ Բաց արավ տախտակե դուռը, թիկունքիցս հրեց, ցցեց ներս։

— Թաղավոր չուզողիս նայիր,— գոռաց նա վրաս, զզվելի խոսքերով հայհոյեց, դուռն ամուր փակեց ու գնաց։

Զգացի, որ մի նեղլիկ վանդակի մեջ եմ. հատակին փռված էր փայտի ածուխի փշրանք։ Խավարը խեղդում էր ինձ։ Պատեպատ ընկա, ինչպես վանդակում փակված մի գազան։ Հեկեկացի ու ընկա հատակին։

Սիրտս ճմլվում էր, արցունքներս խեղդում էին ինձ...

— Ստեփա՜ն, Ստեփա՜ն,— միակ մարդն էր, որին կանչում էի։ Ձայնս կորչում, մնում էր չորս պատերի մեջ... Ձայրույթից ոչ էր մնում կուրծքս պատռվեր, սիրտս ճաքեր։

— Ինչո՞ւ, ինչո՞ւ,— մռնչում էի ես կատաղի, խփում էի ոտքերով պատերին, ամբողջ հասակով հրում էի դռները, ուզում էի ջարդ ու փշուր անել վանդակիս պատերը, բայց ի զուր, շատ ամուր էին։

Մի վերջին հարված, մի ուժգին թափ... բողոքի մի հուսահատ ճիչ... ու ես ընկա հատակին, անուժ ու անզոր...

Ի՞նչ էր պատահել ինձ հետ, որքան էի մնացել այդպես, չգիտեմ...

Ականջիս հասավ մի խո՛ւլ ձայն։ Կարծես անդունդների խորքում լինեի, մշուշների մեջ։

Երբ ուշքի եկա, աչքերս բաց արի, Ստեփանն էր, սառը ջուր էր ածում երեսիս, գլխիս։

Ես ամուր բռնեցի նրա ձեռքը... Մի նեցուկ էի գտել, սարսափում էի, որ մորից կրաժանվեմ։

Իսկ նա շուտ-շուտ վառում էր լուցկին, սափորով ջուր էր լցնում գլխիս ու սարսափով նայում էր շուրջը։

— Զգույշ, ձայն մի հանի, Մադի ջան, վեր կաց, վեր կաց, փախչենք... Թաքուն եմ եկել։ Դուռը չկարողացա բաց անել, երկաթե լոմով եմ կոտրատել տախտակները։ Վեր կաց, Մադի ջան, փախչենք գնանք,— ասում էր ու աչքերից արցունք թափում։

Նա թևիցս բարձրացրեց, ես հենվեցի նրա ուսին. ծնկներս դողում էին, հազիվ էի քայլում։

Մենք տհ ու դողով դուրս եկանք նրբանցքը. անցանք միջին հարկը. դողդողալով դուրս եկանք գավիթ, հասնում էինք դարպասի դռներին... Մի քանի քայլ էր մնացել որ փողոց ընկնենք, հանկարծ.

— Էդ ո՞ւր, էդ ո՞ւր,— լսվեց դռնապանի տհաբկու դոռոցը։

Նա կատաղած, գայրույթը աչքերին, կտրեց մեր առաջը, բռնեց Ստեփանի ուսից, բռթեց նրան այնքան ուժով, որ նա վայր ընկավ գետին։

— Դուռը կոտրեցիր հա՞... անպիտան... Փախչում էիք հա՞... Նա սկսեց հայհոյել թե ինձ, թե Ստեփանին և բոթ-բոթելով առաջ արավ մեզ։

Ուսումնարանում պարապմունք չկար։ Բոլորը գնացել էին իրենց տները։ Միայն տնտուչն էր այդտեղ. (նա ընտանիքով ապրում էր ուսումնարանի շենքում)։

Հասանք նրա բնակարանին ու նրբանցքում մնացինք կանգնած։

Ստեփանի դույնը թռել էր, աչքերի տակը կապտել, ամբողջ մարմնով դողում էր։ Իսկ ես թրջված և սառած, հաղիվ էի կանգնում ոտքերիս վրա։

Դռների բախոցին դուրս եկավ տնտչի աղախինը։ Նա սարսափով նայեց ինձ, մի ճիչ արձակեց և երկու ձեռքով ծածկեց երեսը։

Այդ ձայնի վրա դուրս վազեց տնտուչը։

— Ինչո՞ւ ես բերել,— գոռաց դռնապանի վրա։

— Փախչում էին, ձերդ արժանապատվություն։ Դարպասի դռների մոտ բռնեցի,— իրան քաշարի ձևացնելով, մինչև գետինը խոնարհեց գլուխը։

— Սուտ է ասում, ես խեչումյանին տանում էի մեր տունը,— դողդողացին Ստեփանի շրթունքները։— Եթե ես չինեի անշնչացած ընկած կմնար այն խոնավ ու մութ՝ ածուխով լիքը կարցերում։ Լավ է շուտ օգնության հասա ընկերոջս, բղավեցի, բղավեցի, ձայն չկար, լոմով դռները կոտրեցի, լուցկին վառեցի, խեչումյանը ուշաթափ ածուխի մեջ ընկած էր։ Որ տեսա՝ սիրտս կտրատվեց։ Միայն սառը ջրով կարողացա ուշքի բերել,— ասաց ու հուզմունքը զսպել չկարողանալով, լաց եղավ։

Աղախինը հեռվից նայում էր մեզ, նրա աչքերն էլ էին լցվել

արցունքներով, թաշկինակով արցունքները սրբում ու տեսչի հետ խոսում էր։

Չգիտեմ ինչ որոշեցին, տեսուչը գնաց իր կաբինետը՝ աղախինը մոտեցավ ինձ, կանիցս բռնեց, տարավ դեպի լվացարանը։

Անցնելիս, երբ դիմացի պատի հայելում տեսա իմ դեմքը, սարսափեցի։ Ամբողջ երեսս ածուխի մեջ կորած, սևացած էր։ Սենյակ աչքերս էին պսպղում ու ատամներս փայլում։ Զարհուրելի էր իմ պատկերը։ Արցունքներս գորշ գծերով ակոսեցին այտերս ու ծնոտս, գլուխս մրի մեջ կորած էր։ Մազերս կպել էին ճակատիս։ Մի այլանդակ կերպարանք էի ստացել, որ երբ նայեցի ամբողջ մարմնով ցնցվեցի։ Ակամայից աչքերս փակվեցին ու ես հենվեցի Ստեփանի թևին։ Նա թևս ընկավ, գրկած, մոտեցրեց լվացարանին։

Աղախինը սապոնով լվանում էր գլուխս, Ստեփանը ջուրը տաք ու հով էր անում ու լցնում։

Ես հլու հնազանդ, գլուխս կախել էի։ Աղախինը խնամքով տրորում էր մազերս, լվանում էր երեսս, ճակատս, աչքերս, վիզս, ականջներս։ Ստեփանը սափորով լցնում էր դող ջուրը ու նորից տաք ու հով էր անում։ Իմ լվացվելը կարծես վերջ չուներ։ Մի անգամ էլ երեսս, վիզս սապնափրփուրում կորավ, Ստեփանն առատ ջուր լցրեց ու ամեն ինչ վերջացավ։

Այժմ սպիտակ սավանով սկսեց գլուխս, մազերս, վիզս ցամաքեցնել. այդ գործողությունն էլ ավարտելով նա ազատ շունչ քաշեց։

Աղախինը դոհ սրտով նայեց երեսիս ու ժպտաց։ Չգիտեմ ինչո՞ւ ես էլ ժպտացի։ Ստեփանն էլ վարակվեց մեղանից։

Տեսուչը դժգոհ դեմքով, դանդաղ քայլերով, կարծես ակամայից, եկավ ու կանգնեց մեր դիմաց։

— Մի տես ի՞նչ սիրուն տղա դառավ։ Մի նայիր նրա աչքերին։ Մի՞թե այսպիսի գեղեցիկ աչքեր ունեցողը վատ բան կմտածի... Կարելի՞ էր սրան պատժել։

Դա դեռ քիչ էր, ավելի խիստն էր հարկավոր,— նկատեց նա աղախնին ու դառնալով ինձ, ասաց.

— Շատ բան մտածիր, բայց քիչ գործադրիր։ Թող սա քեզ խրատ լինի, մյուս անգամ զգույշ կլինես։

Ես այնքան էի ակնածում, այնքան էի սիրում այդ մարդուն, որ նրա բոլոր ասածները սրբություն էին ինձ համար...

Ստեփանը թևից քաշեց։

— Գնանք, Մաղի։

— Ոչ, ոչ, մի փոքր սպասեցեք,— ասաց ալևոր խինը, տարավ ինձ պատշգամբ, խոզանակով մաքրեց շորերս։ Երբ վերադարձանք խոհանոց, Ստեփանը նորից դիմեց, որ գնանք...

Բայց ես կարծես չէի ուզում բաժանվել այդ ջերմ, մայրական գորովագութ խնամքից։ Ես ամեն ինչ մոռացած, նայում էի այդ քնքուշ, նուրբ արարածին, որը շատ նման էր իմ նանին։

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ

Այդ օրերում դուդուկի ձայն չէր լսվում։ Սուգ էր ամենուրեք, սև, խորհրդավոր սուգ։ Բոլոր հիմնարկությունները փակ էին։ Միայն եկեղեցիների դռներն էին բաց, տերտերներն էին խաչ-խաչվառներով աղոթում,— սպանվածի հոգին լուսավորելու... Ջանգերն էին զոլանջում, մռայլ, մելամաղձոտ։ Ոստիկանությունը հսկում էր ամենուրեք։

Փողոցներում խոսում էին շշուկներով... կարծես, ահռելի փոթորկից հետո սպասում էին մեծ աղետի...

Խեչոն էլ էր անհանգիստ, ինչ-որ ծանր վտանգ էր սպասվում։ Ինչ էր դա, ես չէի հասկանում. ինձ համար մի բան պարզ էր, որ նա իր ընկերների հետ վտանգի մեջ էր...

Միաժամանակ ինձ տանջում էր և այն միտքը, որ ես հեռացված եմ ուսումնարանից, որ պիտի զրկվեմ իմ մանգանից, իմ արկղի գործիքներից, իմ սիրած պրիոմներից, ընկերներից, մանավանդ Ստեփանից։

Գլուխս սաստիկ ցավում էր. ամբողջ մարմնով դողում էի, ծնկներս ծալվում էին, բայց Խեչոյին բան չէի ասում։ Գիտեի, որ նա շուտով պիտի գնա ու ամբողջ գիշերը չգա։

Մի կերպ թեյ պատրաստեցի. նա մի երկու բաժակ խմեց ու շտապ գնաց, պատվիրելով, որ ես տանից դուրս չգամ։

Ես հենց դրան էի սպասում. շորերս հանեցի ու տեղս մտա։ Դողը ջանս էր ընկել, մրսում էի, կուչ էի գալիս, կծկվում էի վերմակիս տակ, բայց չէի տաքանում, չէի հանգստանում։ Միտքս էլ

էր պղտորվել, մտածել չէի կարողանում։ Կարծես մի ծանր քար ճնշում էր սիրտս...

Խնչոն նկավ։ Նրա դեմքը դալկացած, հոգնած ու տանջված էր։

— Մայի, ես էլի մի երկու օր չեմ գա։ Առանց ինձ չտխրես,— ասաց նա ու ինչ որ պատրաստություններ էր տեսնում։

Քիչ հետո Խնչոն տեղիցը վեր կացավ. գնալու էր պատրաստվում։ Նրա հեռանալն ինձ մոտատանջության մեջ էր դնել։ Ո՞ւր է գնում, ի՞նչու է գնում,— այդ հարցերն փին ինձ տանջում։ Դիտեի, որ նա հանդիստ մնացողը չէ, նրա կյանքը վտանգի մեջ է... բայց ինձ որոշակի ոչինչ պարզ չէր։ Աշուշապատ մտքեր գալիս, անցնում էին գլխովս, ալեկոծում իմ մանուկ հոգին։

Խնչոյի պատմածներից որոշ դաղափար կազմել էի։ Նա երբ խոսում էր, աչքերը վառվում էին, տեղովը կրակ էր կտրում, բայց այսօր նա հանդիստ էր, և դա սիրտ տվեց ինձ նրա հետ խոսելու։

— Ես գիտեմ, դու գնում ես բանվորության մեջ պրոպագանդ անելու... (այդ դարձվածքը ես լավ էի յուրացրել). բայց զգույշ եղիր. վախենում եմ, քեզ հետ բան պատահի. շատ արի, առանց քեզ այնքան տխուր է՞... այնքան տխո՞ւր...

Խնչոն կարծես ինձ չէր լսում. նրա ուշքն ու միտքը ուրիշ տեղ էր։ Նա մի բոպե նայում էր ու նորից խորասուզվում իր մտքի ծովը։

— Դե, ես ուշանում եմ,— ասաց նա. թղթերը պահեց ծոցի գրպանում, մի շեշտակի հայացք ձգեց ինձ վրա ու առանց «մնաս բարև» դուրս գնաց։

Նրա գնալուց հետո, դլխարկս առա ու ինձ նետեցի փողոց։

Երբ սիրտս վրդովված էր լինում — ձգտում էի մենակ լինել, խորասուզվել մտքերիս մեջ...

Տարված այդ խոհերով, գնացի Քիչ հետո ուսումնարանի բակումն էի։

Ոչ ոք չկար, մենակ դռնապանն էր, որը մեծ ցախավելով սրբում էր դավիթը։

— Հը՞, ի՞նչ ես եկել. հո գիտես, որ քեզ դուրս են արել,— ասաց ու շարունակեց իր ընդհատած աշխատանքը։

Ես առանց ուշք դարձնելու նրան, նստեցի իմ սիրած ծառի տակ։ Ուսումնարանի շենքը, արհեստանոցը, դասարանը, գավիթի

ծառերը, բոլորը հարազատ էին ինձ։ Մի՞թե պիտի զրկվեմ այս ամենից... Ինչո՞ւ են ինձ պատժում... Ես ի՞նչ եմ արել, ի՞նչ է իմ մեղքը,— մտածում էի ես։

Մեկ էլ տեսա, տեսուչը, կաշվե պինջակը հագած, որսորդական հրացանը ուսին, փամփուշտակալը մեջքին, իր «թազի» շան հետ դուրս եկավ գավիթ։

«Երևի որսի է գնում»,— մտածեցի ես, տեղիցս վեր թռա ու մնացի կանգնած։

Տեսուչը զբաղված էր իր շնով, հրացան, վառոդ ու փամփուշտներով։

— Թոմա,— դառավ նա դռնապանին,— տանը, սեղանի վրա մոռացա իմ պուշարի փաթեթը. դնա աղախնին ասա, թող բերի։

Ինչո՞ւ ինձ չի նկատում։ Ոտքերիս ծայրերով մի քանի քայլ գնացի առաջ։

Շունը զուռաց, նա ավելի շուտ նկատեց, քան իր տերը։ Այդ զուռոցի վրա տեսուչը գլուխը բարձրացրեց ու մնաց զարմացած։

— Դու այստեղ ի՞նչ ես շինում,— բարկացած հարցրեց նա։

Շունն էլ իրա հերթին ավելի կատաղի զուռացրեց ու մի երկու բերան էլ հաչեց։

Ես մնացել էի տեղս սառած, քար կտրած... Այդ միջոցին օդնությյան հասավ ինձ տեսչի աղախինը։

— Խեչոմյանը ինձ մոտ է եկել, ես էի կանչել նրան։

— Դու արձակված ես ուսումնարանից,— դառավ ինձ տեսուչը. մանկավարժական խորհուրդը քննության առավ քո արարքը և որոշեց դուրս անել քեզ ուսումնարանից։ Երբ դասերը սկսվեն, կգաս, գործիքներդ կհանձնես, վկայականներդ կստանաս ու աղատ կլինես քեզ համար, հասկացա՞ր։

Ես այնքան էի շփոթվել, որ ոչ մի բառ չկարողացա արտասանել։

Նա շտապով մոռացավ ինձ, ու զգուշությամբ հանում էր շանոտի փուշը։ Նրան ավելի շուտ հետաքրքրում էր շունը, քան իր ուսումնարանի սանը։

Աղախինը փաթեթը տեղավորեց պայուսակում ու կողքովանցնելիս, հաղիվ լսելի, ասաց.

— Անպատճառ արի ինձ մոտ...

Այդ երկու բառը ինձ սիրտ տվեց։ Առանց տատանվելու, տեսչի հետանալուց հետո բարձրացա պատշգամբ, դուռը բախեցի։

Իսկույն ինքը եկավ ու ինձ ներս հրավիրեց։ Նա անընդհատ նայում էր երեսիս։ Ես աչքերս խոնարհել էի ցած, մնացել էի անորոշ դրության մեջ կանգնած...

— Ինչո՞ւ է դուստդ էդպես թռել. հո չե՞ս հիվանդացել։

— Ջերմում էի, խինա խմեցի, հիմա լավ եմ։

— Ինչպես տեսուչը հայտնեց, որոշումն արդեն կայացել է. վարպետը քո կողմն է եղել. նա ասել է, որ դու ուսումնարանի աչքն ես։ Տեսուչն էլ դեմ-չի եղել... բայց քահանան պնդել, պահանջել է, որ քեզ հեռացնեն։ Գնա, դիմիր նրան, ներողություն խնդրիր, անշուշտ կների քեզ։

— Չեմ գնա. որ մեռնեմ, չեմ գնա,— ասացի ես և դայրույթս հազիվ զսպած, գլխարկս առա, ուզում էի դուրս գնալ։

— Սպասիր, ի՞նչ ես շտապում,— աշխատում էր հանգստացնել ինձ, մայրական քարող էր կարդում գլխիս։— Մի դատարկ խոսք է... «Տեր հայր, ներեցեք... էլ չեմ անի» ասա ու պրծիր։ «Թողություն կտա» ու ամեն ինչ կուղղվի։ Ինչ կա փստեղ, որ էդքան դժվարանում ես։ Ես չեմ կարողանում ըմբռնել, ինչո՞ւ մի այդպիսի անմեղ, դատարկ բան չես ուզում կատարել։ Նա նորից պնդում էր, որ ես գնամ ներողություն խնդրեմ։

— Չեմ գնա... չեմ գնա որ մեռնեմ...— կտրուկ պատասխանում էի ես իմ կարեկից «մորը»...

— Քո փոխարեն ուզո՞մ ես ես ներողություն խնդրեմ,—ասաց նա հուսահատ։

Ես նորից պատրաստվեցի դուրս գնալու։

— Սպասիր, ա՛յ տղա. ի՞նչ է պատահել քեզ,— բարկացած խոսեց նա։

— Տենդս բռնել է, պետք է գնամ պառկեմ, քրտնեմ, որ անցնի,— ատամ-ատամի տալով ասացի ես ու պատրաստվեցի դուրս գնալու։

— Ի՞նչ է, թշնամու տա՞նն ես,— ասաց նա, մոտեցավ, երակը բռնեց, ձեռքը դրեց ճակատիս, կարեկցաբար նայեց։

Ի՞նչ էր նա մտածում, չգիտեի. իսկ ես շատ վատ էի... գլուխս չէի կարողանում ուսերիս վրա պահել։ Պառկել էի ուզում — նույն իսկ հատակին — միայն թե թողնեին ընկնեի ցած...

Կարծես նա այդ զգաց. ձեռքիցս բռնեց, տարավ ինձ իր սենյակը։

— Պառկիր, հանգստացիր այստեղ։

Առանց դիմադրելու, հենց շորերով ընկա շոր քխանին, գլուխս գրի մութքին ու սկսեցի դողացնել։

Նա մի վերմակ գցեց վրաս. ես կուչ եկա, կծկվեցի ու մտքումս անիծում էի ինձ, որ եկել էի. քիչ հետո դողս անցավ. այժմ տաքության մեջ այրվում էի։

— Թող այդ տերտերի երեսը չտեսնեմ, չեմ ուզում,— գոռում էի ես, ամոթխածությունս կորցրել, իմ ուր լինելս մոռացել... Ջուր տվեք ինձ,— հրամայում էի շուտ-շուտ։ Վերմակը գցում էի մի կողմը, ուզում էի վեր թռչել՝ դուրս փախչել. ծնկներս ծալվում էին, գլուխս պտտվում։

Խեղճ կինը շուրջս դառնում էր. գլխիս սառը քսթան էր դնում, ես դա դեն էի շպրտում. դարձել էի հանդուգն ու սառնակամ։

— Ինչո՞ւ չթողեցիք, որ գնամ, ինչո՞ւ պահեցիք։ Նրանց համար մի ուրուի շունը ավելի բարձր է, քան մի խեղճ երեխա...

Ես էլի շատ բաներ էի ասում. չգիտեմ, ավելի շատ ես չէի խոսողը, այլ իմ բողոքող, իմ սանձարձակ հոգին էր ըմբոստացել։

Ոչ մի համեստություն, ոչ մի քաղաքավարություն գոյություն չուներ ինձ համար, երբ տաքության մեջ էի լինում։

«Դելը» տալով, այդ դրության մեջ քնել էի։ Երբ աչքերս բացարի, ես ինձ թեթևացած զգացի. տեղիցս վեր թռա, ոտքերիս ծայրերով մոտեցա դռներին։ Ուզում էի անկատելի դուրս ընկնել ու փախչել։

Դուռն ամուր փակած էր. սենյակը պատուհան էլ չուներ, որ գուրս թռչեի։ Ստիպված դուռը բախեցի։ Լսվեց ոտքերի ձայն։ Աղախինն էր։

— Ոնց ես, Մաղի. դու ինձ էնպես վախեցրիր. էնպիսի խոսքեր էիր ասում տաքությանդ մեջ...

— Ներողություն եմ խնդրում իմ ասած ավել-պակաս խոսքերի համար,— գլուխս խոնարհած ասացի ես ու ուզում էի դուրս գալ։

— Խեչումյան, եկ այստեղ,— լսեցի հարևան սենյակից քահանայի բասք ձայնը...

Ներքին հուզմունքս պահած, անցա դահլիճը, ուր բազկաթոռին նստած էր քահանան. տերողորմյան ձեռքին, աչքի տակով զննում էր ինձ։

Աղախինը պատկառանքով նայեց «տեր-հորը», ապա դառնալով ինձ, ասաց.

— Խնչումյան, տեր-հայրը այնքան բարի է, որ պատրաստ է քեզ ներել... Գնա ներողություն խնդրիր, սուրբ աջը համբուրիր և ամեն ինչ կվերջանա։

Նա մաղերս շոյեց, ձեռքիցս բռնեց, ուզում էր չոքեցնել տեր-հոր առաջ։

Նա էլ «սուրբ աջը» պատրաստ՝ պահել էր, որ պահպանիչ տար, ու «թողություն» տա իմ չեղած մեղքերի համար։

Ես մի ուժեղ ցնցումով ձեռքս ազատեցի, ուզում էի հեռանալ։

Քահանան զգալով իմ միտքը, հանդարտ ու հանդիսավոր սկսեց մի մեծ քարոզ կարդալ գլխիս։

Էլ «բարություն», «աղնվություն», «վեհություն» ինչ ասես. որ չշռայլեց։ Հարգանք, պատիվ դեպի մեծերը, ուսուցիչը, դաստիարակները, հոգևոր հայրը... խոնարհ՝ դեպի ծնողները... հեղ՝ ինչպես աստծու գառը... ու այդպես ճարտար լեզվով խոսում, խրատում էր, որից ես շատ բան չէի հասկանում։

— Դու, որդի, հայհոյել ես թագավորին, դա շատ մեծ մեղք է։ Դու սպերախտարար, դասարանի առաջ, ասել ես՝ «սպեռք չէ մեզ թագավորը»... Գիտե՞ս, դա ինչ հանցանք է։

Նրա այդ ճառի ազդեցության տակ, գլուխս, երեսս տաքացավ... կարծես տաքություն նորից բռնեց... հիշեցի խեչոյի ասածները, հիշեցի մեր գյուղում եղածս օրերը... լեզուս բացվեց.

— Թագավորը կոռ ու բեգարի, խարջ ու մասրափի, նաչալնիկ-պրիստավի, քոխվա-բեղիուդայի համար է... Ահա այդ քո ողորմած թագավորը, տեր-հայր... Մենք առանց նրան էլ կապրենք,— ասացի ու դուրս գնացի։

Այդ երկու օրը տանից դուրս չեկա։ Ամբողջապես տարված էի իմ վիճակով։ Այժմ արդեն դատում էի սառը... Իսկապես անմխիթար էր դրությունս։ Միակ մարդը խեչոն էր, որին կարող էի բանալ սիրտս. նա էլ թարսի պես չէր գալիս... Արփիկն էր իմ ընկերակիցը, բայց նա շատ էր երեխա, ավելի շուտ խաղալ էր ուզում, անմեղ, անհոգ, առանց ըմբռնելու իմ տանջանքները...

Ուզում էի մենակ մնալ... Ամբողջ ժամանակ մտածում էի ուսումնարանի մասին. իմ կիսատ թողած պրիոմը աչքիս առաջից չէր հեռանում։

Ստեփանը, դասարանային ընկերներս, շարան-շարան գալիս կանգնում էին առաջս... նախատում էին ինձ... գոնում էին ինձ հանցավոր։ բայց իմ փոքրիկ ուղեղը չէր հաշտվում այդ մտքի հետ. ալեկոծում, տանջում էր ինձ... Ինչո՞ւ, ինչո՞ւ ես իմ մանկական թռիչքներով աղատ չպետք է լինեի...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ

Ջուրակը 5
Վորրիկ մեքենավարը 10
Դարգոծուսի աղջիկը 17
Շուշան 28
Երկու բնկեր 37
Նոր տունը 42
Նաչ, Նարի, Նիուշա 46
Գվարդիներ 51

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Իմ սիրտը 62
Իմ փախուստը 67
Քաղաքում 79
Արհեստավորաց ուսումնարանում 86
Իմ ուսուցիչները 90
Արփիկը 93
Ռեչոն 98
Ալեքսանդր 2-րդ թագավորի սպանությունը 102
Ուսումնարանից դուրս արված 109

Կազմեց և խմբագրեց՝ Գ. Գրիգորյան
Տեխ. խմբագիր՝ Ի. Վարդանյան
Նախնական սրբագրիչ՝ Թ. Կանքելյան
Կոնտրոլ սրբագրիչ՝ Մ. Հարությունյան

Վ/Փ 01190, պատվեր 870, տիրաժ 3000, հեղինակային
3½ մամ., տպագրական 7 մամ.։ Հանձնված է տպագ.
9/IV—48 թ. Ստորագրված է տպագրության 10—V—49 թ.

Հայկ ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ և հրատարակչ. վարչ.
№ 1 տպարան, Երևան Լենինի փող. № 65, 1949 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220029240

ቁጥር 5 ॥

X

II
29240